

2859

Վ. ՇԵՔՍՊԻՐ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՏԵՆԻՍԻՍԻ ԿՈՆՍՏԱՆՍՆՈՒԼԱՆԻ
ԿՈՆՍՏԱՆՍՆՈՒԼԱՆԻ ԿՈՆՍՏԱՆՍՆՈՒԼԱՆԻ ԿՈՆՍՏԱՆՍՆՈՒԼԱՆԻ

ԱՐՔԱ ԼԻՐ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՏԵՆԻՍԻՍԻ ԿՈՆՍՏԱՆՍՆՈՒԼԱՆԻ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՏԵՆԻՍԻՍԻ ԿՈՆՍՏԱՆՍՆՈՒԼԱՆԻ

ԿՈՆՍՏԱՆՍՆՈՒԼԱՆԻ

1938թ

82
2-53

Վ. ՇԵՔՍՊԻՐ

23 JUN 2005
20 OCT 2009

Ա Ր Ք Ա Լ Ի Ր

Հոգրեգություն հինգ արարվածով

Անգլերենից թարգմանեց.

ՀՈՎՀ. ԽԱՆ ՄԱՍԵՀՅԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՊԵՐԵՎԱՆ

1938

15.07.2013

2839

В. ШЕКСПИР

КОРОЛЬ ЛИР

Госиздат, Ереван, 1938 г.



420
45

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԵՐ

Լիր — Բրիտանիայի թագավորը
Ֆրանսիայի թագավորը
Բորգոնիայի թագավորը
Կորնվալիսի թագավորը
Ալբանիայի թագավորը
Քենեթի Կոմս
Գլոստերի Կոմս
Երկրորդ — Գլոստերի վարդապետ
Երկրորդ — Գլոստերի ապարիսի զավակը
Խեղճ Կոմս
Մոնթգոմերի — մի պալատական
Ի Մոնթգոմերի — Գլոստերի կայսրական
Մի Բժիշկ
Ռոզալդ — Գլոստերի տան վարդապետ
Մի Սպան — Եդմունդի հրամանատարություն տակ
Մի Աստված — Կորնվալիսի ծառայություն մեջ
Մի Մոնթգոմերի
Կորնվալիսի Մոնթգոմերի
Գլոստերի
Ռեգան } Լիրի ազնվականներ
Կորնվալիսի

Լիրի ապականներ, սուրհանդակներ, զինվորներ և ապականներ
Գլոստերի թագավորը կատարվում է Բրիտանիայում

ԱՐԱՐԿԱԾ ԱՌԱՋԻՆ

ՏԵՍԱՐԱՆ Ա.

Արքա Լիրի պալատք

Մանուկ են ՔԵՆՏԸ, ԳԼՈՍՏԵՐԸ ՅԵՎ ԵԴՄՈՆԴԸ

ՔԵՆՏ

Յես կարծում եյի, թե թագավորը Ալբանի դուքսին ազի-
ւի յի սիրում, քան թե Կորնվալին:

ԳԼՈՍՏԵՐ

Մեզ ել միշտ այդպես եր թվում, բայց այժմ, յերբնա բաժա-
նում ե իր թագավորությունը, ամենևին չի յերևում, թե դուքսերից
վոր մեկին ե ավելի զնահատում, վորովհետև բաժիններն այն-
պես հավասար են կշռված, վոր բժախնդրությունն անգամ չի
կարող գերադասել մեկի բաժինը մյուսից:

ՔԵՆՏ

Արդյոք սա ձեր վորդին չե՞, միլորդ:

ԳԼՈՍՏԵՐ

Այո, պարոն, նրան յես եմ մեծացրել: Այնքան հաճախ
կարմրել եմ յես նրան վորդի ճանաչելուս համար, վոր հիմա
յերեսս պնդացել ե:

ՔԵՆՏ

Յես ձեզ չեմ հասկանում:

ԳԼՈՍՏԵՐ

Իսկ այս պատահու մայրը ինձ լավ եր հասկանում, այն-
քան լավ, վոր վորը կլորացավ ե ունեցավ մի զավակ իր որո-
ւորյում, նախքան մի ամուսին՝ իր անկողնում: Հասկացմբ հան-
ցանքը:

Յես չեյի կամենա, վոր այդ հանգանքը կատարված չլիներ, քանի վոր արգասիքն այսքան զեղեցիկ է:

ԳԼՈՍՏԵՐ

Բայց, անք իմ, յես ունեմ մի որինավոր դավակ, մի քանի տարով ավելի մեծ, վորը սակայն իմ աչքում ավելի սիրելի չե քան սա, թեև այս անպիտանը մի քիչ աներեսությամբ աշխարհ յեկավ, նախ քան նրան կկանչեյին: Բայց մայրը սիրուն եր, և մենք այնքան զվարճանում եյինք սրան արտադրելիս, վոր այժմ պարտավոր եմ ճանաչել այս քածի ձագին:—Ճանաչում ես այս ազնիվ պարոնին, Նդմանդ:

ԵԴՄՈՆԴ

Վհչ, անք իմ:

ԳԼՈՍՏԵՐ

Քննաի կոման է: Այսուհետև լավ հիշիր նրան, վորպես իմ հարգելի բարեկամիս:

ԵԴՄՈՆԴ

Ծառա յեմ ձերդ հարգության:

ՔԵՆՏ

Յես ձեզ շատ կսիրեմ, և հուշս ունեմ, վոր ավելի լավ ծանոթանանք:

ԵԴՄՈՆԴ

Յեր իմ, յես կաշխատեմ արժանի լինել այդ պատվին:

ԳԼՈՍՏԵՐ

Ինչը տարի յե, վոր նա ոտարության մեջ է յեղել, հիմա էլ կրկին գնալու յե:

(Թագավորը գալիս է)

Փողերի ձայներ. ժամում են՝ ԼԻՐ, ԿՈՐՆՎԱԼ, ՍԼԻՍԵՆԻ, ԳՈՆԵՐԻԼ, ՌԵԳԱՆ, ԿՈՐԻԵԼԻՍ և սպասավորներ:

ԼԻՐ

Գլուսներ, գնա ընկերացիր Ֆրանսիայի թագավորին և Բուրգոնի գոթին:

ԳԼՈՍՏԵՐ

Պատրաստ եմ, անք արքա:

(Գալիս են Գլուսները՝ յեղ Նդմանք)

Իսկ այդ միջոցին մենք պիտի հայտնենք Ավելի թաքուն մեր նպատակը: Տըվեք քարտեզը: Թող ձեզ հայտնի լինի, վոր բաժանել ենք մեր պետութունը Յերեք մասերի, և վճռել հաստատ՝ Յնցել ամեն հող և աշխատութուն Մեր ծերութունից, և հանձնել դրանք Մեզնից ավելի կայտառ ուժերի, Այն ինչ ինքներըս թեթեվանալով՝ Կը սողանք դեպ մահ:—Մեր վորդի Կորնվալ, Յեվ հուշնչափ սիրելի վորդի Ալբանի, Մենք վորոշել ենք հայտնել այժմվանից Մեր աղջիկների ոժիտն այլևայլ, վոր ապագայում վորեւե վեճի Առիթ չմնա: Ֆրանսիայի արքան Յեվ Բուրգոնիացին՝ մեծ մրցակիցներ Մեր փոքր աղջկա սիրո պայքարում, Վաղուց ի վեր է, վոր սպասում են Սիրային հույսով մեր արքունիքում: Յեվ արդ պատասխան պետք է տալ նրանց:—Իսյց ասացեք ինձ, իմ աղջիկներս, (Քանի վոր շուտով թոթափելու յենք Թե իշխանութուն, թե յերկրի շահեր Յեվ թե պետության հողածութուններ), Ձեզնից վեր մեկը, կարող ենք առել, Ունի դեպի մեզ ավելի մեծ սեր, վոր մենք ել սփռենք ավելի բարեք, Ուր վոր արժանիքն առավել չափով Հանդիսանում է բնության մրցակից*): Առաջ, Գոնեթիլ, մեր անդրանիկը, Առաջ, դու՛ր խոսիր:

*) Ուր վոր արժանիքն իրավունք ունի պահանջելու իրավունքը, բացի այն դրությունից, վոր բնության պահանջն է:

ԳՈՆԵՐԻԼ

Յես ձեզ սիրում եմ,
Տեր իմ, առավել քան բառերը
Կարող են հայտնել, և դուք ինձ համար
Թանկ եք առավել, քան թե աչքի լույս,
Ող, ազատություն, քան ամենայն ինչ,
Վոր համարվում ե ճոխ և հաղվագյուտ.
Յես ձեզ սիրում եմ վորչա՜ր վոր կյանքը՝
Լի յերջանկությամբ, փառքով ու պատվով,
Յե՛վ դեղեցկությամբ, և՛ առողջությամբ.
Յես ձեզ սիրում եմ, վորչա՜ր յերբեք
Զավակ սիրել և կամ թե հայր սիրվել.
Մի սեր, վորի մոտ տկաք ե շունչը,
Յե՛վ խոսքը՝ անդոր. մի խոսքով՝ առավել,
Քան թե չափելի վորեւ սահման,
Սիրում եմ յես ձեզ:

ԿՈՐԴԵԼԻԱ

(Առամիմ)

Ել ինչ կարող ե
Կորդելիան խոսել—Սիրել և լուել:

ԼԻՐ

Այս սահմաններին այս գծից այս գիծ,
Լի անտառներով՝ խիտ ու հովաշուք,
Հարուստ դաշտերով, առատ գետերով
Յե՛վ անծայրածիր մարգարոտներով,
Յես ձեզ սիրում եմ նշանակում եմ.
Թող Ալբանիի և քո սերընդիդ
Պատկանեն նրանք մինչև հավիտյան:
Այժմ ինչ ե ասում յերկրորդ աղջիկը՝
Կորնվալի կին քաղցրիկ Ռեզանը:

ՌԵԳԱՆ

Յես հորինված եմ միկնույն նյութից,
Վորից իմ քույրը, և իմ արժեքը
Գնահատում եմ նրա արժեքով*)

*) Ռեզանն ուզում է ասել, վոր սիրելու կազմից ինքն ել պակաս չե իր քրոջից. այլ կերպ առած՝ նույն արժեքն ունի, ինչ վոր իր քույրը:

Յե՛վ յես գտնում եմ իմ անկեղծ սրտում
Բոլոր այն սերը, վոր նա բացատրեց.
Սակայն դեռ քույրս բավական չասաց.
Յես ինձ թշնամի հայտարարում եմ
Բոլոր զանազան այն վայելքների,
Վոր զգայությանց նրբագույն մասը
Կարող ե մեզ տա*). և գտնում եմ ինձ
Յերջանիկ՝ միայն այն յերանությամբ,
Վոր տալիս ե ինձ ձեր անդին սերը:

ԿՈՐԴԵԼԻԱ

Ուրեմն վա՛յ քեզ, աղքատ Կորդելիա.
Բայց վո՛չ, վո՛չ աղքատ. քանզի վստահ եմ,
Վոր սերս մեծ ե, քան թե իմ լեզուն:

ԼԻՐ

Քեզ և սերնդիդ, իբր ժառանգություն,
Թող մեր դեղեցիկ թագավորության
Այս յերկրորդ մասը մնա հավիտյան,
Վոչնչով պակաս, վոչ տարածությամբ,
Վոչ դեղեցկությամբ և վոչ արժեքով,
Քան Գոնեռիլին վիճակված մասը:
—Այժմ դո՛ւ խոսիր, մեր ուրախություն.
Թեև վերջինը, բայց վոչ չնչինը,
Վորի դեռափթիթ սիրտ պատճառով
Ֆրանսիայի վորթը, Բուրգունդի կաթը
Մրցակից են այժմ. ինչ պետք ե ասես,
Վորով ստանաս մի յերկրորդ բաժին՝
Ավելի շքեղ, քան քույրերինդ:

ԿՈՐԴԵԼԻԱ

Վոչինչ, տեր:

ԼԻՐ

Վոչինչ:

*) Այս տողի բացատրությունը բնագրի մեջ չուտ մռթ լինելով՝ տեղի յե տվել անհամար յենթադրությունների. թարգմանիչն այդ բոլորն աչքի առաջ ունենալուց հետո՝ հետևել ե այն մեկնիչներին, վորոնք նվազ չափով թախչե են տվել իրենց յերևակայության (Moderley, Schmidt և այլն):

ԿՈՐԴԵԼԻՍ

Վոչինչ:

ԼԻՐ

Վոչինչից միայն վոչինչ դուրս կգա:

Խոսիք դու կրկին:

ԿՈՐԴԵԼԻՍ

Ի՞նչ դժմախոս եմ յես:

Վոր անկարող եմ բարձրացնել սիրտըս

Մինչև շրթունքս: Յես ձեզ սիրում եմ,

Ինչպես իմ պարտքն ե. վոչ ավել, վոչ պակաս:

ԼԻՐ

Այդ քնն է, Կորդելիա, քիչ ուղղի՛ր խոսքըդ:

Թե չես կամենում բախտըդ փչացնել:

ԿՈՐԴԵԼԻՍ

Ո՛վ բաբել հայր իմ, դուք ինձ ծընել եք,

Կրթել և սիրել: Դրանց փոխարեն,

Ինչպես վոր հարկն ե, հատուցանում եմ.

Ձեզ հնազանդվում եմ, սիրում եմ, հարգում:

Ինչո՞ւ իմ քույրերս ամուսին ունեն,

Յեթե իսկապես լուկ ձեզ են սիրում:

Յեթե, պատահմամբ, յես ամուսնանամ՝

Նա, վորի ձեռքը կըստանա ինձնից

Իմ առհավատչյալն, կըտանի իբ հետ

Կեսըն իմ սիրույս, պարտքիս ու խնամքիս:

Յեթե սիրելի իմ հորը միայն,

Յես չեյի պսակվի քույրերիս նըման:

ԼԻՐ

Միթե սիրտդ ել խոսքերի՛դ պես ե:

ԿՈՐԴԵԼԻՍ

Այո, ազնիվ տեր:

ԼԻՐ

Յե՛վ այսքան անսեր:

Այսքան մանկահաս,

ԿՈՐԴԵԼԻՍ

Տեր իմ, և անկեղծ:

Այսքան մանկահաս,

ԼԻՐ

Թող այդպէս լինի,

Անկեղծությունըդ լինի քեզ ո՛ժիտ:

Վկա՛ արե՛ի սուրբ ճառագայթը,

Հեկաթի խորհուրդն ու մութ գիշերը,

Ազդեցությունըդ յերկնագլուխդ,

Վորոնցով ծնվում կա՛մ մահանում ե՞նք,

Ահա այսուհետ զլանում եմ յես

Ամեն հայրական խնամատարություն,

Ամեն արջան կապ, ազդականություն,

Յե՛վ այս բոպելից ոտար ես այլևս

Ինձ և իմ սրտիս: Բարբարոս սկյուծք,

Կամ նա, վոր ուտում և իր գավալներին՝

Իր ախորժակը փակելու համար,

Կը լինի կըրծքիս ավելի մոտիկ,

Յե՛վ կը գտնի դու՛թ ու կարեկցություն,

Ավելի քան դու, իմ նախկին դուստրը:

ՔԵՆՏ

Տեր արքա:

ԼԻՐ

Լուր, Քենտ, մի՛ մոռնիր

Վիշապի և իր կատաղության մեջ.

Յես սիրում եյի նըրան ջերմագին,

Յե՛վ հույս ունեյի գտնել հանգիստըս

Նըրա կաթոգին խնամքների մեջ:

(Կորդելիայի)

Հեռու այստեղից, աչքիս չերևա.

Ինչպես վոր ձիշտ ե, վոր գերեզմանում

Կըզտնեմ հսնդիստ, նույնպես և ճիշտ ե,
 Վոր այժմ նրանից յես յետ եմ առնում
 Հայրական սիրտըս:—Կանչեցեք Փրանսիացուն:
 —Ո՞վ ե կանչելու. բերեցեք այստեղ
 Քուրդոնդի գութսին:—Կորնվալ, Ալբանի,
 Իմ յերկու աղջկանց ռոժիտներին հետ
 Մարտեցեք նաև այս յերրորդ մասը:
 Քող գոռոզությունը, վոր նա կոչում ե
 Պարզախոսություն, նըրան կին առնի:
 Տես ձեզ եմ հանձնում իշխանությունըս,
 Դրա հետ մեկտեղ՝ նախապատվություն
 Տեղ բոլոր այն լայն իրավունքները,
 Վորոնք հատուկ են թագավորության:
 Իսկ մենք պահելով մի հարյուր ասպետ,
 Վորոնց ապրուստը դուք պետք ե հողաք,
 Կը մընանք հերթով ամեն մեկիդ մոտ:
 Մենք մեզ պահում ենք մի թագավորի
 Անունը միայն և տիտղոսները.
 Իսկ իշխանություն, հասույթ, վարչություն,
 Սիրելի վորդիք, ձերն են այսուհետ:
 Ե հաստատություն այս իմ վորոշման՝
 Այս թագը առեք և բաժանեցեք
 Ձեր յերկուսի մեջ:

ՔԵՆՏ

Ո՞վ վեհափառ Լիր,

Միշտ պատվել եմ ձեզ, իբր իմ արքայի,
 Միրել՝ իբրև հայր, և միշտ հետևել՝
 Իբրև իմ տիրոջ. աղոթքներիս մեջ
 Միշտ ձեզ եմ հիշել իբր իմ պաշտպանի:

ԼԻՐ

Ազիզը լարված և խիստ ձգված ե.
 Խուսափի՛ր նեախ:

ՔԵՆՏ

Վհչ, թող պառնա:

Սըլաքը թեկուզ սրտիս մեջ մըխվի.
 Անքաղաքավար լինի թող Քենտը,
 Յերբ Լիրը խենթ ե Ինչ ես անում, ծերսուկ,

Կարծում ես՝ պարտքը կերկրնչի՞ խոսել,
 Յերբ խոնարհվում ե իշխանությունը
 Քծնանքի առջև: Ազնվությունը
 Պարտավորված ե պարզախոս լինել,
 Յերբ կորանում ե վեհափառությունը
 Դեպ անմըտություն: Վճիռըդ յետ առ.
 Տեղ քո լավագույն նըկատառությամբ՝
 Փոխի՛ր հրեշավոր այդ բիրտ հրամանը:
 Քող կյանքըս խոսքիս գրավական լինի,
 Քեզ փոքր աղջիկըդ պակաս չի սիրում
 Քան թե մյուսները: Անսիրտ չեն նըրանք,
 Վորոնց ցած ձայնը չի վորոտացնում
 Մի խուլ արձագանք:

ԼԻՐ

Քենտ, ի գին կյանքիդ,

Լըռի՛ր:

ՔԵՆՏ

Իմ կյանքը արքա, յես պահել եմ միշտ

Վորպես գրավական, վոսոխներիդ դեմ
 Դուքս գալու համար, և չեմ վախենում
 Կորցնել նըլան, յերբ պահանջում ե
 Քո փրկությունը:

ԼԻՐ

Կորի՛ր իմ աչքից:

ՔԵՆՏ

Աչքըդ բաց, ով Լիր, և թող գեռ մընամ
 Աչքիդ հարատե կեռնապատակին:

ԼԻՐ

Ապուրունը վկա...

ՔԵՆՏ

Ո՞վ արբա, իզուր յերգում ես անում
 Քո աստվածներով:

Սարգսի, անհաւատ:
(Ձեռքդ տրի՛մ դնելով)

ԱԼԲԱՆԻ ՅԵՎ ԿՈՐՆՎԱՆ

Խնայեցէ՛ք, տէր արքա:

ՔԵՆՏ

Մեղքըս բըժշկի՛ր:

Իսկ նըրա վարձը տո՛ւր այդ ժանտ ախտի՛դ:
Յէտ առ քո բաշխած այդ պարգեւները.
Յեթե վո՛չ, քանի հընար ունեմ յես
Այս իմ կոկորդից աղմուկ հանելու,
Յես քեզ կը կրկնեմ, վոր վատ ես անում:

ԼԻՐ

Լըսիր, անիրաւ, հանուն քո ուխտած
Հըպատակութեան՝ ահանջ դի՛ր դու ինձ.
Քանի վոր դու այժմ ջանքեր արեցիր՝
Մեզ բեկանել տալ մեր արած ուխտը
(Ինչ վոր մենք յերբեք չենք համարձակվել),
Քանի վոր անշափ քո գոռողութեամբ
Միջամբտեցիր մեր իշխանութեան
Յեզ վճռի միջև (վոր վո՛չ մեր բնույթը,
Վո՛չ աստիճանը կարող են ներել),
Ճաշակէր ուրեմն մեր գորութեանը.
Վարձդ ստացիր: Մենք շնորհում ենք քեզ
Միայն հինգ որվա մի պայմանաժամ,
Վորով աշխարհի տառապանքներից
Քեզ ապահովես. իսկ վեցերորդին՝
Այդ պիղծ կոնակըդ մեր յերկրին դարձնես.
Յեթե հետեյալ տասներորդ որը
Վտարված լիշդ գըտնվի դեռես
Մեր պետութեան մեջ, այդ ըսպէս քեզ մահ եւ
Կորիւր իմ աչքից. Արամազդը վկա,
Խոսքըս անդարձ եւ:

ՔԵՆՏ

Մնաս բարով, արքա:

Այժմ, յերբ ուղում ես այսպէս ընթանալ,
Ազատութեանը այստեղից դուրս ե
Յեզ աքսորն՝ այստեղ:—Իսկ դո՛ւ, մանկամարդ,
Քող աստվածները քեզ պատապարեն,
Ի՞նչ ճիշտ խորհեցիր ե ճիշտ խոսեցիր:

(Ռեգանին յեզ Դոմերիլին)

Քող ձեր գործերը համեմատ լինեն
Ձեր մեծ ճառերին, բարի արդյունքներ
Ծընվեն սիրային ձեր այդ խոսքերից:

(Իշխաններին)

Այսպէս, իշխաններ, Քենտը ըտրորիդ
Հրաժեշտ ե տու՛մ, նապակեք ե ձեի
Իր հին բնույթը նոր հայրենիքի:

(Կրկին մեք եմ գալիս՝
Կլաստերը, Պրանտիայի քա-
ղաքը, Բարգանդի դուքսը
յեզ ապագայները):

ԴԱՍՏԵՐ

Ահա Պրանտիայի ե Բուրգոնիայի
Իշխաններն յեկան, իմ աղնիվ արքա:

ԼԻՐ

Իշխան Բուրգոնիայի,
Նախ ձեզ ենք դիմում, վոր մըցտից եք
Այս արքայի հետ մեր զըստեր համար:
Ի՞նչ առնվաղն ոժիտ եք խնդրում
Իմ աղջկա հետ, ե առանց վորի
Կը գադարեցիք ձեր սիրո խույղը:

ԲՈՒՐԳՈՆԻ

Ձերդ արքայական վեհապետութեան,
Յես չեմ պահանջում ավելի քան այն,
Ինչ առաջարկեց ձեր մեծութեանը,
Վո՛չ ել պետք ե դուք պակաս շընորհեք:

ԼԻՐ

Դերագնիվ Բուրդնդ, յերբ վոր մեր սըրաթն
Նա սիրելի յեր, նըրա գինն աչդ եր.
Բայց արդ ընկել ե նըրա արժեքը.
Տեր իմ, ահա նա կանգնած ե այդտեղ.
Յեթե այդ փոքրիկ գեղաձև մարմնից
Մի մաս, կամ ամբողջն— իմ ատելությամբ
Միայն ոժտելված— ե վոչինչ ավելի,
Ձերդ բարձրության հաճելի լինի,
Առեք, ձերն ե նա:

ԲՈՒՐԳՈՆԴ

Ինչ պատասխանեմ:

ԼԻՐ

Տեր իմ, ահա նա, այն արատներով,
Ինչ վոր նա ունի, վորը, անբարեկամ,
Նոր վորդեղիրը մեր ատելության,
Մեր անեծքներով միայն ոժտելված
Յեվ մեր յերդումով մեզ ոտարացած
Ուղմամ եք նրան, թե բաց եք թողնում:

ԲՈՒՐԳՈՆԴԻ ԴՈՒՔՍ

Ներող յեղեք ինձ, վեհափառ տեր իմ,
Վոչ մի ընտրություն չի կարող լինել
Այդ պայմաններով:

ԼԻՐ

Թողեք ուրեմն,

Քանզի, յերդվում եմ այն կարողությամբ,
Վոր ինձ ստեղծեց, յես ձեզ հայանցի
Նրա բոլոր ինչքը:

(Յրանալով քաղաքի՝)

Իսկ դուք, մեծ արքա,

Յես չեյի ուղի ձեր սերն անարդի:

Ձեզ դուրդեղելով իմ ատածիս հետ.
Խնդրում եմ, ուրեմն, ձեր սերը դարձրեք
Ավելի արժան առարկայի վրա,
Քան մի թըվառի, վորին բնությունը
Գրեթե խափում ե յուրը համարել:

ՅՐԱՆՍԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐ

Ձարմանալի՛ յե. նա, վոր քիչ առաջ
Ամենից սիրելի ձեր առարկան եր,
Յեվ գովեստների ձեր բընաբանը,
Յեվ բալասանը ձեր զառամության,
Ամենից լավը, ամենից սիրելին,
Ինչպիսի հրեշավոր մի հանցանք դործեց
Մի ակընթարթում. վոր այդպես զրկվեց
Այնքան ծախածալ ձեր շնորհներից.
Անշուշտ այդ մեղքը խիստ անբընախան
Յեղած կը լինի, ե խիստ հրեշավոր.
Յեվ կամ, ձեր նախկին հավաստած սերը
Խիստ անտեղի յեր.— ե նըրա կողմից
Այդպիսի մի բան կարծելու համար՝
Պետք ե մի հավատք, վոր, առանց հրաշքի,
Դատողությունը չի կարող տալ ինձ:

ԿՈՐԴԵԼԻՍ

Աղերսում եմ յես ձեր մեծությունից
Մի վերջին շընորհ. թե մեղքըս այն ե,
Վոր չունեմ սահուն, վողորկ արվեստը
Այլ բան ասելու ե այլ խորհելու,
(Քանզի այն, ինչ վոր իմ բարի կամքն ե,
Յես այն գործում եմ՝ նախ քան թե խոսել).
Խնդրում եմ ուրեմն, վոր հայտարարեք,
Վոր վոչ մոլի բիձ, վոչ սպանություն,
Վոչ մի գարշություն, վոչ լկախ մի դործ
Կամ քայլ անպատվիչ— չեն յեղել պատճառ՝
Ինձ ձեր շընորհից զրկելու համար:
Այլ քանզի չունեմ այնպիսի մի բան,
Վորի չքությունը հարեատություն ե.

—Մշտնդերս մի աչք, այնպիսի լեզու,
Վորը չունենալն ինձ տուժել տըվեց
Ձեք սերն հայրական:

ԼԻՐ

Ավելի լավ եք
Ծընված չըլինեյիք, քան այս աստիճան
Քեզ ասել տայիք:

ՖԻԼՈՍՈՖԻԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐ

Հենց մյգ և միայն

Վահ, բընության մեջ մի դանդաղություն,
Վոր մերթ թողնում է առանց ասելու
Այն պատմությունը, վոր պետք է պատմեր:
—Իշխան Բուրգունդի, դուք ի՞նչ եք ասում
Այս որիորդին: Սեր չե այն սերը,
Վորի մեջ խառն են այլ նկատումներ,
Վորանք անջատ են բուն նպատակից.
Պ՛ազում եք նրան. իր ոժիտն ինքն է:

ԲՈՒՐԳՈՆԴԻ ԴՈՒՔՍ

Ո՛վ Լիր վեհափառ,

Տվեք ինձ միայն՝ ինչ վոր խոստացաք,
Յեվ նրա ձեռքից կը բըռնեմ իսկույն
Յեվ Բուրգունդիայի դքսուհի կանեմ:

ԼԻՐ

Վաչենչ, յերգվել եմ. անդրդվելի յեմ:

ԲՈՒՐԳՈՆԴԻ ԴՈՒՔՍ

Կորդելիային

Ափսոս, վոր այսպես կորցնելով մի հայր՝
Դուք պետք է կորցնեք և մի ամուսին:

ԿՈՐԴԵԼԻԱ

Յեր բնդ ձեզ, ով դուքս. յերբ վոր ձեք սերը
Լոկ հարստության հաշիվ է միայն,
Յես ել ձեք կինը լինել չեմ կարող:

ՖԻԼՈՍՈՖԻԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐ

Ձքնաղ Կորդելիա, դու շատ հարուստ ես,
Վորչափ ել աղքատ. թեպետ և լըքված՝
Բայց չընաշխարհիկ. թեև անարգված՝
Սակայն պաշտելի. յես տեր եմ կանգնում
Քեզ և քո բոլոր առաքինությանց.
Թող ինձ թույլ տրվի առնել ինձ համար՝
Արհամարհվածին: Աստվածներ, աստվածներ,
Չարմացք, վոր նրանց սառն անարգանքից
Իմ սերըս վառվում և բորբոքվում ե:

(Լիրին)

Ո՛վ արքա, այդ քո դուռտըրը անոժիտ,
Վոր դուրս է գըցված իմ բախտիս առջև,
Թաղուհի յե մեղ, մերայինների
Յեվ մեր գեղանի Ֆրանսիայի վրա.
Բոլոր դուքսերը ջրուս *) Բուրգունդի
Ձեն կարող գընել այս չը գնահատված
Անգին կույսն ինձնից:

(Կորդելիային)

Կորդելիա, սրանց

Ծնաք բարով ասան, թեև դաժան են:
Կորցնելով այս տեղը, դու դռնելու յես
Առավել լավը:

ԼԻՐ

Նա քոնն է, Ֆրանսիացի.

Քեզ լինի, մենք չունենք այդպիսի աղջիկ.
Յեվ նրա գեմքը ել չենք տեսնելու:
—Դընան, ուրեմն, առանց մեր շնորհի,
Առանց մեր սիրտ, առանց որհնության:
—Յեկ, աղնիվ Բուրգունդի:

(Փազիր. Լիրը յեվ Բուրգունդի դուքս դուրս եմ գնում)

*) Բուրգունդիան ամենից շատ գետեր ունեցող գավառն է Ֆրանսիայում:

Մնաք բարով ասանք թուրքերից եր

ԿՈՐԴԵԼԻԱ

Իմ հոր գոհարներ, խոնավ աչքերով
Կորդելիան ձեզնից հրաժեշտ ե խնդրում.
Գիտեմ՝ դուք ինչ եք. սակայն վորպես քույր՝
Խորշում եմ կոչել ձեր տրամները
Իրենց անուշով: Սիրեցեք հորըս.
Ձեր խոստումնալից սիրազեղ կրծքին
Հանձնում եմ նրան. և սակայն, ավանգ
Թե վայելի ղեռ նրա շնորհը,
Ավելի լավ անդ կտայի նրան:
Դեհ, մընաք բարով:

ՌԵԳԱՆ

Դու մեր պարտքը մեզ մի սովորեցնի:

ԳՈՆԵՐԻԼ

Թող ջանքդ լինի հաճելի լինել
Այդ քո ամուսնուդ, վոր քեզ ընդունեց
Իբր վողորմություն: Դու խնայեցիր
Հնազանդությունդ, և արժանի յես
Վոր քեզ զըլացվի՝ ինչ վոր զըլացար:

ԿՈՐԴԵԼԻԱ

Լավ... ժամանակը կընայանագործի՝
Ինչ վոր թաղցնում ե խորամանկությունն
Իր ծալքերի տակ: Նա, վոր ծածկում ե
Իր մոլությունքը, ամոթն ի վերջո
Ծաղր ու ծանակ ե դարձնում նրան.
Հաջողություն ձեզ:

(Փրանսիայի քաղաքը յեմ Կորդելիան դուրս եմ գնում)

ԳՈՆԵՐԻԼ

Պույրիկ, շատ բան ունեմ քեզ ասելու մի նյութի մասին,
վոր շատ մոտ կապ ունի մեզ յերկուսիս հետ: Կարծեմ մեր հայրն
այս գիշեր գնալու յե այստեղից:

ՌԵԳԱՆ

Անշուշտ, և քեզ մոտ ե դալու, իսկ մյուս ամիս՝ մեզ մոտ:

ԳՈՆԵՐԻԼ

Տեսնում ես վորքան հեղեղուկ ե նրա ծերությունը, մեր
տեսած որինակը քիչ բան չէ. նա մեր քրոջը միշտ ամենիցս
ավելի յեր սիրում. բայց թե ինչ փուչ դատողությամբ նրան
վռնդեց, այդ շատ բիրտ կերպով ակնհեր ե:

ՌԵԳԱՆ

Այդ նրա դառաժության տկարությունն ե, բայց յերբեք
նա իր արածը լավ չի հասկացել:

ԳՈՆԵՐԻԼ

Իր կյանքի ամենալավ և առողջ որերում նա շատ բարկացկոտ
ե յեղի, ուրեմն մենք նրա ծերությունից պետք ե սպասենք
վոչ միայն բնածին, խոր արժատացած թերություններ, այլև
այն անդուսող բորբոքումները, վոր տկար և բարկասիրտ ծերու-
թյունը բերում ե իր հետ:

ՌԵԳԱՆ

Մենք նրանից պետք ե սպասենք այնպիսի փոփոխակա-
ն զայրույթներ, ինչպես Բենտի այս աղքատը:

ԳՈՆԵՐԻԼ

Դեռ մնաք բարովի արարողություններ են կատարվելու նրա
և Ֆրանսիայի թագավորի միջև: Խնդրեմ համաձայնություն
կայացնենք: Յեթե մեր հայրը վորեւ իշխանություն ունենա, իր-
արդի արամադրությամբ, նրա այս վերջին գիշողությունն ի-
նպաստ մեզ՝ դատարկ հեղձություն կլինի:

ՌԵԳԱՆ

Կմտածենք այդ մասին:

ԳՈՆԵՐԻԼ

Տերկաթը առք պիտի ձեռենք:

(Դուրս եմ գնում)

ՏԵՍԱՐԱՆ Բ.

Պոստերի կոմսի սի ամրոցը

Մտնում ե երթունդ՝ մի նամակ ձեռքին

ԵՐԺՈՆԴ

Դու յես, ով բնություն, իմ աստվածունին.
Յես հըպատուն կմ քո որենքների.
Ինչու յենթարկվեմ փուշ սովորության
Պատուհասներին և ինչու թույլ տամ
Ազգերի անմիտ բըծախնդրության,
Վար նա զրկի ինձ իմ իրավունքից,
Լույ աշն պատճառով, վոր իմ յեղբորից
Տասներկու կամ թե տասնուչորս լուսին
Յետ կմ մնացել: Ինչու բիճ, եր ստոր,
Յերբ անդամներս նույնչափ կայտառ են,
Հողիս՝ նույնչափ վեհ, կազմս՝ բարեճե,
Վորչափ մի պարկեշտ տիկնոջ զավակը:
Ինչու յես այդպես մեզ միշտ խարանում
Կրկնելով, անարդ և անարգություն,
Բիճ, անարդ, անարգ, մեզ, վոր բնության
Առույգ. կենսալից այն գողության մեջ
Ավելի ավյուն, յեռանդ ենք առնում,
Քան այն տաղտկալից, մաշված մահճի մեջ,
Ուր ստեղծվում ե թանձրամիտների
Մի ամբողջ սերունդ՝ ծնված կես քնի,
Կես արթնության մեջ: Այսպես ուրեմն,
Եղգար հարազատ, յես սիտք ե տիրեմ
Քո կալվածներին: Մեր հոր գորովից
Ապրենք Եղմոնդ նույնչափ մաս ունի,

Վորչափ վոր ունի որինականը:
Գեղեցիկ բառ ե,—որինականը...
Լավ, իմ հարազատ, թե այս նամակը
Ազգերի լինի, և հնարքս՝ հաջող,
Եղմոնդ ստորը կգերազանցի
Որինականին: Աճում եմ, զարգանում...
Ո՛հ դուք, աստվածներ, զորավիդ յեղեք
Ապրենքներին:

(Մտնում ե Կլոստեր)

ՊԼՈՍՏԵՐ

Բենալ աքսորվի.

Փրանսիայի արքան բարկությամբ մեկնի
Յեվ թագավորը թողնի հեռանա՝
Իր իշխան և թյունն այլոց փոխանցած,
Թողակի մնացած. և այս բոլորը
Մի ակնթարթում—Եղմոնդ, ինչ կա, թնչ լուր:

ԵՐԺՈՆԴ

(Կեղծելով, վոր իր քե նամակը ծածկում ե)

Վոչինչ, տեր իմ:

ՊԼՈՍՏԵՐ

Ինչու յես այդպես շտապով ծածկում այդ նամակը:

ԵՐԺՈՆԴ

Յես վոչ մի լուր չգիտեմ, տեր իմ:

ՊԼՈՍՏԵՐ

Ինչ թուղթ եր այդ, վոր կարդում եյիք:

ԵՐԺՈՆԴ

Վոչինչ, տեր իմ:

ՊԼՈՍՏԵՐ

Վոչինչ. ինչու ուրեմն այդպես սարսափած դրեցիր զբառնդ:
Վոչինչը կարիք չունի այդպես շտապով ծածկվելու: Տես տեսնեմ,
տեր. յեթե վոչինչ լինի՝ յես կարոտություն չեմ առնեմ ա՛նոց-
ների:

ԵՂՄՈՆԴ

Աղաչում եմ, տէր իմ, ներեցե՛ք ինձ. մի նամակ ե, վոր յեղբայրս ե ինձ գրել. և յես դու ամբողջ չեմ կարգացել, բայց վորքան վոր կարգացել, յես հարմար չեմ գտնում, վոր դուք տեսնեք:

ԳԼՈՍՏԵՐ

Տներ ինձ այդ նամակը, պարոն:

ԵՂՄՈՆԴ

Թե ասած վայ, թե չասած վայ: Բովանդակությունը, վոր-չափ մասամբ հասկացա, պարտավելի բան ե:

ԳԼՈՍՏԵՐ

Տեսնեմ, տեսնեմ:

ԵՂՄՈՆԴ

Իբրեւ արդարացում իմ յեղբորս, հույս ունեմ, վոր նա այս գրել ե իմ առաքելությունը փորձելու, կամ շոշափելու համար միայն:

ԳԼՈՍՏԵՐ

(Կարդում ե)

«Այս ընդունված կարգը, այս ակնածանքը դեպի ծերությունը՝ զաւնացնում ե մեր կյանքի ամենալավ որերը, մեզ զրկում ե մեր բախտից, մինչև վոր ծերությունը մեզ այլևս անընդունակ ե դարձնում վայելք զգալու նրանով: Յես սկսում եմ գտնել մի ստոր ե տխմար ստրկություն մեր հնազանդության մեջ՝ զեպի զառամյալ բռնակալությունը, վոր իշխում ե վոչ թե իր ունեցած կարողությամբ, այլ այն պատճառով, վոր մենք հանդուրժում ենք նրան: Յեկ ինձ մտա, վոր այս մասին մանրա-մասն խոսենք: Յեթե մեր հայրն այնքան քնեք, մինչև վոր յես նրան զարթեցնեյի, դու կստանայիր հավիտյան նրա հասույթի կեսը, և կլինեյիր քո յեղբոր սիրելին»:

Նոգաբ

Հը՞, զավարդություն. «քնեք, մինչև վոր յես նրան զարթեցնեյի».— դու կստանայիր հավիտյան նրա հասույթի կեսը... իմ Նոգաբ վորդիս... նրա ձեռքը այսպիսի բան գրի. նրա սիրտը ե ուղիղը այսպիսի բան հղանան... Յեթե ստացար այս. մի բերեց:

ԵՂՄՈՆԴ

Ինձ չեն բերել, տէր իմ, հնարքը հինց դրա մեջ ե. յես այդ դատ իմ առանձնասենյակի պատուհանում:

ԳԼՈՍՏԵՐ

Դիւրը ճանաչում ես, վոր յեղբորդ ե:

ԵՂՄՈՆԴ

Յեթե բովանդակությունը լավ լինել, տէր իմ, յես կկարողա-նայի յերդվել վոր նրանն ե, բայց քանի վոր այսպես ե, յես կազգայի խորհել, վոր նրանը չե:

ԳԼՈՍՏԵՐ

Նրանն ե:

ԵՂՄՈՆԴ

Նրա ձեռքն ե, տէր իմ, բայց հույս ունեմ, վոր նրա սիրտը գրվածի մեջ չե:

ԳԼՈՍՏԵՐ

Մինչև այժմ այդ մասին յորեք քեզ հետ խոսք չի բացել:

ԵՂՄՈՆԴ

Յերբեք, տէր իմ. բայց շատ անգամ նա պնդել ե իմ մաս, վոր յերբ վորդիները չափահաս են, հայրերն չսկսում են զառա-մել, հայրը պետք ե վորդու խնամքի տակ լինի, իսկ վորդին կառավարի նրա ստացվածքը:

ԳԼՈՍՏԵՐ

Ո, արիկա, արիկա. հենց իր այդ զաղափարն ե այս նամակի մեջ. «գարշիկի արիկա. հրեշտակ, ասելի, զաղանային» արիկա. վատթար քան զաղանային... (ծառայիկ) զնա, ա, տղա, կանչիր նրան. յես պետք ե նրան ձերբակալեմ... գարշիկի սքի-կա... վերտեղ ե նա:

ԵՂՄՈՆԴ

Լավ չգիտեմ, տէր իմ. Յեթե բառահաճեք զսպել առ ժամա-նակ ձեր զայրույթը իմ յեղբորս դեմ, մինչև կարողանաք ավելի զավ տալացույց դուրս քաշել նրանից յուր-մաքերի մասին, այդ

լինի ավելի հաստատուն ընթացք. այն ինչ յեթե բռնութեան գործ դնեք նրա վրա, և սխալված լինեք նրա դիտումների մասին, այդ ձեր պատվի մեջ մի մեծ ական կլինի, և դուք քարուքանդ կանեցեք նրա հնազանդութեան նույնիսկ սիրտը: Յես համարձակվում եմ իմ կյանքս դրավ դնել, վոր նա այս դրել է նրա համար միայն, վոր փորձի, թե ինչ աստիճան սեր ունեւ դեպի ձերդ հարգութեանը, վոր թե վորեկից մի չար նպատակով:

ԳԼՈՍՏԵՐ

Կարծում եմ:

ԵՒՄՈՆԴ

Յեթե ձեր հարգութեանը հարմար դատի, յես մի այնպիսի տեղ կկանգնեցնեմ ձեզ, վոր դուք ձեր ականջով լսեք մեր խոսակցութեանն այդ մասին և բավարարութեան ստանաք և այդ վոր՝ ավելի ուշ, քան այս գրեցի:

ԳԼՈՍՏԵՐ

Նա չի կարող այսպիսի մի հրեշ լինել:

ԵՒՄՈՆԴ

Անպատճառ չի կարող լինել:

ԳԼՈՍՏԵՐ

Դեպի իր հմյրը, վոր նրան այնքան անհուն և քնքուշ սիրով սիրում ե... Յերկիւնք և յերկիւր... Նեմոնդ, դա՛ր նրան. մեւտք տուր ինձ նրա դադտնիքի մեջ. գործը կարգադրիք ըստ քո խոհեմութեան, յես պետք է մեկ կողմ դնեմ իմ հայրական գութը՝ հարկ յեղած վճռականութեանը ցույց տալու համար:

ԵՒՄՈՆԴ

Յես իսկույն կգնամ կփնտռեմ նրան, տե՛ր իմ. գործը կը կարգադրեմ՝ վորչափ վոր կարողանամ, և ձեզ տեղեկութեան կտամ:

ԳԼՈՍՏԵՐ

Արեւի և լուսնի այս վերջին խավարումները վոր մի լավ բան չեն գուշակում մեզ համար: Թեև բնական որոնքների գիտութեանը կարող ե այս կամ այն բացատրութեանը տալ, այնուամենայնիվ բնութեանն իրան մտրակված և զգում դրանց հաճախակի արդյունքներով. սերը պաղում է, բարեկամութեանը՝ թուլանում, յեղբայրները միմյանց դեմ են յինում. քաղաքներում՝

ապստամբութեաններ, գլուղերում՝ պառակտումներ, պալատներում՝ դավաճանութեան, հոր և վորդու մեջ կապը խզվում է: Այս իմ սրիկա վորդին գուշակված ազդեցութեան տակ է. ահա վորդին հոր դեմ, թաղավորը շեղվում է բնական հակումից, ահա հայրը վորդու դեմ: Մեր լավ որերն անցան. մեքենայութեաններ, խարդախութեան, մատնութեան և ամեն տեսակի կործանիչ խառնակութեաններ հալածում են մեզ անդադար մինչև մեր դերեզմանը:— Դուք այդ թշվառահանին, Նեմոնդ, դու բան չես կորցնի, զգուշութեամբ գործիր... Յե՛վ այն աղնիվ և առաքինի Քենտը քստրված. նրա հանցանքը— աղնիվութեան... Չարմանալի յե՛, զարմանալի յե՛:

(Դուրս և գնում)

ԵՒՄՈՆԴ

Այսպես է աշխարհի զարմանալի տխմարութեանը, վոր յերբ մեր բախտը հիվանդ է (և այդ հաճախ՝ մեր սեփական ընթացքի գեղծումներից), մենք մեր դժբախտութեանները սովոր ենք բարդել արևի, լուսնի, աստղերի վրա, վորպես թե մենք հակառակ դրի ուժով սրիկաներ ենք, տխմարներ ենք՝ յերկնային հրամանով. թշվառականներ, գողեր, դավաճաններ՝ յերկնագնդերի ազդեցութեամբ. գինոջներ, ստախոսներ, շնացողներ՝ մի հարկադրված հնազանդութեամբ դեպի մոլորակների ազդեցութեանը, և բոլոր մեղքերը, վոր գործում ենք, աստվածային մղմամբ ենք գործում: Մըանչև ի պատրվակ բողարած մարդու.— բարդել իր նոխաղային *) հակումներն աստղերի վզին: Իմ հայրը զուգավորվեց մորս հետ Վիշապի ողջի տակ, և իմ ծնունդը տեղի ունեցավ Մեծ-Արջի տակ. հեռանքն այն է, վոր յես կռակտ եմ և լիտի: Վան, յես ինչ վոր եմ հենց այն կլինի, յեթե նույնիսկ յերկնակամարի ամենահուսակա աստղը շողողած լիներ իմ ապրիլին հղութեան վրա... Նեղգմը...

(Մտնում և նգաղը)

Ծիշտ ի դեպ և գալիս՝ ինչպես հին կատակերգութեաններ լիտեմանը **): Իմ դերս կլինի մի թշվառ մեղամաղձութեան՝ մի հառաչանքի հետ, վորպես Բեդլամի Տոմը: ***)

*) Նոխաղային = վաժաշու:

**) Այսինքն՝ ինչպես կատակերգութեան վախճան առաջացնող զիպվածք, վոր պատահում է ճիշտ րոպեյին, յերբ գործողութեանը հասել է իր կրիտիկական կետին, և հանդիսատեսներն անհամբեր սպասում են նրան: Heath.

***) Բեդլամը լուսնոտների հիվանդանոց էր: Բեդլամի Տոմը մի տոնան էր՝ ինչ-վոր թափառկալըջիկ մուրացկանների համար:

—Ո՛հ, այս խավարումները գուշակում են այսպիսի պառակտումներ. ֆան, սոլ, լա, մի...

ԵԴԳԱՐ

Ի՞նչ լուր, յեղբայր եղմոնդ: Այդ ի՞նչ մտախոհության մեջ ես խորասուզվել:

ԵԴՄՈՆԴ

Յեղբայր, յես մտածում եմ մի գուշակության վրա, վոր անցած որը կարդացի, թե ի՞նչ պետք է լինի այս խավարումների հետևանքը:

ԵԴԳԱՐ

Միթե զբաղվում ես այդ բանով:

ԵԴՄՈՆԴ

Հավատացնում եմ՝ նրա դրած արդյունքները դժբախտաբար իրականանում են. հրեշավոր կոիմներ դավալի և ծնողի մեջ. մահ, սով, հին բարեկամությունների խախտում, պառակտումներ պետության մեջ, սպառնալիքներ և անեծքներ թագավորի և աղնվականների դեմ, անտեղի կասկածներ, բարեկամների արտաքսում, գործերի ցրվում, ամուսնալուծություններ, չգիտեմ ել ի՞նչ...

ԵԴԳԱՐ

Վերջան ժամանակ է, վոր աստղագիտության աշակերտ ես դարձել:

ԵԴՄՈՆԴ

Լավ է, լավ է. յերբ ես տեսիլ վերջին անգամ իմ հորը:

ԵԴԳԱՐ

Յերբ, անցած գիշեր:

ԵԴՄՈՆԴ

Իբ հետ խոսեցիր:

ԵԴԳԱՐ

Այո, ամբողջ յերկու ժամ:

ԵԴՄՈՆԴ

Միթե՞ բաժանվեցիք միմյանցից, վոչ մի դժգոհություն չնկատեցիր նրա մեջ, խոսքից կամ դեմքից:

ԵԴԳԱՐ

Ամենեվին:

ԵԴՄՈՆԴ

Լավ մտածիր, թե ի՞նչ բանով պետք է նրան վերադարձ լինեա, և, աղաչում եմ, խույս տաւր առ ժամանակ նրա ներկայությունից, մինչև վոր նրա դժգոհության բորբոքն անցնի: Այս բոպելիս նա այնպես զայրացած է, վոր մահը անգամ չի կարող ամոքել նրան:

ԵԴԳԱՐ

Մի արիկա պետք է ինձ գրպարտած լինի:

ԵԴՄՈՆԴ

Յես ել այդ բանից եմ վախենում: Խնդրեմ դու քեզ համբերությամբ հեռու պահիր, մինչև վոր զայրույթի սաստկությունն ամոքվի և ինչպես ասացի, յեկ ինձ հետ առանձնացիր իմ բնակարանի մեջ. յես քեզ մի տեղ կտանեմ, վոր դու լսես մեր հոր խոսելը: Յեկ, խնդրեմ, ահա իմ բանալին.—յերբ ուզես դուրս գալ, գինված դուրս յեկ:

ԵԴԳԱՐ

Զինված, յեղբայր:

ԵԴՄՈՆԴ

Յեղբայր, յես քեզ բարի խորհուրդ եմ տալիս, գինված չըլիր. յես ազնիվ մարդ չեմ, յեթե քո մասին չար դիտավորություններ չկան: Յես քեզ պատմեցի, ինչ վոր լսել և տեսել եմ, բայց շատ մեղմ կերպով, շատ հեռու իրականության սոսկալի պատկերից: Աղաչում եմ, գնա:

ԵԴԳԱՐ

Շուտով լուր կտան ինձ:

ԵԴՄՈՆԴ

Յես այս գործի մեջ քեզ եմ ծառայում:

(Նղգարը դուրս է գնում)

Մի բարեմիտ հայր (առանձին), մի ազնիվ յեղբայր,

Վորի բնությունն այնքան հեռու յի

Զարիք գործելուց, վոր չի ել կասկածում,

Վորչա՞մ դուրին են իմ հնարքները

Այսպիսի պիտար աղնվության հետ.

—Դիտեմ՝ ինչ կանեմ, յեթե ծընունդով

կարված չը ստացա, հնարքով կը ստանամ.

Ամեն մի միջոց լավ է ինձ համար

Վոր կը հասցնի ինձ իմ նպատակին:

(Դուրս է գնում)

ՏԵՍԱՐԱՆ Գ

Ալբանի դուխի պալատը

Մտնում են ԳՈՆԵՐԻԼԸ և ՈՍՎԱԼԴ

ԳՈՆԵՐԻԼ

Ճիշտ ե, վոր հայրս զարկել ե թիկնապոսին՝ այն պատճառով
վոր նա անպատվել ե նրա խեղկատակին:

ՈՍՎԱԼԴ

Այո, տիկին:

ԳՈՆԵՐԻԼ

Գիշեր և ցերեկ ինձ անարգում ե.
Յեվ ամեն մի ժամ նա բարկանում ե,
Գործելով մի բիրտ, անվայել հանցանք,
Վոր մեզ բոլորիս վրդովեցնում ե:
Վոչ, յես չեմ կարող այլևս հանդուրժել.
Իր ասպետները սաստիկ խռովահույզ
Մարդիկ են դառնում. ինքն ել շարունակ
Ամեն մի չնչին պատճառի համար
Գրասովում ե մեզ: Յերբ վորսից տուն գա՝
Իբ հետ չեմ խոսի. իսկ դուք ասացեք,
Վոր յես հիվանդ եմ. և շատ լավ կանեք,
Վոր չծառայեք առաջվա նրման.
Իսկ պատասխանը յես ինքս կըտամ:

ՈՍՎԱԼԴ

Նա յեկավ, տիկին, ձայնը լսում եմ:

(Վարդի փոփոխություններ)

ԳՈՆԵՐԻԼ

Վորչափ կարող եք՝ անհոգ ձեռքեք
Թե դու, և թե քո բոլոր ընկերները.
Շատ լավ կը լինի, վոր նա բարկանա.
Յեթե հավան չե, քրոջըս մոտ թող գնա:
Նա այս գործի մեջ ինձ համոմիտ ե,

Յեվ նա թույլ չի տա՝ իշխեն իր վրա:
Զառամյալ ծերուկ, վոր կամենում ե
Դեռևս վարել մի իշխանություն,
Վոր ինքն իր ձեռքով այլոց ե հանձնել:
—Ա՛հ, կյանքըս վրկա, ծեր հիմարները
Դառնում են կրկին դեպի մանկություն.
Պեք ե նրանց հետ խստություն մարմնի
Յերբ փափկությունը ոգուտ չի տալիս:
Հիշի՛ր տաժըս:

ՈՍՎԱԼԴ

Շատ լավ, տիրուհի:

ԳՈՆԵՐԻԼ

Ասպետներին ել պող դեմք ցույց տվեք.
Ինչ վոր կը լինի, թող լինի, հոգ չե.
Ընկերներիդ ել նույնը պատվիրի.
Յես կամենում եմ մի առիթ փնտռել,
Յեվ պետք ե դտնեմ, վոր լեզուս բանամ:
Քրոջըս խելույն նամակ կը գրեմ,
Վոր նա ել վարվի ձեռն ինչպես վոր յես.
—ձեռք պատրաստեցեք:

(Դուրս են գնում)

ՏԵՍԱՐԱՆ Գ

Մի դահլիճն նույն պալատում

Մտնում ե ՔԵՆՏԸ՝ ծպտյալ

ՔԵՆՏ

Թե կարողանամ ձայնըս ել փոխել
Յեվ առաք մարդու շեշտը ձեռքս ել,
Գուցե իմ բարբի մտադրությունը
Վարենա հասնել այն հաջողության,

Վորի պատճառով դեմքըս ծպտել եմ:
— Արդ, աքսորված Քենտ, յեթե կարող ես
Ծառայել նրան, վոր քեզ պատժել է
(Ախ, յերանի՛ թե այդ քեզ հաջողվեր),
Հայսժամ քո տերը, վորին սիրում ես,
Կարող է տեսնել գործ դրված ջանքերդ:

(Վարսի փոփր. մտնում են Լիբբը, ասպետներ յեղ պալատպետներ)

Լիբ

Մի րոպե չուշացնե՛ք ճաշըս. դնացե՛ք և շուտ պատրաստեցե՛ք:
— Ի՞նչ է, ո՞վ ես դու:

ՔենՏ

Մի մարդ, տե՛ր իմ:

Լիբ

Արհեստդ ի՞նչ է. ի՞նչ ես ուզում մեզնից:

ՔենՏ

Արհեստս այս է— չլինել պակաս, քան ինչ վոր յերևում եմ,
ծառայել հավատարմությամբ նրան, ով վոր ինձ վստահանալ,
տիրել նրան, ով վոր ազնիվ է: Ընկերություն անել նրա հետ, ով վոր
շատ գիտե, քիչ կխոսի. վախենալ դատաստանից, մտքոտել, յերբ
ուրիշ ճար չկա, և ձուկ չուտել *):

Լիբ

Ո՞վ ես դու:

ՔենՏ

Մի շատ աղնվասիրտ մարդ, և այնչափ աղքատ, վորչափ
թագավորը:

*) Յեղիսաբեթ թագուհու ժամանակ, ասում և Ուարդրոտոն, պապական-
ներն իրավամբ կառավարության թշնամի եյին համարվում: Այն տեղից և ծագե-
լալով գավառական առածը. «նա աղնիվ մարդ է և ձուկ չի ուտում»: Այդ նշանա-
կում եր, նա կառավարության բարեկամ է և բարոյական: Այդ ժամանակ ձուկ
ուտել՝ նշանակում եր պապական լինել:

Լիբ

Յեթե դու նույնչափ աղքատ ես՝ ինչպես հպատակ, վոր-
չափ նա՝ ինչպես թագավոր, իրավ վոր շատ աղքատ ես: Ի՞նչ
ես ուզում:

ՔենՏ

Ծառայություն:

Լիբ

Ո՞ւմ կուզեյիր ծառայել:
ՔենՏ

Քեզ:

Լիբ

Մի՞թե ճանաչում ես ինձ, այ մարդ:

ՔենՏ

Վո՛չ, պարո՛ն. բայց քո դեմքի մեջ դու մի բան ունես, վոր
սիրտս ուզում է քեզ իրեն տեր անվանել:

Լիբ

Ի՞նչ է այդ:

ՔենՏ

Իշխանություն:

Լիբ

Ի՞նչ ծառայություններ կարող ես անել:

ՔենՏ

Յեա կարող եմ լավ գաղտնիք պահել, ձի հեծնել, վազել,
աղավաղել մի հետաքրքիր պատմություն, կատարել մի պարզ
պատվեր, համարձակ կերպով, ամեն ինչ. վոր հասարակ մարդիկ
կարող են անել, յես ել կարող եմ. և ամենալավ բանն իմ մեջ՝
փութաջանությունս և:

Լիբ

Քանի՞ տարեկան ես:

ՔԵՆՏ

Վոչ այնչափ յերիտասարդ, պարոն, վոր մի կնոջ յերգելու համար՝ սիրահարվեմ նրան. վոչ ել այնչափ ծեր, վոր խենթանամ նրա վրա վորեկիցե բանի համար: Մեջքիս վրա ունեմ քառասունութ տարի:

ԼԻՐ

Հետեւիւր ինձ. դու ինձ պետք ե ծառայես: Յեթե ճաշից հետո այսքան լավ յերևաս ինձ, յես քեզանից չեմ բաժանվի: Ծանշե՛յ ճանշո՞ւր ե իմ անպիտանը, իմ խեղկատակը— Գնան, իմ խեղկատակիս կանչիւր այստեղ:

(Մտնում ե Ոսկալը)

Հէյ, հէյ, այ մարդ, աղջիկս վերտեղ ե:

ՈՍՎԱԼԴ

Ներեցե՛ք ինձ...

(Դուրս ե գնում)

ԼԻՐ

Ի՞նչ ե ասում այդ մարդը.— յետ կանչեցեք այդ հիմարապիւին:— Ո՞ւր ե իմ ծաղրածուս. հո՛ւ— Կարծես ամբողջ աշխարհը քուն ե մտել:

— Ի՞նչ ե, ո՛ւր ե այդ շունը:

ԱՍՊԵՏ

Տեր իմ, նա ասում ե, վոր ձեր դուստրը առողջ չե:

ԼԻՐ

Ինչո՞ւ այդ թշուառականը յետ չգարձավ, յերբ վոր յես նրան կանչեցի:

ԱՍՊԵՏ

Տեր իմ, նա ինձ ուղղակի պատասխանեց, վոր չի ուզում գալ:

ԼԻՐ

Չի ուղժւմ:

ԱՍՊԵՏ

Տեր իմ, չգիտեմ՝ ինչ կա. բայց ինձ այնպես ե յերևում, վոր ձերդ մեծութունը այժմ չի հյուրասիրված այն սիրալիկ կարդ ու կանոնով, ինչ վոր առաջ. թե ընդհանուր ծառայող-

ներք, թե դուքսը ե թե ձեր դուստրը՝ շատ են պակսեցրել իրենց աղաքս վար ությունից:

ԼԻՐ

Հա՛, կարծում ես:

ԱՍՊԵՏ

Տեր իմ, աղերսում եմ ձեզ, վոր ներեք ինձ, յեթե սխալվում եմ. սակայն իմ անձնվիրությունը չի կարող լուռ մնալ, յերբ վոր խորհում եմ, վոր ձերդ մեծությունը արհամարհված ե:

ԼԻՐ

Դու ինձ հիշեցնում ես մի բան, վոր յես ինքս ել գիտեի եմ. այս վերջերս նկատել եմ մի տեսակ անուշադրություն. բայց ավելի վերագրել եմ այդ իմ սեփական նախանձահույզ գովարանականության, քան թե մի վորոշ գիտավորության ե չար մտքի: Պե՛տք ե ավելի ուշադրությամբ դնեմ... Բայց ձե՛ր ե իմ խեղկատակս. յերկու որ ե, վոր նրան չեմ տեսել:

ԱՍՊԵՏ

Տեր իմ, այն որվանից, վոր մեր կրտսեր տիբուհին գնաց Ֆրանսիա, խեղկատակը շատ հալ ու մաշ ե լինում:

ԼԻՐ

Մի խոսիր այդ մասին. յես ինքս ել եմ նկատել:— Գնան և աստ աղջկանս, վոր ուզում եմ խոսել նրա հետ:— Դու ել գնան և իմ խեղկատակիս ասան, վոր դա այստեղ:

(Դուրս ե Ոսկալը)

Հա՛, դու, պարոն, դու, պարոն, յեկ այստեղ տեսնեմ, յես մարդ:

ՈՍՎԱԼԴ

Իմ տիբուհուս հայրը:

ԼԻՐ

Իմ տիբուհուս հայրը... հա՛, տիբոջ սրիկա ծառայի, չուն:

ՈՍՎԱԼԴ

Յես ձեր ասածներէց վոչ մեկը չեմ, տեր իմ, խնդրեմ ինձ
չերեք:

ԼԻՐ

Համարձակվում ես ակնարկներ փոխանակել ինձ հետ, անզգամ:
(Ձաթկելով նրան)

ՈՍՎԱԼԴ

Յես չեմ թույլ տա, վոր ինձ դարկեք, պարոն.

ՔԵՆՏ

(Մի ափացիով նրան գետին գլորելով)

Վոչ ել դետին գլորել, դժւ, կեղտոտ զնդակ. խաղացող:

ԼԻՐ

Շնորհակալ եմ քեզնից, այ մարդ. դու ինձ ծառայեցիր, և
յես քեզ պետք ե սիրեմ:

ՔԵՆՏ

Հայդե, պարոն, վեր կաց, կորիւր. յես քեզ կսովորեցնեմ
մարդու պատիվը հասկանալ. դժւրս, դժւրս: Յեթե ուզում ես մեկ
անգամ ել հաստափոր հասակդ չափեմ, մնա. յեթե վոչ, դժւրս
կորիւր, դժւրս. գլխիդ մեջ խելք կամ, թե վոչ. շուտ:

ԼԻՐ

Լավ, իմ բարի ծառաս, շնորհակալ եմ քեզնից. ահա ծա-
ռայութեանդ մի կանխավճար...

(Քեմտին փող տալով)

(Մանում ե խեղկատակը)

ԽԵՂԿԱՏԱԿ

Թող յես ել վարձատրեմ դրան. — ահա քեզ իմ խենթի գլխարկը:

ԼԻՐ

Վճրանդ ես, իմ սիրուն չարաճճի, ինչպե՞ս ես:

ԽԵՂԿԱՏԱԿ

(Քեմտին)

Այ մարդ, լավ կանես՝ իմ գլխարկը դնես:

ՔԵՆՏ

Ինչո՞ւ, խենթուկ:

ԽԵՂԿԱՏԱԿ

Նրա համար, վոր պաշտպան ես դուրս յեկել մի շնորհազուրկ
մարդու: Յեթե դու չես կարող ժպտալ դեպի այն կողմ, վերա-
դից քամին փչում ե, դու շուտով հարբուխ կստանաս *): Ահա,
այն իմ գլխանոցը: Վա՛հ, այս մարդն իր աղջկաներից յերկուսին
աբտաքսել ե, և յերրորդին՝ ակամա իր որհնությունն ե ավել-
յեթե դու ուզում ես հետեւել սրան, անպատճառ պետք ե իմ
կարմրակատարս դնես գլխիդ: — Ի՞նչպե՞ս ես, քեմտին: Յերանի՛ թե
յերկու կարմրակատար ունենայի և յերկու դուստր:

ԼԻՐ

Ինչո՞ւ, այ տղա:

ԽԵՂԿԱՏԱԿ

Վարովհետեւ, յեթե յես նրանց տայի իմ բոլոր աստացիւճքը,
դոնե կարմրակատարներս ինձ համար կպահանջի:

(Իր գլխարկը կիքին տալով)

Ահա քեզ իմս, մյուսն ել աղջկաներիցդ մուրա:

ԼԻՐ

Զգու՛յշ, այ տղա, մտրակը...

ԽԵՂԿԱՏԱԿ

Ճշմարտությունը մի շուն ե, վոր պետք ե շնանոցում մա-
նրան մտրակելով սենյակից դուրս կանեն. այն ինչ ափկին բարակը
կարող ե շնթուկել կրակի կողքին և վատ հոտ հանել:

*) Այսինքն՝ յեթե չես կարող քնել սրվա ափրդի մաս, քեզ դուրս
է անեն անից, և քաց ողի մեջ հարբուխ կստանաս:

ԼԻՐ

Ի՞նչ գառն լեզի ինձ համար*):

ԽԵՂԿԱՏԱԿ

(Քենտրոն)

Յեկ, բարեկամ, քեզ մի ճառ ուղարկեցի՞նք:

ԼԻՐ

Պարբերակ:

X

ԽԵՂԿԱՏԱԿ

Լավ ականջ դիր, քեռի:

Քիչ ցույց տուր, շատ ունեցիր,

Քիչ խոսիր, շատ իմացիր.

Ի՞նչ վոր ունես, փոխ մի տա,

Շատ լսիր, քիչ հավատա.

Շատ ձի նստիր, քիչ քայլիր.

Շատ շահիր, քիչ շոայլիր.

Թող առաքի՞նք, հոմանիդ.

Մընձ տանըդ, քո բանիդ.

Յեկ կշահես դրանից

Յերկու տասը՝ քսանից:

ՔԵՆՏ

Այդ վոչինչ է, խեղկատակ:

ԽԵՂԿԱՏԱԿ

Սերենն նման է տնվարձ փաստաբանի խոսքին. դու ինձ վաչինչ չես տվել դրա համար:—Վոչնչից կարձկես մի բան շինել քեռի:

ԼԻՐ

Անշուշտ վոչ, տղա, վոչնչից միայն վոչինչ կարող է շինվել:

*) Moderley կարծում է, Վոչ այս խոսքերն ասելիս Լիրը հիշում է Ոսկաթի անդամկառ վարձուները:

ԽԵՂԿԱՏԱԿ

(Քենտրոն)

Խնդրեմ, ասա սրան, թե իր կալվածների հասույթն ել հենց այդքան է. նա խեղկատակի խոսքին չի ուղուժ հավատալ:

ԼԻՐ

Դու գառն խեղկատակ ես:

ԽԵՂԿԱՏԱԿ

Ով վոր խորհուրդ տվեց քեզ՝

Կալվածներդ պարզես,

Բեր է ինձ մոտ կանգնեցրու,

Կամ նրա տեղ կանգնիր-դու.

Յեկ կտեսնես դու խելույն

Դառն ու քաղցըր ծաղրածուն:

(Ինքն իրեն ցույց տալով)

Ահա մեկը այստեղ է՝

Խայտաճամուկ հաղուստով.

(Լիրին մատնանքը անելով)

Իսկ այն մյուսը այնտեղ է:

ԼԻՐ

Ինձ ել ծաղրածու յես կանչում, այ տղա:

ԽԵՂԿԱՏԱԿ

Ի՞նչ անեմ, բոլոր ուրիշ տխուրանքի բաժանեցիր ուրիշներին, իսկ այդ մեկը քո բնածինն է:

ՔԵՆՏ

Տեք իմ, բոլորովին խենթություն չես այս:

ԽԵՂԿԱՏԱԿ

Վաչ, յես իմ հողիս. լորդերը է մեծամեծները չեն ուղում խենթությունը բոլորովին ինձ թողնել: Յեթի յես դրա մեհաշնորհ:

ունենայի, նրանք ել մի մաս կպահանջեյին *) . դեռ տիկիներն
եւ կան, վորոնք չեն թույլ տա, վոր խենթութեան ամբողջ մենա-
շնորհը ինձ վերապահեմ . նրանք ել մի բան պետք ե խլեն: — Մի
ձու տեւր ինձ, քեզի, և յես քեզ կտամ յերկու թագ:

ԼԻՐ

Ի՞նչ յերկու թագեր են դրանք:

ԽԵՂԿԱՏԱԿ

Ի՞նչ. յերբոր ձուն միջից յերկու անեմ և միջուկն ուտեմ,
կմնան ձվի կեղևի յերկու թագերը: Յերբ վոր դու թագդ միջից
յերկու արեցիր, և յերկու մասերն ել բաշխեցիր, դու քո եղբ շա-
լակեցիր ցեխի մեջ: Շատ քիչ խելք մնաց ճաղատ թագիդ մեջ,
յերբ քո վոսկի թագդ ուրիշներին տվիր: Յեթե յես ինձ նման
եմ խոսում, թող ով վոր ճիշտ համարի, նա մտրակվի **):

(Յերգեղով)

Խենթերի համար այս տարին չար ե **),
Յերբ ամեն խելոք այժմ հիմար ե,
Չը դիտեն խելքը ինչպես գործածել,
Նըրանք խենթերի կապիկն են դարձել:

ԼԻՐ

Յերբվանից ե, վոր այսպես առատ ես յերգերով, այ տղա:

ԽԵՂԿԱՏԱԿ

Այն որվանից, քեռի վոր դու աղջիկներիդ քեզ մայր շե-
նեցիր, վորովհետեւ այն որվանից, վոր դու դավադանդ տվիր
նրանց ձեռքը, և քո վարտիքդ ցած քաշեցիր,

*) Սա մի հեղինություն ե այն մենաշնորհների, վոր Յեղիսարեթ թա-
գուհին և Հակոբ Լ-ը շաղկապեցին իրենց սիրած մարդկանց, և այն կոշտա-
կերություն, վոր պալատականները և լորդերը ցույց եյին տալիս, բաժին
պահանջելով այդ մենաշնորհներից:

Warburton.

**) Յեթե յես ինձ նման, այսինքն խենթի պես եմ խոսում, ինձ մի
մտրակեք, ալ թող մտրակվի այժմ արդը, վոր եմ խոսքերիս ճշմարտությունը
հասկանում ե, այն ե՞ թագավորն ինքը:

**) Ըստ Զոհնոսի՝ նշանակում ե այս տարի խենթերը հարդ չունեն,
վարովհետեւ ըստ խելոքներն ել հիմարացել են:

(Յերգեղով)

Նըրանք լացին ցնծութունից,
Յես յերգեցի տրամությունից,
Յերբ վոր տեսա, վոր մի արքա
Աչքախրվուկ պետք ե խաղա
Յեւ խենթերի
Կարգըն անցնի:

Խնդրում եմ, քեռի, մի ուսուցիչ պահիր, վոր քո խեղ-
կատակին սուտ խոսել սովորեցնի. յես շատ փափագ ունեմ
ստախոսություն սովորելու:

ԼԻՐ

Յեթե սուտ խոսես, այ տղա, մտրակ կուտես:

ԽԵՂԿԱՏԱԿ

Յես զարմանում եմ, վոր դու և աղջիկներդ ազգակա՞ն եք .
նրանք ուզում են ինձ ծեծել, վորովհետեւ ճշմարիտ եմ խոսում, իսկ
դու ուզում ես ինձ ծեծել, յերբ վոր սուտ եմ խոսում. յերբեմն
եւ ինձ ծեծում են լուռ մնալուս համար: Ինչ վոր լինեյի, հոգ չե,
բայց խեղկատակ չլինեյի. այսու հանդերձ յես չեյի ուզի քո տեղ
լինել, քեռի: Դու քո խելքդ միջից կտրեցիր և մեջտեղը վոչինչ
չթողիր: Ահա կտրվածներից մեկը դալիս ե:

(Մտնում ե Գաներիք)

ԼԻՐ

Ի՞նչպես ես, աղջիկս. ինչո՞ւ յես կապել այդ ճակատանոցը,
ի՞նձ այնպես ե թվում, վոր այս վերջերս շատ թխպած ես:

ԽԵՂԿԱՏԱԿ

Քո բանդ այն ժամանակ լավ եր, յերբ կարիք չունեյիր
հոգս անելու նրա դեմքի թխպելու մասին. այժմ դու մի գերո յես
առանց թվանշանի. յես քեզնից լավ եմ. յես գոնե մի խեղկատակ
եմ, իսկ դու՝ վոչինչ: — Գաներիք. Այն, արևս վկա. պետք ե լեզուս
զսպեմ. դեմքդ այդպես ե հրամայում ինձ, թեև վոչինչ չես ասում.
հը՛մ, հը՛մ.

Ով վոր փշրանք չը պահի,
Կամ չոր հացից ձանձրանա,
Կը դա մի որ, յերբ քաղցած
Նըրանց կարոտ կը մընա:

(Լիբիմ ցույց տալով)

Ահա մի փուլը սխեմի փոփոխել *):

ԳՈՆԵՐԻԼ

Վոչ միայն, տեր իմ, ձեր այս լիրբ խնայքը,
 Այլ ամբարտաւան ձեր շքեղութիւնը,
 Յուրաքանչյուր վոք՝ ամեն մի բոլոր
 Տրտունջ եւ անուամբ եւ կոխով եւ սարքում,
 Յեւ անտանելի բիրտ խռովութիւններ:
 Տեր, կարծում եյի, վոր յերբ ձեզ հայտնեմ,
 Դուք այդ բաներին իսկույն ճար կանեք.
 Բայց այն բոլորից, ինչ վոր վերջերս
 Ինքներդ խոսել եւ կամ արել եք,
 Շատ վախենում եմ, վոր դուք ինքներդ եք
 Ձեր թուլութիւնով յամբ նըրանց պաշտպանում
 Յեւ քաջալերում: Յեթե այդ ճիշտ ե,
 Ձեր այդ հանցանքը դերձ չե պարտաւիրի,
 Յեւ վոչ եւ ճարը շատ կհապաղի:
 Այն միջոցները (վորոնց դիտումն ե
 Առողջ պետութեան խաղաղութիւնը),
 Գուցե ձեր աչքին նախատինք թվան,
 Յեւ այլ դեպքի մեջ ամոթ կըլնեյին,
 Բայց այժմ հարկը դըրանց կանվանի
 Նախադրութիւն:

ԽԵՂԿԱՏԱԿ

Տեսնում ես, քեռի

Ծիտն այնչափ յերկար պահեց կիվին,

Վոր նըրա ձագերը գլուխը կծեցին:

Այսպէս ճրագը հանգավ եւ մենք մնացինք մութի մեջ:

ԼԻՐ

Մեր աղջիկն ես դու:

*) Թագավորի արտաքինը մնացել ե, իսկ Թագավորութեան բուն մասը, ներքինը, անհետացել ե:

Sohnsen.

ԳՈՆԵՐԻԼ

Բաժական ե՛ տէր.

Յես ցանկանում եմ, վոր դուք գործ դընեք

Ձեր այն լրջամիտ իմաստութիւնը,

Վորով, դիտեմ յես, դուք ոժտւած եք.

Յեւ ձեռք վերցնեք այդ վարմունքներից,

Վորոնք վերջերս ձեզ փոխել են

Ձեր ճիշտ յեղածից:

ԽԵՂԿԱՏԱԿ

Սկանակն եւ կարող ե իմանալ, թե յերբեք լինում ե, վոր կառքն ե ձիուն քաշում:—Ճի՛վ, ճը՛կ, քեզ սիրում եմ *):

ԼԻՐ

Կո՛ւ այստեղ մի վոք, վոր ինձ ճանաչի.

Վոչ, սա Լիրը չե, վոչ, միթե Լիրը

Այսպէս ե քայլում, այսպէս ե խոսում.

Ո՛ւր են աչքերը.

Կամ նըրա խելքը արկարանում ե

Յեւ կամ թմրել ե դատողութիւնը.

—Հա, արթնն ե նա. վոչ, անհրնար ե.

Ո՛վ կարող ե ինձ ասել, թե ո՛վ եմ:

ԽԵՂԿԱՏԱԿ

Լիրի ստվերը:

ԼԻՐ

Ուզում եմ իմանալ, վորովհետեւ իմ վեհապետութեան նշանները, իմացականութիւնը ե դատողութիւնը կարող եյին պատրել ինձ, ե կարծել տալ վոր աղջիկներ ունեմ:

ԽԵՂԿԱՏԱԿ

Վորոնք կամենում են ձեզ դարձնել մի հնազանդ հայր:

ԼԻՐ

Ձեր անունն ի՞նչ ե, գեղեցիկ արիկին:

*) Ստիվենսն ասում ե, վոր վերջին նախադասութիւնը մի հին յեղեղ հանգերդն ե յեղել. հակառակ արված շատ բացատրութիւնների՝ սա եւ մութ մնացած տողերից ե: Մ. Թ.

ԳՈՆԵՐԻԼ

Ձեր այս դարձացքն ել, տեր իմ, նըման ե
 Ձեր մյուս նորահնար անհեթեթությանց,
 Աղաչում եմ ձեզ, վոր լավ հասկանաք
 Իմ ասածներըս: Դուք ծեր լինելով
 Յեվ պատկառելի՝ նաև խելացի
 Պետք ե լինեցիք: Այստեղ դուք ունեք
 Հարյուր թիկնապահ, վորոնք բոլորը
 Այնչափ խռովահույզ, լիրբ և հանդուգն են,
 Վոր դարձընել են մեր արքունիքը
 Իրենց բարքերի ապականությամբ
 Մի անկարգ պանդուկ: Վորկրամոլություն
 Յեվ լկտությունը դարձնում են նըրան
 Ավելի նըման մի պիղծ գինետան,
 Յեվ բողանոցի, քան թե հարգելի
 Մի արքունիքի: Մոլությունն անգամ
 Մի անմիջական դարման ե խնդրում:
 Լեցեք ուրեմն իմ աղաչանքըս:
 Քանզի նա, վոր ալժամ ձեզնից խնդրում ե,
 Յեթե չընդունեք, բռնությամբ կառնի:
 Մի քիչ պակսեցրեք ձեր շքեքումը,
 Յեվ ֆաղաթները, վորոնց կը պահեք,
 Այնպիսի մարդիկ պիտ լինեն նըրանք,
 Վոր պատիվ բերեն ձեր ծերությանը
 Յեվ կարողանան ճանաչել թե ձեր,
 Թե իրենց հարգը:

ԼԻՐ

Դըժոխք և դեեր.

Քամեցեք ձիերս. կանչեցեք խուժըս:
 — Այլասեռված բիճ. յես քեզ այլևս
 Նեղություն չեմ տա: Ինձ դեռ մընում ե
 Մի ուրիշ դուստր ել:

ԳՈՆԵՐԻԼ

Դուք ծեծ եք տալիս իմ ծառաներիս,
 Յեվ ձեր սինըքոր, անկարգ խուժանը
 Մառայեցնում ե այնպիսի մարդկանց,
 Վորոնք իրենցից ավելի բարձր են:

(Մտնում ե Ալբանի)

ԼԻՐ

Վայ դա այն մարդուն, վոր ուշ ե գղջում:
 (Ալբանի)
 Այդ դժւք եք, պարոն. ա՛յդ ե ձեր կամքը.
 Խոսեցեք, պարոն:—Ձիերս պատրաստ են:
 Ապրախտություն. ժայռափրտ դու դե,
 Ավելի անեղի քան ծովի հրեշ,
 Յերբ վոր մտնում ես մի զավակի մեջ:

ԱԼԲԱՆԻ

Խնդրում եմ, պարոն, համբերո՛ղ յեղեք:

ԼԻՐ

Ո՛գ զազրելի ցին, դու սուտ ես խոսում.
 Իմ ծառաներըս ընտիր մարդիկ են,
 Ամենից ազնիվ հատկություններով,
 Վորոնք քաջ գիտեն պարտք ու պատշաճի
 Բոլոր հարկերը, վորոնք պահում են
 Ամենագգույշ ինքնահարգությամբ
 Իրենց անունի ամբիժ պատիվը:
 Ոհ, չնչին հանցանք. ի՛նչպիսի այդչափ գաբշ
 Յերևացիր դու Կորդելիայի մեջ,
 Վոր գելոցի պես՝ իմ բուռթյան կաղմը
 Դու գ լուրեցիր, տեղից խախտեցիր.
 Վոր դուրս քաշեցիր իմ սրտիս միջից
 Իր բոլոր սերը, և մաղձ լցրեցիր:

(Զարկալով գլխի)

Ո՛հ Լի՛ր, Լի՛ր, Լի՛ր, զմրկ դու այս դրան,
 Վոր ներս ընդունեց քո խենթությունը,
 Յեվ դուրս վնդեց թանկագին խելքդ:

(Իր շփամբի)

Դնանք, գնանք, ընկերներ:

ԱԼԲԱՆԻ

Տեր, յես անմեղ եմ.

Ձը գիտեմ՝ ինչ ե ձեզ այդպիս հուզել:

Կարելի չե, տեր...—Լսիր, բնություն, լսիր
Սիրելի՛ գիտնէի, լսիր աղերսս.

Թե միտք ունեցիր այս արարածին
Բեզմաւոր դարձնել՝ փոխիր քո կամքը,

Յեզ ամլություն բեր ներս արգանդին:

Զորացրու ներս ծընընդարանը.

Յեզ թող չը ծընվի ներս գարշ մարմնից

Վոչ մի յերեխա, վոր ներսն պատվի:

Թե պետք ե հղանա՝ ներս ծընունդը

Մաղձից ստեղծիր, վորպեսզի ապրի

Յեզ պիղծ, հրեշային մի տանջանք գառնա

Յեզ ներսն տանջի: Կնճիռներ դրոշմի՛

Իր մոր մատղահաս ճակատի վըրա...

Հոսուն արցունքով ջրանցքներ բանա

Թըշերի վրա. ներս մայրական

Բոլոր լերախտիքն ու յերկունքները

Ծաղր ու ծանակի առարկա շինի,

Վորպեսզի զգա, թե վճռաւ սուր ե

Ոճի ժանիքից՝ մի յերախտամոռ

Զաւակ ունենալ:—Գնանք, հեռանանք:

(Գուրս ե գնում)

ԱԼԲԱՆԻ

Ո՛վ դու աստվածներ, վորոնց պաշտում ենք,
Ի՞նչ ե պատճառը այս բոլոր բանի:

ԳՈՆԵՐԻԼ

Մի տանջիր դու քեզ պատճառի համար.

Թող ներս մաղձին այն ասպարեզը,

Վոր զառանցանքը տալիս ե ներսն:

(Լիբը կրկին ներս ե գալիս)

ԼԻՐ

Ի՛նչ, հիսուն հոգի իմ ասպետներից,

Միակ հարվածով, տասնունէինգ որում:

ԱԼԲԱՆԻ

Տե՛ր, ի՛նչ ե պատահել:

ԼԻՐ

Կասեմ քեզ:

(Արտասվում ե)

(Գնալիս)

Մահ ե կյանք

Տե՛ս ամաչում եմ, վոր դու կարող ես

Տնցել այս կերպով իմ այրությունըս.

Այս տաք արցունքներս, վոր դուրս են ցայտում

Կամքիս հակառակ, քեզ լինեն բաժին:

Խորշակ, մառախուղ հարվածեն թող քեզ.

Թող հոր անեծքի անբույժ խոցերը

Գատառեն ամեն զգայարանքդ:

—Ոհ, հե՛ք ծեր աչքեր. թե այս պատճառով

Արտասվեք կրկին՝ յես ձեզ կը փորեն

Յեզ վայր կը ձգեմ այն ջրերի հետ,

Վոր դուք թափում եք, վոր տիղմը թըջեք:

—Հա, միթե բանը այդտեղ ե հասել:

—Թող այդպես լինի:—

—Բայց յես ունեմ ուրիշ դուստր ել,

Վոր, վստահ եմ յես, բարի յե եզթած.

Տներ վոր նա լըսի քո այս արարքը՝

Իր յեղունգներով նա կհոշոտի

Գայլային դեմքդ, ե դու կը տեսնես,

Վոր յես կը ստանամ կրկին այն դիրքը,

Վոր քո կարծիքով ժխտել եմ ընդմիջտ.

Կը տեսնես. վստահ կանց:

(Լիբը, Քեմուր յեզ հետեւորդները դուրս
են գնում)

ԳՈՆԵՐԻԼ

Տեսնե՛ք այդ, տեր իմ:

ԱԼԲԱՆԻ

Վերջապի ել յես ձեզ ջերմ սրտով սիրեմ,

Գոնե՛րիլ, չեմ կարող աշատու լինել...

ԳՈՆԵՐԻԼ

Խնդրեմ՝ հանգիստ կաց:— Հէյ, Ոսկանդ, մեր ես:

(Խնդկատակիմ)

Դու ել, այ պարոն. վոչ խենթ, այլ խարդախ,
Հետեիր քո տիրոջ:

ԽԵՂԿԱՏԱԿ

Քեռի Լիբր, քեռի Լիբր, մի քիչ սպասիր և խենթին ել հետդ:

ապր:

Թափարդ ընկած մի աղվես,

Յեվ մի աղջիկ սըրա պես

Շուտ կեխեկին կախաղան,

Թե այս խատուտ գլխարկով

Յես գընեյի մի պարան:

Խենթն ել գնաց տիրոջ քով:

(Դուրս և գնում)

ԳՈՆԵՐԻԼ

Այս վարդն ինձ տըվեց մի լավ գաղափար ...

— Ի՞նչ. հարյուր ասպետ. խոհեմության ե.

Յեվ վրտանգ չըկած՝ թույլ տալ, վոր պահի

Հարյուր թիկնապահ, սպառազինված:

Այն, վորպեսզի ամեն յիրադի,

Ամեն մի ցնորքի, զըմահաճույքի,

Չնչին տրտունջի, գանգատի համար

Խելքին փըչածը նըրանց ուժերով

Գործադրության տան. և մեր կյանքն անդամ

Նըրա հաճույքից կախում ունենան:

— Ոսկանդ, ինձ նայիր:

ԱԼԲԱՆԻ

Յեվ սակայն իզուր

Չափազանցում ես գուցե յերկյուղդ:

ԳՈՆԵՐԻԼ

Լավագույն ե այդ, քան վստահություն,

Թող առաջն առնեմ այն վտանգներին,

Վորոնցից վախ կա, վոչ թե վախենամ

Վոր վտանգները իմ առաջն առնեն:

Յես նըրա սիրտը լավ եմ ճանաչում.

Ինչ վոր բարբառեց, գրեցի քրոջը.

Թե քույրըս ուզի ընդունել նըրան

Յեվ նըրա հարյուր թիկնապահներին,

Յերբ ցույց եմ տվել բոլոր ֆլախները ...

— Ի՞նչ յեղավ, Ոսկանդ:

(Մտնում և Ոսկանդը)

Արդյոք գըրեցիր

Քրոջըս նամակը:

ՈՍՎԱԼԴ

Այն, տիրուհի:

ԳՈՆԵՐԻԼ

Ա՛յ քեզ հետ մարդիկ և շուտ ձի նստիր,

Պատմիր մանրամասն իմ յերկյուղները.

Յեվ քո կողմից ել ապացույցներ տուր,

Վորոնք ավելի համոզիչ լինեն,

Շուտ գընա, շուտ յեկ:

(Ոսկանդը դուրս և գնում)

ԱԼԲԱՆԻ

Վո՛չ, վո՛չ, իմ լորդա,

Վո՛չ, ձեր կաթնահամ այդ հեզությունը

Յեվ ձեր ընթացքը յես չեմ պարսավում,

Բայց, ներեցե՛ք ինձ, ավելի տեղիք կա

Ձեզ կշտամբելու իբրև անխոհեմ,

Քան թե գովելու ձեր մեղմությունը:

ԱԼԲԱՆԻ

Թե ձեր աչքերը վորչափ սրատես են՝

Ձեմ կարող ասել: Հաճախ ձգտելով

Ինչ լավագույնը՝ կորցնում եմք լավը:

ԳՈՆԵՐԻԼ

Ի՞նչ, ուրեմն ...

ԱԼԲԱՆԻ

Կա՛վ, լա՛վ, գործը ցույց կտա:

(Դուք եմ գնում)

ՏԵՍԱՐԱՆ Ե

Ալբանիի ամենի մեջ մի բա՛կ

Մանուկ եմ ԼԻՐԸ, ԲԵՆՏԸ և ԽԵՂԿԱՏԱԿԸ

Դու առաջ անցիր և այս նամակը տար Գլխաւեր *): Բո իմացածներէդ վոչինչ մի հայտնիր իմ աղջկան, բացի միայն նրանից, ինչ վոր պետք է պատասխանես նրա հարցումներին իմ նամակի վերաբերմամբ: Յեթի շատ շտապ չերթաս, յես քեզանից առաջ այնտեղ կլինեմ:

ԲԵՆՏ

Տեր իմ, յես քուն չեմ մտնի, մինչև ձեր նամակը չհասնեմ:

ԽԵՂԿԱՏԱԿ

Յեթի մարդու ուղիղը կրունկների մեջ լինել, ձմայթ **)

չեր ունենա:

ԼԻՐ

Այո, աղա:

ԽԵՂԿԱՏԱԿ

Քրեմն, խնդրեմ, դու ուրախ կաց. քո խելքը յերբեք հողա-
թափի պետք չի ունենա:

*) Յեք վոր թագավորն ոտում ե՛ւ «Այս նամակը տար Գլխաւեր», նա ուզում է ասել Գլխաւեր քաղաքը, ուր, Շեքսպիրի ստեղծով, բնակվում էյին Կոբնվալի գուշոր և Ռեգանը: Շեքսպիրը, այս քաղաքը վերջնական վերջին նրանց բնակավայր, կամեցել է համանուն դարձնել նրանց ղեկավարին այցը Դրաւերի գլխակը, այդ գլխակը նույնանուն քաղաքի շրջակայքում գտնվելու պատճառով: Կոմսերը հին ժամանակներում սովորութեամբ ունեւէին մի կալված ունենալ այն դավաճանների մեջ, վիրանց անվանական տիրութուն էյին կրում և առհասարակ բնակվում էյին նույն կոմսութեան մեջ:

Capell.

**) Վտաքերի և ձեռքերի ուսուցը և ցավ՝ ձմեռային ցրտից: Մ. Թ.

ԼԻՐ

Հա՛, հա՛, հա՛:

ԽԵՂԿԱՏԱԿ

Կտեսնես, վոր մյուս աղջիկդ ել քեզ հետ քաղցրութեամբ կվարվի, վորովհետեւ, թեեւ նա այնքան նման է սրան, վորչափ մի վայրի խնձոր մի ընտանի խնձորի, այսուհանդերձ, յես կա-
րո՛ղ եմ ասել, ինչ վոր կարող եմ ասել:

ԼԻՐ

Կա՛վ, թնչ կարող ես ասել, աղա:

ԽԵՂԿԱՏԱԿ

Նրա համն ել այնքան նման կլինի սրա համին, ղորչափ մի վայրենի խնձոր մի վայրենի խնձորի: Կարող ես ասել, թե ինչու մարդու քիթը իր գեմքի մեջտեղն է դրված:

ԼԻՐ

Վո՛չ:

ԽԵՂԿԱՏԱԿ

Նրա համար, վոր աչքերից մեկը քիթ այս կողմը լինի, մյուսը՝ այն կողմը. վորպեսզի, յեթե մարդ չկարողանա մի բանի հոտն առնել, գոնե կարողանա տեսնել:

ԼԻՐ

(Մտազրադ)

Յես նըրա*) դեմ անիրավութեան գործեցի...

ԽԵՂԿԱՏԱԿ

Կարող ես ասել, թե վտարենն ինչպես է շինում իր խեցին:

ԼԻՐ

Վո՛չ:

ԽԵՂԿԱՏԱԿ

Յես ել չեմ կարող, բայց կարող եմ ասել, թե ինչու խխունջը մի տուն ունի:

*) Կորելիայի մասին է մտածում:

ԼԻՐ

Խնչմու:

ԽԵՂԿԱՏԱԿ

Նրա համար, վոր գլուխը դնի նրա մեջ, և վոչ թե նրա համար, վոր տա յուր աղջիկներին, և իր յեղջյուրները անպատսպար թողնի:

ԼԻՐ

(Մտախոհ)

Յեա պետք է մոռանամ իմ բնությունը: Այսքան գորովակից մի հայր:— Ձիերս պատրմատ են:

ԽԵՂԿԱՏԱԿ

Քո ավանակներդ գնացել են ձիերդ բերեն:— Այն պատճառը, թե ինչո՞ւ լոթն աստղերը յոթից ավելի չեն, մի սքանչելի պատճառ է:

ԼԻՐ

Վարդգեստե ութը հատ չէ՞ն:

ԽԵՂԿԱՏԱԿ

Ճիշտ, դու մի լավ խեղկատակ կարող ես լինել:

ԼԻՐ

(Մտախոհ)

Բռնի յետ առնել... ո՞հ, հրեշային ապերախտություն:

ԽԵՂԿԱՏԱԿ

Յեթե դու իմ խեղկատակը լինեյիր, քեռի, յես քեզ ծեծել կտայի, վոր ժամանակից առաջ ես ծերացել:

ԼԻՐ

Խնչմու:

ԽԵՂԿԱՏԱԿ

Դու ծերացած չպետք է լինեյիր, խելքի հասնելուց առաջ:

ԼԻՐ

Ո՛հ, գըթած յերկինք, մի թույլ տա դու ինձ խելապար գառնալ, համբերություն տուր: Ձեմ ուզում խենթանալ:

(Մտնում է մի ազնվական)

— Ձիերս պատրմատ են:

ԱԶՆՎԱԿԱՆ

Պատրաստ են, տէր իմ:

ԼԻՐ

Յեկ, աղաս, գընանք *):

(Դուրս է գնում)

*) Արեթ հետո խեղկատակն արաստանում է մի վերին աստիճանի անձ միտ և անբարոյական վտանավոր, վոր Ստեփանի և Նրանից հետո բոլոր մյուս նշանավոր կրթականների կարծիքով Շեքսպիրի դրածը չէ, այլ մի դժբախտ պեղծ է ավելացրած լինի. այս պատճառով թարգմանիչը հարմար է դրածը բաց թողնել այդ: Գ. Ք.

4
ԱՐԱՐՎԱԾ ՅԵՐՐՈՐԳ

ՏԵՍԱՐԱՆ Ա.

Մի ամբողջ, վոր պատկանում է Գլուսերի դուքսին

Մանուկ են եղբորս և ԿՈՒՐԱՆԸ

հանդիպելով միմյանց

ԵԴՄՈՆԴ

Վաղջույն քեզ, Կուրան:

ԿՈՒՐԱՆ

Յեղ ձեզ պարհ: Յես ձեր հոր մոտ եյի, և նրան տեղեկություն
ազի, վոր Կորնվալի դուքսը և Ռեգանը, նրա դքսուհին, այս
գիշեր նրա մոտ կլինեն:

ԵԴՄՈՆԴ

Այդ ի՞նչ բան է:

ԿՈՒՐԱՆ

Ճիշտ վոր չգիտեմ. դուք լսած կլինեք տարածված լուրերը.
ուզում եմ ասել այն լուրերը, վոր զեռ փսիսալով են ասում
միմյանց ականջի:

ԵԴՄՈՆԴ

Վոչինչ չեմ լսած, ասած խնդրեմ՝ ի՞նչ լուրեր են:

ԿՈՒՐԱՆ

Չեք լսել, վոր Կորնվալի և Ալբանի դուքսերի մեջ, հավա-
նական է, վոր պատերազմ բացվի:

Վոչ մի բառ:

ԿՈՒՐԱՆ

Լավ, շուտով հիսեր: Մնաք բարով, պարոն:

(Դուք և գնում)

ԵՂՄՈՆԴ

Դուքն ախտեղ այս գիշեր. շատ լավ, սքանչելի
Սա ինքն և հյուսվում իմ վստահանիս մեջ.
Հայրս մարդ և զրեւ յեղբորս բռնելու.
Յես մի գեր ունեմ,—շատ փափուկ մի գեր,
Վոր պետք և խաղամ:—Փուլթ և բախտ, ի գործ:

(Կանչելով)

—Յեղբայր, ինձ նայիր. բան պետք և ասեմ.
—Ցած յեկէ յեղբայր... հւր ես...

(Մտնում և նշգարք)

Հայրս քեզ և փնտռում.

—Ո՛հ, փախիր ախտեղից. տեղդ իմացել են:
Գիշերը քեզ այժմ նպաստավոր և.
Մթնի բան ևս ասել հորնավալի դեմ.

Նա հենց այս գիշեր գալիս և ախտեղ,
Յեւ շատ շտապով, Ռեզանն և իր հետ:
Վոչինչ չես ասել ի նպաստ նրա՝
Ալբանիի դեմ: Միտ բեր:

ԵՂՄՈՆԴ

Վոչ մի բառ:

ԵՂՄՈՆԴ

Վտքի ձայն յեկավ, հայրըս գալիս և,
Ներիր... բայց գործս կեղծելու համար՝
Հարկադրված եմ սուր քաշել վերադ:

Դու ևլ սուր քաշիր և այնպես ցույց տուր,
Վոր պաշտպանվում ես: Հի՛մա նահանջիր:
(Ձայնը բարձրացնելով)
Անձնատուր յեղիր... յեկ իմ հոր առաջ.
—Ոհո. ճրագ բերեք:

(Ցած)

Փախիր դու, յեղբայր:

(Բարձր)

Ձահեր, ջահեր, բերեք:

(Ցած)

Լավ, զընտա բարով:

(Նշգարք դուք և գնում)

Յերե ինքս ինձնից քիչ արյուն հանեմ,
Այդ կարծել կտա, վոր խիտ եմ կուլեր:

(Ինքն իրեն վերադարձնելով)

Գինովներ եմ տեսել, վոր իբրեւ կատակ
Սրանից ավելի հիասել են իրենց *):

(Բարձր)

Հայր, հայր, կանգնիր, կանգնիր, ոգնու-
թյուն չը կա:

(Մտնում ևն Դուստրը յիւ ծառաներ՝ փախելով)

ԳԼՈՍՏԵՐ

Ի՞նչ յեղավ, Նգմո՛նդ, հւր և այդ սրիկան:

ԵՂՄՈՆԴ

Ահա ախտեղ եր, այս մըթության մեջ,
Սուրը դուրս քաշած և մըմնջում եր:

*) Շատ հին անգլիական դրբերից կարելի յի վկայություն բերել
այնպիսի դեպքերի, յերբ յերկապարդ սիրահարներ դաշույնով վերադարձել են
իրենց թեվը, վոր կարողանան իրենց արյունով խմել իրենց սիրունու կե-
նացը:
Collier.

Ձոր կախարդանքներ *), խնդրելով լուսնից,
Վոր նըրա պաշտպան տիրուհին լինի:

ԳԼՈՍՏԵՐ

Բայց վճրտեղ և այժմ:

ԵԴՄՈՆԴ

Նայեցեք, տեր իմ,

Արյուն և գալիս:

ԳԼՈՍՏԵՐ

Ո՞ւր և այդ սրիկան:

ԵԴՄՈՆԴ

Այս կողմ**) փախավ, տեր, յերբ վոչ մի կերպով
չկարողացավ...

ԳԼՈՍՏԵՐ

(Եր մարդկանց)

Բռնեցեք նրան,

Վազեք յետիվից...

(Ծառանքը վազում են)

«Վոչ մի կերպով» լինչ:

ԵԴՄՈՆԴ

Համոզել, վոր յես ձեզ սպանեյի,
Բայց յես մերժելով՝ նրան ասացի,
Վոր վրեժխնդիր աստվածոթյունքը
Ուղղում են իրենց բոլոր շաթերը
Հայրասպանի դեմ. նըրան խոսեցի
Այն բազմապատիկ սերտ կապերի վրա,
Վորոնք կապում են վորդուն իր հոր հետ.

*) Եղմունդը լավ հնարք և գտել Գլոստերին զայրացնելու համար, քանի
վոր նա նախապաշարված էր այդ կողմից, ինչպես յերեվում և նախընթաց ան-
աբանից: Warburton

**) Մի սխալ կողմ պետք և ցույց տա: Capell

Մեկ խոսքով, տեր իմ, յերբ վոր նա տեսավ
Վորչափ զգվանքով հակառակ եյի
Նըրա հրեշավոր գիտավորության,
Կատաղի շարժամբ, մերկացված սըրով
Անպաշտպան անձիս դեմ հարձակում գործեց,
Յեվ թերա խոցեց. բայց յերբ վոր տեսավ,
Վոր խիզախ վոգիս, իր դատի մեջ խորթա,
Դիմադիր յեղավ, կամ թե սարսափած
Այն աղաղակից, վոր արձակեցի,
Հանկարծ խույս տրվավ:

ԳԼՈՍՏԵՐ

Թող հեռու փախչի,

Նա այս յերկրի մեջ չի կարող խույս տալ,
Յեվ բռնվի թե չե, պետք և շնորհ տանի:
—Դուքսն, ազնիվ տերես, պետ և պաշտպանըս,
Այս գիշեր գալիս և, և հանուն նըրա
Մի ընդհանուր ազգ կը հրատարակեմ,
Վոր ով վոր գտնի այդ մարդասպանին
Յեվ բերի նըրան գեպի կախաղան,
Արժան կը լինի մեր վարձատրության,
Իսկ ով վոր ծածկի, վճիռը մահ և:

ԵԴՄՈՆԴ

Յերբ ջանք արեցի համոզել նըրան,
Վոր նա հրաժարվի իր նպատակից,
Յեվ տեսա, վոր նա անդդվելի յե,
Շատ խիստ խոսքերով յես սպանացի
Իր գավը հայտնեի: Նա պատասխանեց.
«Դու, անժառանգ բիճ, միթե կարծում ես,
Վոր յերբ յես ստեմ քո ասածները,—
Բո արժանիքը, անկեղծությունը,
Անվնաս խոսքերը կարող կը լինեն
Հավատ ներշնչել դեպի խոսքերըդ.
Վնչ, յերբ ուրանամ, (ինչպես վոր կանեմ),
Յեթե գիրս անգամ իբրև փաստ բերես,
Յես այդ բոլորը վերագրել կը տամ
Գո գավազրության, մեքենայությանց
Յեվ քո անխճյալ նենգություններդ.

Տխմար կլինի ամբողջ աշխարհը,
Թե չը հավատա, վոր իմ մահվանից
Գո ակընկալած մեծ ոգուտները
Խիստ բեղմնավոր, դորեղ խթան են,
Վոր իմ մահը քեզ ցանկալի դարձնեն»:

(Փողեր Յերսից)

ԳԼՈՍՏԵՐ

Ո՛հ, դու հրեշավոր, կարծրացած սրիկա,
Ուզում ե ուրեմն նամակն ուրտնանի,
—Նա ինձնից չի ծնվիլ:

(Փողեր)

Սը՛ս,—դուքսի փողերը՛.
Ձը գիտեմ թե նա ինչու յե դալիս:
—Պետք է փակել տամ նավահանգիստքը,
Ձը պետք է թույլ տամ այդ սրիկան փախչի,
Պետք է դուքսը ինձ այդ շընորհն անի.
Բայց պետք է նաև նըրա պատկերը
Ուղարկեմ ամեն կողմ, վոր ամենայն վոր
Այս պետության մեջ ճանաչի նըրան.
Իսկ դու, իմ ազնիվ բընական *) զավակ,
Յես ճար կը գտնեմ քեզ իմ կալվածիս
Ժառանգն անելու **):

(Մտնում են Կոբնովալը, Ռե-
գանը յեղ սպասավորներ)

ԿՈՐՆՎԱԼ

Այդ ի՛նչ բաներ են,
Ազնիվ բարեկամ. հաղիվ տեղ հասա,
(Այսինքն, հենց այժմ) և տարորինակ
Լուրեր լսեցի:

*) Այս բառը՝ «բնական», մեծ ճարտարությամբ գործ է անվել այստեղ
քերական մտքով, նախնիքի հակադիր «հրեշավոր, անբնական» բառի, և ապա,
քերական հակադիր «ոքինավոր» բառի:

Studson.

**) Այսինքն՝ հակառակ սպորինի զավակ լինելուդ, յես մի միջոց կը-
տանեմ՝ քեզ իմ որինավոր ժառանգը նշանակելու. Ծ. Թ.

ՌԵԳԱՆ

Յեթե այդ ճիշտ է՝
Վորեն պատիժ այդ հանցավորին
Անբավարար ե: — Ի՞նչպես ե կոմսը:

ԳԼՈՍՏԵՐ

Ա՛խ, տիկին, իմ խեղճ ծերունի սիրտըս
Ճայթել ե, ճայթել:

ՌԵԳԱՆ

Ի՛նչ, հորըս սանը,
Դավ դնի՛ ձեր կյանքին. նա, վորին հայրըս
Կնքահայր յեղավ, ձեր եղբար վորդի՛ն:

ԳԼՈՍՏԵՐ

Ո՛հ, տիկին, տիկին, ամոթահար եմ.
Յերանի ծածկել կարողանայի:

ՌԵԳԱՆ

Նա ել ընկեր չե՛ր այն անբարտապան
Ասպետներէ հետ, վորոնք իմ հորըս
Միշտ ուզեկեց են:

ԳԼՈՍՏԵՐ

Ձը գիտեմ, տիկին.
Շատ վատ ե, շատ վատ:

ԵԴՄՈՆԴ

Ճիշտ ե, տիրուհի,
Նա այդ խմբիցն եր:

ՌԵԳԱՆ

Ուրեմն ի՛նչ դարմանք,
Վոր այդպիսի չար մի միտք հղացավ,
Նըրանք են դրդել, վոր նա սպանի
Այս խեղճ ծերունիին, վոր հետո վատեն
Նըրա սոսցվածքը: Քույրըս այս ղիշեր

Ինձ դիր եր գրել այդ մարդկանց մասին.
Յեւ նա ինձ այնպես զգուշացրել է,
Վոր յեթե նրանք ինձ մոտ ուզեն գալ,
Տանից դուրս կերթամ:

ԿՈՐՆԱՆ

Նույնպես յես, Ռեզան:
— Եւմենդ, լսում եմ, վոր ցույց եք տրվել
Մի վորդիական ծնողասիրություն:

ԵԴՄՈՆԴ

Իմ պարտքն եր այդ, տեր:

ԳԼՈՍՏԵՐ

Մի հայտնեց դավք.
Յեւ տեսք՝ ինչպես վերք է ստացել,
Յերբ ջանացել է, վոր բռնի նըրան:

ԿՈՐՆԱՆ

Մարդ ուղարկել եք, վոր ձերբակալեն:

ԳԼՈՍՏԵՐ

Այո, ազնիվ տեր:

ԿՈՐՆԱՆ

Յեթե բռնվի,
Եւ յերկյուղ չկա, վոր մեկ ել փախի.
Ի գործ դըրեք, դուք իշխանությունըս,
Ինչպես ձեր կամքն եւ— Դալով ձեզ, Եւմենդ,
Վորի գովելի հնազանդությունը
Այսքան լավ փայլեց հենց այս բուպեյիս,
Այսուհետեւ մերն եք: Մենք շատ կարոտ ենք
Ձեզ պես անձնվեր, անկաշառ մարդկանց.
Յեւ իսկույն ձեր վրա մենք ձեռք ենք դընում:

ԵԴՄՈՆԴ

Հաւատարմությամբ կը ծառայեմ ձեզ,
Տեր իմ, յեթե վոչ այլ արժանիքով:

ԳԼՈՍՏԵՐ

Յես նըրա կողմից շնորհակալ եմ:

ԿՈՐՆԱՆ

Ձեզ գիտե՞ք՝ ինչու յեկել ենք ձեզ մոտ:

ՌԵԳԱՆ

Այսքան տարածամ, այս մութ գիշերը
Ուղեւորվելով: Ծանր գործեր կան,
Իմ ազնիվ Դիոստեր, և դըրանց համար
Հարկավոր են մեզ ձեր խորհուրդները:
Հայրըս գրել է ինձ, նույնպես և քույրըս,
Թե նրանց միջև վեճեր են ծագել.
Հարմար չը տեսա պատասխանները
Մեր տնից գրել. թղթաբերները
Պետք է այստեղից պատասխան տանեն:
Դէհ, մեր ձերուհի ազնիվ բարեկամ,
Սիրոյեցեք ձեզ, և մեզ շնորհեցեք
Ձեք խորհուրդները մեր գործի մասին,
Վոր պահանջում է անհապաղ վճիռ:

ԳԼՈՍՏԵՐ

Պատրաստ եմ, տիկին, ձեր ծառայության.
Բարով եք յեկել:

ՏԵՍԱՐԱՆ Բ

Գլոստերի ամրոցի սուղեվ

Մտնում են ՔԵՆՏԸ և ՈՍՎԱԼԴԸ՝ տարբեր կողմերից

ՈՍՎԱԼԴ

Բնորի լույս քեզ, բարեկամ: Այս տանից ես դու:

ՔԵՆՏ

Այո:

ՈՍՎԱԼԴ

Ո՞ւր կարող ենք տեղավորել մեր ձիերը:

ՔԵՆՏ

Տըղմի մեջ:

ՈՍՎԱԼԴ

Խնդրում եմ, թե ինձ կսիրես, ասա ինձ:

ՔԵՆՏ

Յես քեզ չեմ սիրում:

ՈՍՎԱԼԴ

Պահ, իմ ել շատ հոգը չի:

ՔԵՆՏ

Յեթե Լիպսբրի *) փարախում ձեռքս ընկնեյիր, յես քեզ վազվեցնեյի՝ հոգըդ կլինեիր, թե վոչ:

ՈՍՎԱԼԴ

Ինչո՞ւ յես այդպիսի բաներ ասում ինձ, յես քեզ չեմ ճանաչում:

ՔԵՆՏ

Իսկ յես քեզ ճանաչում եմ, այ մարդ:

ՈՍՎԱԼԴ

Ո՞վ եմ յես քո կարծիքով:

ՔԵՆՏ

Մի անպիտան, մի սրբիկ, մի սխալակեղ, մի անըզ-
գամ, գոռոզ, տխմար, մուրացիկ, յերեք ձեռք հագուստի

*) Այդ անունը վոչ մի ուրիշ տեղ գրված չի. Շեքսպիրը յերեկվե գիտա-
մամբ մի անհասկանալի տեղի անուն է գրել: Մ. Թ.

տեղ *), հարյուր լիրանոց **), կեղտոտ բրդի գուլպա հագ-
նող սրբիկ, մի սպիտակալյարդ ***), դատաստանի դի-
մոզ ****) սրբիկ, մի պոռնիկի ձաղ, հայելու նայող, չափազանց
հաճոյակատար, սեթեթեթ թշվառական, մեկ սնդուկ ժառանգող *****)
ստրուկ, այնպիսի մեկը, վոր պատրաստ է կավատ գառնալ՝
մի ծառայություն անելու համար, և վորը չէ այլ ինչ,
յեթե վոչ մի խառնուրդ սրբիկայի, մուրացիկանի, վատաստի, կա-
վատի. մի խառնածին քած շան ձագը և ժառանգը. մի մարդ,
վոր յեթե ուզի մերժել այս իր տխրոսներեց ամենափոքրիկ
վանկը, այնքան կծեծեմ, վոր շան պես կը կընձկընձա:

ՈՍՎԱԼԴ

Վահ, ի՞նչ հրեշավոր մարդ ես յեղել դու, վոր այդպես ան-
պատվում ես մի անձի, վոր վոչ քեզ ճանաչում է, վոչ ել քեզ
ծանոթ ե:

ՔԵՆՏ

Ի՞նչ պնդերես անառակն ես յեղել, վոր ուրանում ես ինձ
ճանաչելու: Յերկու որ առաջ չի՞ր, վոր քեզ գետին գարկեցի և
թագավորի առաջ քեզ ծեծ տվի: Սուրդ քաշի՛ր, թշվառական,
թեև գիշեր ե, բայց լուսինը փայլում է. քեզ այնպես անեմ, վոր
լուսնի լույսը մյուս կողմիցդ դուրս գա: Սուրդ քաշի՛ր, դու

*) Շեքսպիրի ժամանակ, յերբ մեծ խնամք եր տարվում գեղատի և
արդուգարդի վրա, անտառավություն է յեղել միայն յերեք ձեռք հագուստ ու-
նենալը:

**) Հարյուր լիրանոց և բրդի գուլպա հագնող՝ միևնույն բանն է նշա-
նակում. դրանք չքավորության նշաններ են յեղել և յերեկ, առածների կարգն
անցած խոսքեր: Յեղիտաբեթի թագավորության ժամանակ սովորություն եր
մեծաքան գուլպաներ հագնել, և պետք եր շատ չքավոր լինել՝ բրդի գուլպա
հագնելու համար:

***) Յերկուս:

****) Մի մարդ, վորին յեթե ծեծեք, կզիմի դատաստանի, փոխանակ,
քաջասիրտ մարդու պես, անձամբ իր վրեժը հանելու:

Mason.

*****) «Մեկ սնդուկ ժառանգող» — նշանակում է մի մարդ, վորի բոլոր
ունեցածը պարտականվում է մեկ սնդուկի մեջ, և այդ ել հորից և ժառան-
գել:

Steevens.

սրտնիկի ձագ, խայտառակ, սափրիչի ընկեր *) և սաւրդ դուրս, քաշիր:

(Իր սաւրդ քաշելով)

ՈՍՎԱԼԴ

Հեռացիր. յես քեզ հետ գործ չունեմ:

ՔԵՆՏ

Սուրդ քաշիր, թշվառական. դու նամակներ ես բերել թաւափորի դեմ և կուսակից ես դարձել խրձիկ—սնամիտութեան՝ նրա հոր վեհափառութեան դեմ: Սուրդ քաշիր, թշվառական, և կամ վոլոքներդ այնպէս կ'ջարդեմ, վոր... Սուրդ քաշիր, թշվառական, պաշտպանվիր:

ՈՍՎԱԼԴ

Ոգնեցե՛ք, ոգնե՛ցեք. սպանում են:

ՔԵՆՏ

(Ծնծելով ճրագ)

Կովիր, սարուկ, դեմ դիր, թշվառական, դեմ դիր, պաճուճ—վոր սարուկ, պաշտպանվիր:

ՈՍՎԱԼԴ

Ոգնեցե՛ք, ոգնե՛ցեք. սպանութիւն, սպանութիւն:

(Մտնում են Եղմանդը, Կրնվալը, Ռեզ անը Գլոտները յով ծառաները)

ԵՂՄԱՆԴ

Ի՞նչ կա, ի՞նչ և պատահել, բաժանվեցե՛ք:

ՔԵՆՏ

(Իտանալով դէպք Եղմանդը)

Յեթե կամենում եք, համեցե՛ք փոքրիկ պարոն: Յեկե՛ք, յես ձեզ միս կուտեցնեմ**): հայդե՛, յերիտառարդ պարոն, առաջ յեկե՛ք:

*) Այսինքն՝ այնքան սաւրդ մարդ ես, վոր սափրիչի հետ ես նիստ ու կաց անում, Ծ. Թ.

**) «Մէս ուտեցնել» նշանակում է առաջին անգամ սովորեցնել, ինչպէս մանուկին առաջին անգամ միս ուտել են սովորեցնում: Ծ. Թ.

ԳԼՈՍՏԵՐ

Սուր, դե՛նք, ի՛նչ և պատահել այստեղ:

ՌԵԳԱՆ

Սքանք թագավորի և իմ քրոջ կողմից յեկա՛ թղթաբերներն են:

ԿՈՐՆՎԱԼ

Ձեր վեճը ինչի՞ մասին է: Սոսկեցե՛ք:

ՈՍՎԱԼԴ

Շուշն կտրվել է, միւրրդ:

ՔԵՆՏ

Ջարմանալի չե. այնքան քաջութիւն ցույց տվիր վոր... Դու նվաճող թշվառական, բնութիւնը քեզ ուրախում է. պետք է մի դերձակ քեզ շինած լինի:

ԿՈՐՆՎԱԼ

Դու զարմանալի մարդ ես, դերձակը մարդ շինի:

ՔԵՆՏ

Այո՛, պարոն, դերձակը. մի քարտաշ կամ ներկայաւոր չեյին կարող այսքան անպիտան բան շինել, նույնիսկ յեթե յերկու ժամ աշխատեյին:

ԿՈՐՆՎԱԼ

Բայց, ասացե՛ք, ինչի՞ց ծագեց ձեր վեճը:

ՈՍՎԱԼԴ

Այս ձեր թշվառականը, վորի կյանքը խնայեցի, հարգելով նրա սպիտակ մորուքը...

ՔԵՆՏ

Դու շատ ձագ պե՛ք*), անողուտ տանու—Միւրրդ, յեթե ինչ

*) Ստիգինն նկատում է, վոր, կարելի չի, «գեղ» գործածվում է վորպէս նախատական բառ, վորովհետեւ ա՛յ գլխական այբուբենի վերջին տառն է այդ:

հրաման կտա՞ր՝ յես այս բերտ սրիկային սանդի մեջ կծեծեմ:—
Դո՛ւ խնայեցիր իմ սպիտակ մորուքս, դձւ, խաղաղութիւն*):

ԿՈՐՆՎԱՆ

Լոբր, ա՛նպիտան, բերտ, թշվառական. պատկառել չգիտեմ:

ՔԵՆՏ

Այո, տեր, գիտեմ. բայց բարկութիւնն եւ իրավունքներ
ունի:

ԿՈՐՆՎԱՆ

Ինչո՞ւ յես բարկացիր

ՔԵՆՏ

Հենց նրա համար,

Վոր մի աշխարհի թշվառականը
Համարձակվում ես սուր կըրել մեջքին,
Յերբ աղնվության նշույլ չի կրում:
Այսպես ժպտադեմ ստահակները
Մկների նման կրծում կտրում են
Այն սուրբ կապերը, վորոնք շատ պիւրկ են
Խղվելու համար. շոյում են ամեն կիւրք,
Վոր իրենց տիրոջ սրտում հուզվում ե.
Կըրակի վըրա ձեթ են սրակում.
Սառած սրտի վրա ձյուն են կուտակում.
Ժխտում են, հաստատում, և ակիւնի**) պես
Իրենց կտուցը միշտ շուռ են տալիս
Դեպի այն կողմ, ուր կից փչում են հողմերն
Իրենց տերերի քմահաճույքի.
Յե՛վ շների պես՝ վոչինչ չգիտեն,
Յեթե վոչ հետեւի:

Ուղարկեմ

Ժանտախտը դարկի

*) Եւ թռչուն, վոր քայլելիս պոչը շարժում ե:

**) Ալիւն կամ ծղնի, — մի թռչուն ե. ըստ Սահմանի, կարծիք կար, վոր-
պես թե ակիւնը միշտ թռչում ե հոգի ուղղութեամբ: Ըստ մի այլ բացատ-
րութեան՝ ռամկենքը հավատում եյին՝ վոր յիթե այս թռչունը կախեն, միշտ
կզառնա դեպի այն կողմը, վորտեղից հոգւմ ե փչում, և այդ կերպով ցույց
կտա, թե քամին վոր կետից ե դալիս:

Ընկալոր*) դեմքը. դու ծիծաղում ես
Ոտքերիս վրա, վորպես թե խենթ եմ,
Լըսիր, սագի ձեռք, յիթե ճանկըս ընկնես
Սարուսի դաշտում՝ քեզ կառահելով
Յես կը հալածեմ մինչև համեկրո**):

ԿՈՐՆՎԱՆ

Ի՛նչ ե, խենթ ես, ծերո՛ւկ:

ԳԼՈՍՏԵՐ

Ինչո՞ւ կռվեցիր,

Դու մեզ ա՛յն աստ:

ՔԵՆՏ

Ձեն յեղիլ յերբեք

Յերկու հակառակ անչափ հակակիր,
Վորչափ յես և այս թշվառականը:

ԿՈՐՆՎԱՆ

Ինչո՞ւ յես նրան աշխարհ հայհոյում,
Նըրա մեղքն ի՛նչ ե:

ՔԵՆՏ

Նըրա կերպարանքն

Ինձ հաճելի չե:

ԿՈՐՆՎԱՆ

Վոչ ել իմս անշուշտ:

*) Այսինքն այնպես սարսափած, վորպես ընկնալորի դեմքը, վորի
տազնապը մոտ ե:

**) Կամեկոտ ասպետական վեպերի մեջ հռչակալոր քաղաք ե, ուր, ասում
են, Արթուր Թագաւորն արքունիք եր հաստատել. դուքի հալածել մինչև հա-
մելոտ մի սովորական առաջված յեղած լինի: Համեկըն ասում ե, վոր Կամե-
լոտի մոտ (Սոմերսետշայրում) բաղմաթիվ մեծ ճաճիճներ կան, ուր մեծ քանա-
կութեամբ սագեր եյին ապրում: Ծ. Թ.

(Յուլյոյ տալով Եղմոնդին)

Վոչ ել սըրանը:

(Յուլյոյ տալով Ռեգամին)

Վոչ ել սըրանը:

ՔԵՆՏ

Տեր, իմ գործըս ե ճշմարիտ խոսեւ:
Այո, տեսել եմ իմ ժամանակին
Լավագուշն գեմքեր, քան այժմ տեսնում եմ
Այս ուսերի վըրա, իմ աչքիս առաջ:

ԿՈՐՆՎԱԼ

Սա նրանցից ե, վորին մի անգամ
Գոված կլինեն կողտուխյան համար
Յեվ վոր այնուհետ միշտ ձեացնում ե
Մի լիբը բըտուխյուն, բռնի փոխելով
Իր արտաքինը, ներքինի ընդդեմ:
Շողոքորթելու բնդումակ չե նա:
Մի ազնիվ մարդ ե, պիտի ե նիւսն ասեւ:
Յեթե ընդունեն, շատ լավ, յեթե վոչ,
Ինքը մեղք չունի, նա ճիշտն ե խոսում,
Յես ճանաչում եմ այս սրիկաներին:
Այս մարդիկ, իրենց անկեղծության մեջ,
Ունեն ավելի խորամանկություն
Յեվ ապականված պիտի նպատակներ,
Քան քսան տըխմար գլուխ ծըռողներ,
Վորոնք մի քիչ շատ մեծարել գիտեն:

ՔԵՆՏ

(Սնուշ ձայնով)

Տեր իմ, ճշմարիտ. անկեղծ խսկությամբ,
Յեթե ինձ թույլ տա ձեր մեծությունը,
Վորի շնորհը, այն լուսաճաճանչ
Պըսակի նման, վոր շողշողում ե
Յերեսի ճակատին...

ԿՈՐՆՎԱԼ

Ի՞նչ ես ուզում ասել

ՔԵՆՏ

Ուզում եմ վոճս փոխել, քանի վոր դա այդքան ձեզ
տհաճելի չե:
— Յես ընդունում եմ, տեր, վոր շողշողութ չեմ: Նա, վոր
Ձեզ խաբել ե պարզ խոսելով, մի պարզ սրիկա չե
յեղել:
Ինչ վոր յես չեմ կարող լինել, վորչափ ել խնդրեյիք ինձ:

ԿՈՐՆՎԱԼ

(Ուղարկին)

Ինչո՞վ ես սրան անարգանք հասցրել:

ՈՍՎԱԼԴ

Յեվ վոչ մի կերպով: Քանի որ առջ
Արքան, իր տերը, թյուրիմացությամբ
Ուղեց ինձ դարկել. սա ել միացած՝
Նըրա գայուսթը շողշողութելով՝
Հետեից հրեց ինձ և գետին զարկեց:
Յերբ յես ցած ընկա՝ այնքան հայհոյեց,
Թքեց մըրեց ինձ. և քաջ ձեացավ,
Վոր թագավորից գովեստ ստացավ,
Հաղթած լինելով այնպիսի մեկին,
Վոր ա ձնատուր եր, և այսոր, կրկին,
Հիշելով նախին իր քաջությունը՝
Սուր քաշեց ինձ վրա:

ՔԵՆՏ

Ձը կա վոչ մի հատ

Այս սրիկաներից և նըվաստներից,
Վորոնց մոտ Այաքս խաղալիք չընի*):

ԿՈՐՆՎԱԼ

Կոճղեր **): Բերեցեք: — Հա՛ւառ ծեր սրիկա.
Հարգելի գոռոգ, քեզ կը սովորեցնենք...

*) Այսինքն ինքնագովության և գոռողության մեջ:

Capell.

**) Վատքերը կոճղերի մեջ զննելու համար:

ՔԵՆՏ

Տէր, յես խիստ ծեր եմ սովորելու համար,
Յեւ ընդել մի տաք կոճղեր ինձ համար.
Յես՝ Թագավորի ծառան եմ, և այժմ
Նըրա հրամանով յեկել եմ ձեզ մոտ:
Դուք շատ քիչ հարգանք ցույց տըված կլինեք
Յեւ սաստիկ հանդուգն չարակամություն
Դեպի իմ տիրոջ շնորհաշուք անձը,
Կոճղեր դնելով իր Թղթաբերին:

ԿՈՐՆՎԱԼ

Բերեք կոճղերը, յերդվում եմ կյանքիս
Յեւ պատվիս վըրա՝ նա մինչև կեսոր
Սյնտեղ կը նստի:

ՌԵԳԱՆ

Ի՞նչ, մինչև կեսոր.
Վո՛չ, մինչև գիշեր. ամբողջ գիշերն ել:

ՔԵՆՏ

Տիկին, Թե ձեր հոր շունը լինելի՛
Չը պետք է ինձ հետ այդպես վարվելիք:

ՌԵԳԱՆ

Բայց դու լինելով նըրա սրիկան՝
Այսպես կը վարվեմ:

(Կոճղեր են բերում)

ԿՈՐՆՎԱԼ

Սա հենց այն գույնի սրիկաներից է,
Վորոնց նկատմամբ զրել է քույրըս:
— Հայդե՛. կոճղերը բերեցեք այստեղ:

ԳԼՈՍՏԵՐ

Յես աղաչում եմ ձերդ մեծության՝
Չանել այդ բանը. ծանր է իր մեղքը:
Յեւ բարի արքան, վոր նրա տերն է,
Անշուշտ դրա համար կը պատժի նըրան.

Սակայն այդպիսի մի անարգ պատիժ
Արժան չե միայն ամենից ստոր
Սըրիկաներին, իրենց գողությանց
Յեւ զըռհկական մի դքերի համար:
Թագավորն անշուշտ կը վիրավորվի,
Յերբ այս աստիճան անարգված լինի
Հանձին իր հղած պատգամավորի,
Վորին այս կերպով դուք կաշկանդում եք:

ԿՈՐՆՎԱԼ

Ինքըս կը լինեմ պատասխանատուն:

ՌԵԳԱՆ

Քույրըս ավելի կը վերա՛լորվի,
Վոր իր Թիկնապահն անարգված է խիստ.
Ծեծի յենթարկված, լուկ այն պատճառով,
Վոր գործադրել է նրա հրամանը:
— Ներս դրե՛ք վոտքերը:

(Բեմադրողը դնում են
կոճղերի մեջ)

(Կարմիալին)

Յեկ, ազնիվ տերըս, գընանք այստեղից:

ԳԼՈՍՏԵՐ

(Բեմադրող)

Յես շատ ցավում եմ քո վրա, բարեկամ.
Դուքսի կամքն է այդ. ամեն մարդ գիտե,
Վոր նըրա համառ բնավորությունը
Չի թողնում անգամ, վոր կողքիցն անցնեն
Կամ Թե դիմադրեն: Դարձյալ՝ քեզ համար
Յես կը միջնորդեմ:

ՔԵՆՏ

Մի անեք, խնդրեմ.

Յես շատ եմ հոգնել ճամբորդության մեջ
Յեւ անքուն մնացել. մի քիչ կը քնեմ,
Քիչ ել կը սուլեմ. լավ մարդու բախտը

Ներբանից կրուսնի *): Տեր ընդ ձեզ, պարոն:

ԳԼՈՍՏԵՐ

Դուքսն այս գործում պարսավելի յե.

Նըրա արածը վատ հետեանքներ

Կարող ե թողնել:

(Դուքս և գնում)

ՔԵՆՏ

Բարի թաղավոր,

Բո գլխիդ յեկավ հին ասացվածը,

Անձրեից փախար, ընկար ծովի մեջ**):

(Մացից մի բուշք հանելով, լուսնի լուսով կտրգում է):

Մոտ յեկ, ով փարոս այս յերկրագնդի,

Վոր քո ոժանդակ ճառագայթներով

Կարգավ այս թուղթը: Վոչ վոր հրաշք էի տեսնում,

Թշվառներից գատ: Գիտեմ, այս գիրը

Կորդելիան ե գրել: Բարեբախտաբար՝

Նա լուր ե առել իմ այս ծպտումից.

«Իրերի անհեթեթ այս դրուժունը

Առիթ ե տալիս ինձ ջանք դործ դընել՝

Այդ Հարիքներին մի ճար անելու***):»

—Ո՛վ իմ տաղտկացած, իմ անքուն աչքեր,

Ոգուտ քաղցեցեք ձեր հոգնությունից,

Մի տեսնեք ամոթի այս բնակավայրը:

—Բախտ. բարի գիշեր. մեկ ել ժպտա ինձ

Յեվ մեկ անգամ ել անխղճ դարձրու:

(Քնում է)

*) Այսինքն մի ազնիվ մարդ կարող ե փառքի և պատվի հասնել նույն-
նախ այն բոլոր պատժի պատճառով, վորին յենթարկված ե. «Ներբան» նշա-
նակում ե ներբանները կոճղերի մեջ դնել—Eccles.

**) Անգլերենում սրան համապատասխան, բավական դժվար փոխադրե-
լի, մի ասացված կա. մենք պատշաճ համարեցինք, Ս. Մալխոյանցի պես,
հայերեն առածով թարգմանել: Մ. Թ.

***) Կորդելիայի դրած նամակից ե կարդում այս տողերը: Մ. Թ.

ՏԵՍԱՐԱՆ Գ

Մի մացառ

Մտնում ե ԵԴԴԱՐԸ

ԵԴԴԱՐ

Հսեցի իմ մասին հայտարարվածը.

Յեվ մի բարեբաստ ծառի խոռոչով

Յես ճողողիցի խուզարկուներից,

Չի մնացել աղատ մի նավահանգիստ

Վոչ մի տեղ, ուր վոր պահապանները

Մի արտասովոր աչալըջությամբ

Չը խուզարկեն ինձ: Քանի յես խույս տամ,

Փըրկված կը մնամ: Պետք ե ստանձնեմ

Ամենից նըվաստ և գըծում ձեռ,

Վորով յերբեք թշվառությունը,

Իբրե անարգանք մարդկային ցեղի,

Նըրան գազանի մոտեցրած լինի

Յերեսըս տիղմով պիտի շաղախեմ,

Կողքերս ծածկեմ ցնցոտիներով,

Յեվ խառնիճաղանձ անեմ մազերս,

Յեվ իմ մերկությամբ պետք ե դեմ դնեմ

Հողմերին, և յերկնի հալածանքներին:

Պետք ե ինձ ընտրեմ վորպես ուրինակ

Բեղլամից *) յեթա մուրացկաններին,

Վորոնք շրջում են այս գավառի մեջ,

Յեվ վոր մոռնուն աղաղակներով

Մխում են իրենց անզգայացած

*) Բեղլամի մուրացկանները լուսնոտներ եյին, վորոնց բանտարկում
եյին Բեղլամի հիվանդանոցում, բայց կամ այն պատճառով, վոր բավական
բժշկված եյին համարվում, կամ այն, վոր դրամ չէր լինում նրանց ավելի յեր-
կար ժամանակ կերակրելու, նրանց արձակում եյին հիվանդանոցից և հրաման
եյին տալիս մուրացկանություն անելու: Այս դժբախտ արարածներն ամեն
տեղ մարդկանց գութն եյին շարժում, և այս պատճառով լինում եյին թափա-
ռալըջիկներ, վորոնք հասարակաց դուր շահագործելու համար՝ այդ միկնույն
մուրացկանների ձեռով եյին հազնվում և աշխատում եյին նրանց պես խելաղաղ
ձեանալ: Դրանց ընդհանուր անունն եր խեղճ մոռն:

Մերկ և պնդացած բազուկների մեջ
 Ասեղներ, գամեր և փայտյա փըշեր
 Յեվ կամ խընկունու սըրածայր վոստեր,
 Յեվ զարհուրելի այս կերպարանքով
 Աղքատ գյուղերից, ագարակներից,
 Զըրդացներից և փարախներից,
 Մերթ լուսնոտական չարամաղթությամբ,
 Մերթ ազոթքներով մայր են ստանում:
 Խեղճ Տըլիգուդ*), խեղճ նոոմ, այդ ել մի բան ե:
 Իսկ յես եզդարըս, վոչիհնչ, վոչիհնչ եմ:

(Դարս ե գնում)

ՏԵՍԱՐԱՆ Դ

Գլոսեր կոմսի ամրոցը

Մտնում են ԼԻՐԸ, ԽԵՂԿԱՏԱԿԸ և մի ԱՍՊԵՏ

ԼԻՐ

Զարմանալի՜ յես, անից մեկնել են,
 Յեվ լետ չեն դարձրել պատգամալորներին:

ԱՍՊԵՏ

Վորչափ իմացա, դեռ յերեկ գիշեր
 Նըրանք մեկնելու դիտում չունեյին:

ՔԵՆՏ

Վողջոյն, ազնիվ տեր:

ԼԻՐ

Վահ, այդ իհնչ բան ե:

Կատակի համար այդ ամոթալի
 Ձեն ես ստացել:

*) Տըլիգուտ, կրիտիկներիկ արժեքով, աղավաղումն ե «Տյուրլյուպեն»
 բառի: Տյուրլյուպենները տասնուչորսերորդ դարում մի տեսակ գնչուներ
 կամ մերկ մուրացիկների մի հասարակութուն էին, վերոնք թափառում էին,
 ամբողջ Յեվքոպայում: Հոռոմեական յեկեղեցին պատիվ արեց դրանց «հերե-
 աիկոսներ» անվանելու և նրանցից մի քանիսին Փարիզում ալքեց:

Worburton.

ՔԵՆՏ

Վոչ, տեր իմ:

ԽԵՂԿԱՏԱԿ

Հա, հա. նայի՛ր, իհնչ սոսկալի ծնկակապեր ե կրում: Զիբրին
 զլիսից են կապում, շներին և արջերին՝ վզից, կապիկներին՝
 մեջքից և մարդկանց՝ վոտքերից: Յերբ մարդու վոտքերը չա-
 փազանց ուժեղ լինեն, նրան փայտեգուլպաներ կը հագցնեն:

ԼԻՐ

Ո՞վ անգիտացավ քո աստիճանը,
 Վոր քո վոտքերին կապանքներ դրեց:

ՔԵՆՏ

Թե մին, թե մյուսը, ձեր ուստը և դուստը:

ԼԻՐ

Վոչ:

ՔԵՆՏ

Այո:

ԼԻՐ

Վոչ, ասում եմ քեզ:

ՔԵՆՏ

Այո, ասում եմ ձեզ:

ԼԻՐ

Վոչ, վոչ. չեյին անի:

ՔԵՆՏ

Այո, արել են:

ԼԻՐ

Արամաղղը վկա՜, յերգվում եմ, վոր վոչ:

Հունոնը վկա՛, յերդիւում եմ՝ այս:

ԼԻՐ

Ձեյին համարձակվի այդպես բան անել...
Վո՛հ, չեյին կարող, չեյին կամենա:
Ավելի վատ ե, քան սպանութիւն,
Կամավ այդպիսի անարգանք հասցնել:
Պատասխանիր ինձ պատշաճ շտապով,
Թե արդյոք ինչպես դու արժանացար
Կամ յենթարկվեցիր այդպիսի բախտի,
Դո՛ւ, վոր մեր կողմից առաքված եյիր:

ՔԵՆՏ

Տէր իմ, յերբ հասա յես նըրանց տունը,
Նըրանց հանձնեցի ձերդ բարձրութեան
Գրած նամակը: Նախ քան կանգնել
Ծնկաչոք հարգանք մատուցանելուց՝
Մի քրտնաթաթախ սուրհանդակ հասավ՝
Լեզուն ցամաքած և կես շնչասպառ,
Յեւ իբ տիրուհի Գոներիլի կողմից
Վողջույններ ասաց, և, ընդմեջելով*),
Մի նամակ հանձնեց, վոր շուտ կարգացին:
Յերբ տեղեկացան պարունակութեանն՝
Շուտ ժողովեցին իրենց մարդերին
Յեւ ձի հեծնելով՝ ինձ հրամայեցին
(Շատ սառն ակնարկներ ձգելով դեպ ինձ)
Հետեւել նըրանց, մինչև հաճենան
Տալ պատասխանը: Իսկ այդ ժամանակ
Յես հանդիպեցի մյուս թղթաբերին,
Վորի գալուստը, վորպես դիտեցի,
Թունավորել եր հաջողութիւնը:
(Քանզի այդ նա յեր, վոր այս վերջերս
Այնպես լիրբ կերպով վարվեցավ ձեզ հետ)
Իսկ յես գտնելով առավել կորով,
Քան թե խելք իմ մեջ՝ սուրբ քաջցի:

*) Այսինքն՝ ձեր նամակի ընթերցումն ընդմեջելով:

Նա, յերչոտի պես, գոռում - գոչումով
Տունը թնդացրեց: Ձեր փեսան և դուստրը
Իմ այդ հանցանքը արժանի գըտան
Այս անարգանքին, վոր արդ կրում եմ:

ԽԵՂԿԱՏԱԿ

Ձմեռը դեռ վերջացած չի, յեթե վայրի սագերն այդ կողմն
են թռչում*):

Յերբ ցնցոտի հագնի հայրը՝
Վորդիները կը կուրանան,
Իսկ յերբ քսակ բերի հայրը՝
Նրանք սիրով կը գուրգուրան.
Յերբեք բախտը, պոռնիկն այդ չար,
Դուռ չի բացի խեղճի համար:

Բայց, այսու հանդերձ, դու քո սիրելի աղջիկներից այն-
քան ցավեր ես քաշելու, վորքան դրամ չես կարող հաշվել մե-
ամբողջ տարում:

ԼԻՐ

Ո՛հ, ինչպես այս ախտը զրոհ ե տալիս
Դեպի իմ սիրտը:— Ա՛խտ հիստերական,
Ցած, մագլցող վիշտ, ցածն ե քո տարրերդ:
— Ո՛ւր ե այդ դուստրը:

ՔԵՆՏ

Ներսն ե, կոմսի հետ:

ԼԻՐ

Մի հետեւեք ինձ, մընացեք այստեղ:

(Գնում ե)

ԱՍՊԵՏ

Ձեա գործել արդյոք մի ուրիշ հանցանք՝
Պատմածներիցըդ դատ:

*) Նշանակում ե՝ յեթե դրանց վարքն այդպես ե, թագավորի առաջ-
պանքները դեռ չեն վերջացել: Ծ. Թ.

ՔԵՆՏ

Վոչ:—Բայց ի՞նչպես ե,
Վոր արքայի հետ այսքան քիչ մարդ կա:

ԽԵՂԿԱՏԱԿ

Յեթե այդ հարցման համար վոտքերդ կոճղերի մեջ դրած
լինեյին՝ արժանի կլինեիր:

ԱՍՊԵՏ

Ինչո՞ւ, խեղկատակ:

ԽԵՂԿԱՏԱԿ

Մենք քեզ մըջյունի մոտ վարժարան կ'ընենք*), քեզ
սովորեցնելու համար, վոր ձմեռը չեն աշխատում: Ով վոր հե-
տեվում ե իր քթին, նա առաջնորդվում ե իր աչքերից, ի բաց
առյալ կույրերը, և քսան քթի մեջ մեկ քիթ չկա, վոր չզգա, թե
ո՞վ ե դարձ ~~հետ~~ բուրում**): Յերբ մի մեծ անիվ բլրից ցած ե դը-
լորվում, բաց թող, յեթե վոչ դու վիզդ կկոտրես՝ հետեւելով նը-
րան. բայց յեթե կա մի մեծը, վոր բլրից վերե ե գնում, դու ել
կպիր յետեից, վոր քեզ ել հետը քարը տա: Յերբ մի խելացի

*) Սովորմունքն ասում ե. «Ո՞վ ծուլ, մըջյունի մոտ դնա, տես նրա ճանա-
պարհները և իմաստուն յեղիք, վորովհետեւ նա թեւ իշխան, վոստիկան և ախրող
չունի, բայց իր կերակուրը ամառվանից պատրաստում ե, իր ուտելիքը հունձքի
ժամանակ ժողովում ե (գիրք Առախաց, գլ. 2, համար 6—8): Խեղկատակն
ասում ե, վոր յեթե դու մըջյունից դատ առած լինեիր՝ դու կլիմանայիր, վոր
թագավորի հետեւողները, իմաստուն մըջյունի նման, գերադասում են հաջողու-
թյան ամառը ձախորդության ձմեռից, վորից վոչ մի ոգուտ չի կարելի ոտա-
նալ:

Malone.

**) Մարդկութիւնը, ասում ե խենթը, յերկու մասի յե բաժանվում՝ աչք
ունեցողների և կույրերի: Բոլոր մարդիկ, բացի կույրերից, թեւ հետեւում են
իրենց քթին, բայց առաջնորդվում են իրենց աչքերից. և սրանք, տեսնելով
թագավորին ձախորդության մեջ, նրան լքել են: Դալով կույրերին, վորոնց
առաջնորդն իրենց քիթն ե միայն, նրանք ել փախչում են մի անբախա թա-
գավորից, վորովհետեւ քսան կույրի քիթից մեկը չկա, վոր չհասկանա, թե վոր-
տեղից ե դալիս ձախորդության դարձահասութիւնը:

Malone.

մարդ քեզ ավելի լավ խորհուրդ տա՝ իմա յետ տնւր ինձ: Յեւ
ուզում եմ, վոր անպիտան մարդիկ միայն հետեւին իմ խորհըր-
դին, քանի վոր ամօղը մի խեղկատակ ե:

Ով ծառայի շահի համար,

Ձեի համար քեզ հետեի,

Շուտ կը կապի պարկ ու պուրկը,

Անմիջապես վոր անձրևի.

Նա կը փախչի, քեզ թողնելով

Փոթորկի տակ մենակ մընալ.

Խենթը չի գնա, այլ կթողնի

Խելոքներին՝ խույս տալ գընալ:

Խենթ ե սրիկան, վոր փախուստ տա,

Բայց չե յերեք խենթը սրիկա:

ՔԵՆՏ

Վերտեղ ես սովորել այդ, խենթ ո՞ւր:

ԽԵՂԿԱՏԱԿ

Վոչ կոճղերի մեջ, խենթ*):

(Կրկին ներս ե գալիս Լիթ Գրատերի հետ)

ԼԻՐ

Մերժեն խոսել ինձ հետ, հիվանդ եմ, հոգնած.

Ամբողջ գիշերը ճամպա՝ յեն յեկել,

Պարզ պատրվակներ. ապստամբության

Յեւ խուսափելու պարուրան քներ են:

Մի ավելի լավ պատասխան բեր ինձ:

ԳԼՈՍՏԵՐ

Իմ սիրելի տներ, ձեզ քաջ հայտնի յե

Մեր դուքսի կրակոտ բնավորութիւնը,

Յեւ թե ի՞նչ աստիճան անդրազվելի յե

Իր ընթացքի մեջ:

*) Շմիդտը մտածում ե, վոր յերբ խեղկատակը Բենտին անվանում ե
«խենթ», այդ վոչ թե նրա ասածը նրան յետ դարձնելու համար ե, այլ, նա-
խորդ յերգի հիման վրա, վորպէս մի պատվարի տխրոտ տալիս ե նրան, վո-
րին Բենտն յարժանացել ե թագավորին ցույց տված իր անձնավորության համար:

ԼԻՐ

Վրէժ, Ժանտախտ, մահ, շփոթ:
Ինչպէս, կրակոտ. ինչ բնավորութիւն.
Ե՛յ, Գլոստեր, Գլոստեր, յետ պետք ե խոսեմ
Կորնվալի դուքսի և իր կնոջ հետ:

ԳԼՈՍՏԵՐ

Բայց, ազնիվ տեր իմ, տեղեկացրել եմ
Նըրանց այդ մասին:

ԼԻՐ

Տեղեկացրիր նրանց,
Հասկանում ես ինձ, ալ մարդ:

ԳԼՈՍՏԵՐ

Այո, տեր:

ԼԻՐ

Վահ, թագավորը ուզում ե խոսել
Կորնվալի հետ. սիրելի հայրը
Ուզում ե խոսել իր աղջկա հետ
Յեւ ծառայութիւն պահանջել նրանից:
Գիտէն նրանք այս:—Ո՛վ իմ շունչ և կյանք.
Կրակոտ: Կրակոտ դուքս: Աստ տաք դուքսին,
Բայց վո՛չ... վո՛չ դեռեա... գուցե հիվանդ ե.
Տըկարութիւնը միշտ քամահրում ե
Ամենայն տեսակ պարտականութիւն,
Վորը կապված ե առողջութեան հետ:
Մենք մենք չենք այլևս, յերբ վոր բնութիւնը
Ծնշված լինելով՝ հարկադրում ե հոգուն
Տառապել մարմնի հետ: Պետք ե համբերեմ,
Յեւ բարկացած եմ կույր զայրութիւն դեմ,
Վոր ընդունեցի ախտաժեւ հուշի
Առողջութեան տեղ:—Անիծյալ վիճակ:
(Նայելով Գեմտին)
Բայց ինչո՞ւ պետք ե սա այստեղ նստի.

Նրանց այս դրո՞ք ինձ համոզում ե,
Վոր դուքսի և կնոջ առանձնանալը
Մի խաղ ե միայն: Յետ տա՛ն ինձ ծառա:
(Գլոստերին)

Գնա ասա դուքսին և նըրա կընոջը,
Վոր պետք ե խկույն խոսեմ նըրանց հետ.
Շուտ, այս բոպեյիս, հրամայիր նըրանց
Դուրս գալ, լսել ինձ. թե վո՛չ, յետ կերթամ,
Յեւ նրանց դռան մոտ այնպես սաստկաձայն
Կը թըմբկահարեմ, մինչեւ վոր շփոթը
Մահացնի քունը:

ԳԼՈՍՏԵՐ

Յետ կամենում եմ
Ամեն բան ձեր մեջ խաղաղ վերջանալ:
(Դուքս և գեմտ)

ԼԻՐ

Ա՛խ, իմ սիրտ, հուզող սիրտ!—Բայց վո՛չ, ցած իջիր:

ԽԵՂԿԱՏԱԿ

Խոսիր սրտիդ հետ, քեռի, ինչպես խոհարարուհին խոսում
Էր անքիլոսներին*) հետ, յերբ վոր նրանց վողջ վողջ գնում եր
խմորի մեջ, ճիպոտով զարկում եր նրանց կատարներին և
ասում. «ցած իջեք, թշվառներ, ցած»: Դրա յեղբայրն եր, վոր
այնքան սիրում եր իր ձիուն, վոր նրա խոտին կարագ եր
քսում:

(Մտնում են Կորնվալը, Ռեգանը, Գլոստերը յեւ ծառաները)

ԼԻՐ

Բարե՛ չերկուսիդ:

ԿՈՐՆՎԱԼ

Բարե՛ ձեր մեծութեան:

(Գեմտին արձագու՛մ եմ)

*) Անքիլոս՝ ոձաձուկ:

ՌԵԳԱՆ

Ուրախ եմ, արքան, վոր ձեզ տեսնում եմ:

ԼԻՐ

Ռեգան, կարծում եմ, վոր դու ուրախ ես,
Յեզ տեղիք ունեմ այդպես կարծելու.
Թե գիտենայի վոր դու ուրախ չես,
Յես պըսակալույժ պետք ե լինելի
Քո մոր շիրիմից, թաղած լինելով
Շնացող մի կին:

(Բեմտիւն)

Ա՛հ, ազնա ես դու.

Բայց թող այդ մնա նալ ժամանակի:
Միբեցյալ Ռեգան, քույրըդ շատ փուչն ե.
Ո՛հ, Ռեգան, Ռեգան, նա կապեց այստեղ
Ապերախտության գիշատիչ անգղը,
Այստեղ, սրտիս վրա: Հաղիվ թե քեզ հետ
Խոսե՛ք կարող եմ: Դու չես հավատա՝
Ի՛նչ ապականված ձևով... Ո՛հ, Ռեգան:

ՌԵԳԱՆ

Խնդրում եմ, տեր իմ, համբերող յեղեք.
Այլելի հույս կա, վոր դուք անկարող
Դըտնված լինեք գնահատել նըրան,
Քան նա՝ դանցառու իր պարտքերի մեջ:

ԼԻՐ

Ի՞նչ, ի՛նչ ասացիր:

ՌԵԳԱՆ

Յես չեմ մտածում,
Վոր քույրս իր պարտքը զանց արած լինի:
Յեթե պատահմամբ, նա դապած լինի
Ձեր ասպետների խռովությունները,
Մնշուշտ այնպիսի հիմունքներ ունի,
Յեզ այնչափ առողջ նպատակ ե այդ,
Վոր նա մաքուր ե ամեն պարսավից:

ԼԻՐ

Անեծքս գլխին:

ՌԵԳԱՆ

Տեր իմ, դուք ծեր եք,
Բնությունը ձեր մեջ այժմ կանգնած ե
Իր ասպարեղի վերջին յեղերքին.
Այլելի լավ ե, վոր ձեր վիճակը
Յեզ ղեկը հանձնեք իռհեմ մի մարդու,
Վոր ձեր դրությունը ձեզնից լավ գիտե.
Խնդրում եմ ուրեմն, վոր վերադառնաք
Կրկին քրոջըս մոտ ե ասեք նըրան,
Վոր սխալված եք:

ԼԻՐ

Յես ներում խնդրեմ.
Գիտե՛ք, թե վորչափ պատիվ կը բերի
Մի գերդաստանի. «սիրելի դստրիկ,
Խոստովանվում եմ, վոր ծերացել եմ.
Ծերերն անպետք են. ծնկաչոք խնդրում եմ,

(Ծուկ չափել և վ)

Վոր բարեհաճես. շնորհել ինձ հագուստ,
Մահիճ ե ապրուստ»:

ՌԵԳԱՆ

Տեր իմ, բավական ե,
Այդ կատակները ձեզ անվայել են,
Դարձեք քրոջըս մոտ:

ԼԻՐ

Ո՛հ, յերբեք, Ռեգան,
Նա շքախմբիս կեսը պակասեցեց,
Մըռայլ հայացքներ գցեց ինձ վըրա
Յեզ ոձի լեզվով խայթեց ինձ սրտից:
Թող յերկնի բոլոր պատուհասները
Թափվեն ապերախտ իր գլխի վըրա:
Ջարկեցեք նըրա մատաղ վոսկրերը,
Ո՛վ ժանտ խորշակներ, խեղանդամությամբ:

ԿՈՐՆԱՆ

Ամոթ ե, տեր, ամոթ:

ԼԻՐ

Ճապուկ կայծակներ,
Ձեր կուրացուցիչ հուրը ժայթեցեք
Արհամարհալից այն աչքերի մեջ.
Պամրեցեք նրա գեղեցկությունը,
Ո՛վ ճահիճներէջ ծծված շողիներ,
Վորոնց քաշել ե հըզօր արևը,
Ընկճեցեք նրա գոռողությունը:

ՌԵԳԱՆ

Ո՛վ սուրբ աստվածներ, ինձ ել այդ կերպով
Անիծելու յեք, յերբ վոր բորբոքվեք:

ԼԻՐ

Վոչ, Ռեգան, յերբեք դու չես ստանա
Իմ անեծքները.
Վոչ, գորովահույզ քո բընությունը
Անճատուր չի լինի կարծրաբըրտության.
Նըրա աչքերը սարսափելի յեն.
Իսկ քո աչքերը սիրտ են սփռում:
Նրանք չեն այրում: Դու չեյիր կարող
Դժկամակ լինել իմ հաճույքներին,
Կրճատել թիվը իմ շքամբի,
Յեվ կամ ուզղել ինձ կոշտ և բիրտ խոսքեր,
Կտրել վորոշված իմ պարհները
Յեվ, ամենից վերջ, քո դուռը փակել
Յեվ ինձ դուրս թողնել: Վոչ, դու լավ գիտես
Բնության պարտքերը, հոր յերախտիքը,
Քաղաքավարության կարգ ու կանոնը,
Յերախտագիտության պարտ ու պատշաճը,
Դու չես մոռացել թագավորության
Այն կեսը, վոր քեզ պարգևվել եմ յես:

ՌԵԳԱՆ

Շատ լավ, ազնիվ տեր. յեկեք բուն խնդրին:
(Փողեր ներսից)

ԼԻՐ

Ո՛վ իմ ծառային կոճղեր դնել տվեց:

ԿՈՐՆԱՆ

Ի՞նչ փողի ձայն ե:

(Մտնում ե Ոսկալիք)

ՌԵԳԱՆ

Դիտե՛ք քույրքա ե.

Նա ինձ գրել եր, վոր շուտով կը գա:

(Ոսկալիք)

Տիրուհիդ յեկավ:

(Մտնում ե Ոսկալիք)

ԼԻՐ

Սա մի սրիկա յե,
Վորի անտեղի գոռողությունը
Կախ եր իր տիկնոջ հեղհեղուկ շնորհից.
Դուրս գնա, ստրուկ. կորի՛ր իմ աչքից:

ԿՈՐՆԱՆ

Ի՞նչ ե ուզում ասել ձեր մեծությունը:

ԼԻՐ

Ո՛վ իմ ծառային կոճղեր դնել տվեց:
Ռեգան, հույս ունեմ, վոր դու տեղյակ չես:
— Այս ձով ե գալիս:

(Տեսնելով Դոնեքիին, վար ներս ե գալիս)

Ո՛վ դուք աստվածներ,

Յեթե սիրում եք ծերունիներին,
Յեթե ձեր բարի իշխանությունը
Հավանի վորդու հնազանդությանը,
Թե դուք ել ծեր եք, ապա այս դատին
Զորավիդ յեղեք, շանթեր իջեցրեք
Յեվ պաշտպանեցեք իմ իրավունքը:

(Դոնեքիին)

Չէս ամաչում դու նայել մորուքիս.
Ո՛հ, Ռեզան, ի՞նչպես կարող ես բռնել
Դու նըրա ձեռքը՝

ԳՈՆԵՐԻԼ

Ինչո՞ւ չես, պարոն,
Ի՞նչ մեղք եմ գործել. մեղք չես ամեն բան,
Ինչ վոր մեղք թվի անխոհմտությամբ,
Կամ տխմար ծերուկն այդպես անվանի:

ԼԻՐ

Ո՛հ, կողքեր, շատ պինդ եք. դեռ դիմանում եք,
— Ի՞նչպես պատահեց, վոր իմ ծառայիս
Կռճղեր դնել տվիք:

ԿՈՐՆՎԱԼ

Յե՛ս հրամայեցի.
Բայց նըրա գործած լրբությունները
Ավելի վատին արժանի ելին:

ԼԻՐ

Դժւք, դժւք արեցիր:

ՌԵԳՍԵ

Խնդրում եմ ձեզ, հայր,
Վոր թույլ լինելով, նույնպես յերեվաք.
Յեթե դուք մինչև այս ամսի վերջը
Դառնաք և կենաք իմ քրորջ տան մեջ՝
Ձեր շքախմբի կեսն արձակելով,
Ապա կարող եք զալ իմ մոտ մընալ.
Այժմ յես տանը չեմ, և դեռ չեմ տեսել
Ձեզ ընդունելու պատրաստություններ:

ԼԻՐ

Դառնամ նըրա մոտ, հիսուն մարդ արձակած.
Վո՛չ, յես ավելի կը նախընտրեյի
Ժխտել ամեն հարկ և պայքար մղել
Բուռն հողմերի թշնամությամբ դեմ,

Լինել ընկերը դայլի, և վրոնալ
Լկկիչ նոթության սուր ճիրաններից...
Դառնամ նըրա մոտ...
Վահ, այն տաքարյուն Ֆրանսիայի արքան,
Վոր առավ անոժիտ կրտսեր աղջնկաս...
Յես ավելի շուտ կերթամ նըրա մոտ,
Կընկնեմ ծնկաչոք իր գահի առջև
Յեվ, գինակրի պես, թոշակ կը մուրամ
Մի ցած, անարգ կյանք սընուցանելու...
— Դառնամ նըրա մոտ...

Ավելի լավ չեմ ինձ խորհուրդ տայիր
Լինել ստորուկը, բեռնակիր դրասուրը
Այս գարշ ծառայի:

(Յույց տալով Ոսկադիս)

ԳՈՆԵՐԻԼ

Ինչպես կամենաք:

ԼԻՐ

Խնդրում եմ, դ՛ուսար իմ, ինձ մի խենթացնի.
Քեզ չեմ ձանձրացնի. գավակի, մնաս բարով:
Այլևս միմյանց մենք չենք հանդիպի,
Միմյանց չենք տեսնի. բայց այսու հանգերձ՝
Դու իմ մարմինս ես, արյունըս, դուստրըս.
Յեվ կամ մանավանդ, մի ախտ՝ մարմնիս մեջ,
Վոր ստեղծված եմ իմըս անվանել:
Դու մի պալար ես, ժանտախտի մի խոց,
Մի ուռած յելունդ, իմ ապականված
Արյունից յելած: Քեզ չեմ կշտամբում.
Թող դա ամոթը, յերբ վոր կամենա...
Յես չեմ հրավիրում: Յես չեմ ազաչում,
Վոր շանթընկեցը կայծակ տա գլխիդ,
Վոչ ել մեծ դատիչ Արամազդի վրա
Խոսում եմ քեզ հետ. ուղղի՛ր քեզ, յերբ կարես,
Լավագույն յեղի՛ր յեթե կամք ունես.
Յես կը համբերեմ: Յես Ռեզանի մոտ
Կարող եմ մընալ հարյուր ասպետովս:

ՌԵԳԱՆ

Վոչ բոլորովին, տեր իմ: Դեռերս
Ձեյի սպասում, վոր իմ մոտ գայիք,
Յես չեմ հողացել պարտ ու պատշաճը
Ձեզ ընդունելու: Տեր իմ, ականջ դրեք
Քրքոջը խոսքին. նրանք, վոր խառնում են
Խոհականություն ձեր բուռն կրքին,
Պետք է դիմանան, խորհելով, վոր դուք
Ծեր եք... ուրեմն... բայց քույրս գիտե,
Թե ինչ է անում:

ԼԻՐ

Լավ է այդպես խոսել:

ՌԵԳԱՆ

Համարձակվում եմ ասել, թե այո.
Ի՞նչ, հիսո՞ւն ասպետ. այդ բավական չե՞.
Ի՞նչ կարիք ունեք դրանցից շատին,
Կամ հենց այդքանին: Թե այդ մեծ ծախքը
Յեվ թե վտանգը ներհակ են խոսում
Այդքան մեծ թվի: Ի՞նչպես կարող է
Այդքան բաղձություն, յերկու հրամանի տակ,
Մեկ տան մեջ ապրել, այդ շատ դժվար է,
Դրեթե անհնար:

ԳՈՆԵՐԻԼ

Յեվ ինչո՞ւ, տեր իմ,

Ձեք ուզում, վոր ձեզ սպասավորեն
Քրոջս ծառաները և կամ թե իմո՞նք:

ՌԵԳԱՆ

Ինչո՞ւ չե, տեր իմ. և, այն ժամանակ
Թե մեկը ձեր դեմ դանցառու լիներ,
Մենք կարող եյինք պատիժ տալ նրան:
Յեթե կամք ունեք իմ տունը գալու
(Քանի վոր հիմա վտանգ եմ տեսնում),
Աղաչում եմ ձեզ, վոր ձեզ հետ բերեք

Քսանհինդ հողի. թե ավելի գանձ
Մերժում եմ տեղ տալ, կամ հյուրընկալել:

ԼԻՐ

Բայց յես ձեզ ավի՛ ինչ վոր ունեյի...

ՌԵԳԱՆ

Յեվ ժամանակն եր:

ԼԻՐ

Յես ձեզ կարգեցի

Պահպանները և ժառանգները,
Յեվ ինձ պահեցի հետևորդների
Փոքրաթիվ մի խումբ. ի՞նչ, քեզ մոտ գալիս՝
Քսանհինդ հողով պետք է գամ, Ռեգան,
Այդպե՞ս ասացիր:

ՌԵԳԱՆ

Յեվ կրկնում եմ այդ.

Մեկ հատ ավելի յես չեմ ընդունի:

ԼԻՐ

(Նայելով Գոներիլիս յեվ Ռեգանին)

Չար եյակները լավ են յերևում,
Յերբ ավելի չար եյակներ ել կան.
Ամենից վատը չը լինելն անգամ
Դեռ գովելի յե մի վորոշ չափով

(Գոներիլին)

— Յես քեզ մոտ կը գամ, դեռ քո հիսունը
Քսանհինդի կրկնապատիկն է,
Յեվ նրա սիրուց—սերդ կրկնակի:

ԳՈՆԵՐԻԼ

Լսեցեք, տեր իմ, ինչ կարիք ունեք
Քսանհինդի, տառնի կամ հընդի,
Վոր ձեզ հետեն այնպիսի տան մեջ,

Ուր կրկին թվով սպասավորներ
Հրաման են առել ձեզ ծառայելու:

ՌԵԳԱՆ

Ի՞նչ կարիք մեկին:

ԼԻՐ

Ո՛հ, ի՞նչ հարկ խոսել կարիքի մասին.
Ամենից նըվաստ մուրացկանները
Իրենց ծայրահեղ ազդատության մեջ
Դարձյալ բան ունեն, վոր ավելորդ է.
Միք տալ բնության ակիլի քան այն,
Ինչ անհրաժեշտ է բնության համար.
Մարդու ապրուստը նույնչափ աժան է,
Վորչափ զազանինը. դու մի տիկին ես,
Թե շուքը լիներ սոսկ տաք հաղնըվել,
Յերբեք բնությունը պետք չէր ունենա
Այդ պերճ հագուստին, վոր հագել ես դու
Յեւ վոր հաղիվ թե քեզ տաք է պահում:
— Բայց բուն կարիքը... Ո՛հ, դուք աստվածներ,
Համբերություն տվեք. իմ բուն կարիքը
Համբերությունն է: Դուք ինձ, աստվածներ,
Տեսնում եք այստեղ. մի խեղճ ծերունի,
Նույնպես լի վշտով վորչափ տարիքով,
Յեւ յերկսի մեջ ել նույնչափ տարաբախտ.
Թե դուք էք գրդում այս աղջկանց սիրտը
Իրենց հորն ընդդեմ՝ մի դարձնեք ինձ
Այնչափ անզգա, վոր յես հեղությամբ
Հանդուրժեմ գրբան.
Տողտրեցեք ինձ աղնիվ բարկությամբ,
Թող աբցունքները, կանանց զենքերը,
Արատ չը բերեն առնական թըշերխ,
— Վնչ, դուք հրեշավոր անարդ վհուկներ,
Ձեզնից այնպիսի մի վրեժ լուծեմ,
Վոր ամբողջ աշխարհ... Այն բաներն անեմ...
Թե ինչ կը լինեն, չը գիտեմ դեռ յես,
Բայց պետք է զառնան ամբողջ աշխարհի

Ահ ու սարսափը:

Դուք մտածում եք՝ յես լաց կը լինեմ.

Վնչ, լաց չեմ լինի...

Շատ պատճառ ունեմ յես արտասվելու.

Բայց թող այս սիրտը բո՛ւր կտոր լինի,

Նախ քան լաց լինեմ. — Ո՛վ իմ խեղկատակ,

Յես կը խենթանամ:

(Լիրը, Գլուտերը, Քեմտը յեւ խեղկատակը
դուրս են գնում)

ԿՐԻՆՎԱԼ

Յեկեք ներս գընանք,

Մըրիկ կը լինի:

(Մըրիկի հեռավոր ձայնը)

ՌԵԳԱՆ

Այս տունը փոքր է. ծերունի իր խմբով
Ձեռն կարող հանգիստ բնակվել այստեղ:

ԳՈՆԵՐԻԼ

Ի՛ր հանցանքն է այդ. ինքն իրեն զրկեց
Հանգստությունից. այժմ թող տուժի
Յուր խենթությունը:

ՌԵԳԱՆ

Յես հոժարությամբ

Կընդունեմ նըրան, բայց վոչ մի ծառա:

ԳՈՆԵՐԻԼ

Իմ միտքս ել այդ է: Ո՛ւր է կոմս Գլուտերը:

(Գլուտերը կրկին գալիս է)

ԿՐԻՆՎԱԼ

Նա ընկերացավ այն ծերունիի հետ:

— Ահա գալիս է:

ԳԼՈՍՏԵՐ

Արքան շատ սաստիկ բարկության մեջ է:

ԿՈՐՆՎԱԼ

Քայց հեր և զընում:

ԳԼՈՍՏԵՐ

Հրամայեց ձի նստել:

Քայց չը գիտեմ հեր:

ԿՈՐՆՎԱԼ

Ավելի լավ և՛

իր կամքին թողնել. ինքն և իր տերը:

ԳՈՆԵՐԻԼ

(Գլատերին)

Կհմս, յերբեք նրան չը խնդրեք մընալ:

ԳԼՈՍՏԵՐ

Ավաղ, գիշերը վըրա յե հասնում.

Յեվ ցուրտ հողմերը սաստիկ հուզվում են.

Մըղոններ հեռու այս շրջակայքում

Մի մացառ չը կա:

ՌԵԳԱՆ

Ո՛հ, կհմս, կամակոր ու համառ մարդկանց,

Այն աղետները, վոր հրավիրել են,

Պետք և դատ լինեն: Դուռը փակեցեք,

Նա ունի իր հետ հանդուգըն մի խումբ,

Կարող են նըրանք բորբոքել նըրան,

Յերբ վոր նա ինքն ևլ աշխարհ մխաված և

Յեղծել իր ականջը, խոհեմությունը

Յերկյուղ և պատվիրում:

ԿՈՐՆՎԱԼ

(Գլատերին)

Դուռը փակեցեք,

Սոսկալի գիշեր և: Ռեգանի խորհուրդը

Խոհեմ խորհուրդ և: Փախչենք մըրիկից:

(Դուռ ևն գնում)

ԱՐԱՐՎԱԾ ՅԵՐՐՈՐԴ

ՏԵՍԱՐԱՆ Ա.

Մի մացառ. մերիկ՝ վորոսի յեվ կայծակի հետ

Մտնում են ՔԵՆՏԸ և մի առաքեալ, միմյանց հանդիպելով

ՔԵՆՏ

Այդ հով և այդտեղ, բացի մերիկից:

ԱՍՊԵՏ

Մի մարդ, վորի հոգին մերիկի պէս է,
Սաստիկ անհանգիստ:

ՔԵՆՏ

Ձեզ ճանաչում եմ. թագավորն հար է:

ԱՍՊԵՏ

Կովում և ահեղ տաքերքի ընդգեմ,
Հրամայում և հողմին քըշել յերկիրը,
Ձգել ծովի մեջ, կամ թե ուղղունել
Վորորուն ջրերը բարձր քան ցամաքը,
Վոր ամեն ինչ փոխվի, և կամ կանգ առնի.
Փետտում և նա իր ճերմակ մաղերը,
Վոր բուռն հողմերը, կույր կատաղությամբ,
Բռնում են իրենց մոլեգնության մեջ
Յեվ վռնչացնում. ճգնում և մրցել

Փոքրիկ մարդկային իր աշխարհի մեջ *),
 Ընդհարվող հողմի և անձրևի հետ.
 Այսպիսի գիշեր, յերբ նույնիսկ արջը
 Յամաք ծծերով, փակվում է վորջում,
 Յերբ առյուծն անգամ, գայլը սովատանջ՝
 Պատապարում են իրենց մուշտակը,
 Նա վազվզում է առանց գլխարկի
 Յեվ հրավիրում է ընդհանուր ջնջում:

ՔԵՆՏ

Բայց ո՞վ կա իր հետ:

ԱՍՊԵՏ

Իր խենթը միայն,
 Վոր ջանք է անում իր կատակներով
 Փարատել նըրա սրտահերձ վիշտը:

ՔԵՆՏ

Չեղ ճանաչում եմ, պարոն, և վատահ
 Այն ծանոթությամբ, վոր ունեւ արդեն,
 Համարձակվում եմ ձեզ հանձնարարել
 Մաստիկ կարևոր մի ձեռնարկություն:
 Մի պառակտում կա Ալբանի դուքսի
 Յեվ Կորնվալի մեջ, թեև առերես
 Ծածկված է դեռ այդ մի կեղծիքի տակ,
 Բայց նըրանք ունին սպասավորներ,
 (Ինչպես ամեն վորք, վորին իր աստղը
 Մեծ դիրք է տրվել և գահ իշխանի),
 Վորոնք Փրանսիայի արքայի համար
 Հմուտ գիտողներ և լրտեսներ են,
 Նըրանք հայտնել են իրենց տեսածը,
 Դուքսերի վորը, գաղտնի դավերը,

*) Հավանական է, վոր Շեքսպիրն այստեղ ակնարկում է հին աստղաբաշխների կարծիքը, վորոնք սովոր էին մարդուն անվանել Փոքր Աշխարհ (microcosme), տիեզերքը—Մեծ-Աշխարհ (macrocosme)

Furness.

Անգթությունը, վորով վարվեցին
 Ծերուկ բարեսիրտ Թագավորի հետ:
 Դեռ կա ավելի խորարմատ մի բան,
 Վորի, ո՞վ գիտե, նշույլքն են սըրանք:
 Մակայն Ֆրանսիայից գորք է արշավում
 Այս անմիաբան պետության յերկրում,
 Յեվ խոհմությամբ, ոգուտ քաղելով
 Մեր թուլությունից՝ արդեն մըտել է
 Մեր ամենից բավ նախահանգիստը,
 Շուտով ակնհայտ դրոշակ կը պարզվի:
 Կսեցեք ուրեմն. յեթե կարող եք
 Վստահանալ ինձ՝ իսկույն դեպի Դուվր
 Ուղևորվեցեք. այնտեղ կը գտնեք
 Մի անձ, վոր ձեզ շատ շնորհակալ կըլինի,
 Յերբ վոր ճիշտ պատմեք, թե Թագավորը
 Ի՞նչ անընթացիկ և խենթացուցիչ
 Տառապանքի յե յենթարկված հիմա:
 Յես բարետուն աղնը վախեւ եմ,
 Յեվ գիտակցությամբ, վստահությամբ է,
 Վոր այս պաշտոնը յիս հանձնում եմ ձեզ:

ԱՍՊԵՏ

Լավ, մենք այդ մասին դարձյալ կը խոսենք:

ՔԵՆՏ

Վնչ, ավելորդ է. իբրև ապացույց,
 Վոր յես չեմ՝ ինչ վոր իմ արտաքինս է,
 Բացեք այս քսակը և միջինը ձեզ:
 Յերբ Կորդելիային տեսնեք (և անշուշտ
 Կը տեսնեք նըրան), ցույց տվեք այս ողը,
 Յեվ նա ձեզ կասի՝ ո՞վ է այն անձը,
 Վորին տակավին դուք չեք ճանաչում:
 — Թո՛ւհ այս մըրիկին, յես պետք է գընամ
 Փնտուեմ արքային:

ԱՍՊԵՏ

Տվեք ինձ ձեր ձեռքը.
 Ուրիշ խոսք չունեք:

Խոսք՝ շատ քիչ, բայց գործ՝
Շատ առավել կա, քան ինչ արված է.
Փնտռենք արքային, դուք այդ կողմ գնացե՛ք.
Իսկ յես՝ դեպ այս կողմ. ով առաջ գտնի,
Թող ձայն տա մյուսին:

(Տարբեր կողմերից դուրս են գալիս)

ՏԵՍԱՐԱՆ Բ

Մացառի մի այլ մասը

Մերիկը շարունակվում է. մտնում են ԼԻՐԸ և ԽԵՂԿՍՏԱԿԸ

ԼԻՐ

Փչեցե՛ք, հողմեր, և ձեր թռչերը
Պայթեցրե՛ք. փչեցե՛ք և կատաղեցե՛ք:
Յեվ դուք, հեղեղներ ու փոթորիկներ,
Ճայթեցե՛ք, մինչև ջրահեղձ անեք
Ջանդակատներն ու հողմացույցներ,
Դուք, մտքից արագ ծծմբի բոցեր,
Հառաջընթացներ կաղնահերձ շանթի,
Յեկե՛ք, խանձեցե՛ք սպիտակ գլուխըս:
Յեվ դուք, վորոտնում, ամեն բան ցնցող,
Ջրիկ, տափակացրու յերկրի հաստ գունդը,
Փշրիր բընության կաղապարները,
Կործանիր մեկեն բոլոր սերմերը,
Վոր արտադրում են ապերախտ մարդուն:

ԽԵՂԿՍՏԱԿ

Քեռի, պալատի որհնած ջուր *) մի չոր տան մեջ ավելի
լավ է, քան թե այս անձրևի ջուրը տնից դուրս: Տուն դարձիր,
քեռի, և աղջիկներիցդ վողորմություն խնդրիր: Ահա մի գիշեր,
վոր վոչ խելոքին է խնայում և վոչ խենթին:

(Կայծակ)

*) «Պալատի որհնած ջուր» մի ասացված էր, վոր նշանակում էր շողմարար խոսքեր: Ծ. Թ.

(Աչքերը դեպի յերկինգ)

Գոռն, քո բոլոր աղիքներովդ.
Փայթի՛ր, հուր, յեկ, անձրև:
Անձրև, փոթորիկ, փայլակ և կայծակ—
Դուստրներս չեն: Ձեզ չեմ մեղադրում,
Ո՛վ անմեղ տարերք, անսիրության մեջ.
Յես ձեզ չեմ արվել թագավորություն.
Ձեզ չեմ անվանել իմ դավակներս.
Դուք հնազանդություն պարտական չեք ինձ.
Թողե՛ք ուրեմն թափվի իմ գլխիս
Վարչափ սոսկանքներ վոր ձեզ հաճո յե.
Այստեղ կանգնած եմ, յես, ձեր ստրուկը,
Խեղճ, հիվանդ, տրեւոյ, անարգված ծերուկ,
— Բայց, այսու հանդերձ, պետք է ձեզ կոչեմ
Նրվաստ ծառաներ, վոր միացրել եք
Յերկու շարասիրտ աղջիկների հետ
Ձեր յերկնածընունդ լեզեռնները,
Մեր ծեր գլխի դեմ, այսչափ սպիտակ:
Ո՛հ, սհ, սոսկալի:

ԽԵՂԿՍՏԱԿ

Ով վոր մի տուն ունի իր գլուխը ծածկելու համար, մի-
լավ գլխարկ ունի:

Յերբ տափատը տուն գտնի
Նախ քան գլուխը՝ ոթեան,
Թե տափատը, թե գլուխը
Վոջլանոցներ կը դառնան:
Յերբ կին տունի մի աղքատ,
Նա վոջիկներ կառնի շատ:
Ով վոր անի վոտքի մատին՝
Ինչ վոր պետք է աներ սրտին,
Ախ կը քաշի վոտքի կոշտից,
Եւ չի քընի նա իր վըշտից *):

*) Միտքն այն է, վոր ով վոր իր չնչին մի անդամը, ինչպես վոտքի մատը, կգերադասի իր սրտից, վոր կենսական անդամն է, նա շատ վիշտ և ցավ կունենա: Լիբը գերադասել էր Ռեգանին և Գոններին Կորդելիայից:

Stouard Furness.

Վորովհետև դեռ ևս չի յեղել մի գեղեցիկ կին, վոր հայելու
առջև յերեսը չծոմոխի *):

(Մտնում է Բենտը)

Լիթ

Վոչ, յես պետք է լինեմ կատարյալ համբերության որինակ.
այլևս վոչինչ չեմ ապի:

ՔենՏ

Ո՞վ է այդտեղ:

ԽեղհԱՏԱԿ

Մի վեհախառ տեր և մի տափառ **). այսինքն մի խելոք և
մի խենթ:

ՔենՏ

Վայ, տեր, այստեղ եք: Գիշեր սիրողներն
Այսպիսի գիշեր չեն սիրում լերքեք:
Զայրացած յերկինքն ահաբեկել է
Նույնիսկ խավարում խլրտողներին,
Վորոնք փակվել են իրենց վորջերում:
Այն որից, վոր կամ, չեմ տեսել յերքեք
Այսպես սոսկալի լայնասիյուն կայծակ.
Զեմ լսել այսպես ահուկ Վորոտ,
Այսպիսի մըռունչ հողմ ու անձրևի.
Մարդու բնությունը չի կարող տոկալ
Այսքան սոսկանքի և արհավիրքի:

Լիթ

Թող մեծ աստվածները, վորոնք կախել են
Այս տհեղ ժխորը մեր գլխի վըրա,
Վորոնեն իրենց թշնամիներին:

*) Խեղկատակը սովորություն ունի ամեն անգամ, մի շատ սուր խոսք
ասելուց հետո, մի այնպիսի բան ասել, վոր ուշադրությունը ցրվի: Մի գեղեցիկ
վնոջ՝ հայելու մեջ յերեսը ծոմոխը մարդու ծիծաղն է բերում:

Furness.

**) Գուցե Շեքսպիրն այստեղ ակնարկել է այն ժամանակվա մի տաղ-
ված, թե «Գոտուց ցած խելք չկա»:

Դողան գու, թշվառ. վոր ունես քո մեջ
Անպատիվ ֆնացած անհայտ վոճիրներ.
Ծածկիր քեզ, ով ձեռք արյունաշագախ,
Յեվ դու, ուխտադրոժ, և դու, կեղծավոր.
Դրսից առաքինի, դու շրնացող ես.
Յեվ դու, անգգամ, ջարդուփշուր յեղիր,
Դու, վոր հնարագետ դիմակի ներքո
Դավեր ևս նյութել մարդու կյանքի դեմ.
Ո՞վ դուք ամրապես թագցրած մեղքեր,
Ճեղքեցեք միջից ձեր ծածկույթները.
Յեվ այս սոսկալի դատախազներից
Ներում հայցեցեք, — Իսկ յես մարդ եմ,
Վոչ այնքան կեղեքի, վորքան կեղեքված:

ՔենՏ

Ավաղ, գլխարանց. վեհաշուք տեր իմ,
Այս մեր ձախյալում կա փոքրիկ մի հյուղ.
Մարդասեր մի վոր ձեզ այս մըրիկից
Ապաստան կը տա: Հանգչեցեք այնտեղ,
Յես կերթամ կրկին այն դաժան տունը,
Ավելի դաժան քան իր քարերը,
Ուր, այս բոպեյիս, յերբ ձեզ փնտռեցի,
Ինձ մուտք չը տրվին. բայց նորից կերթամ՝
Յեվ նըրանց ժըլատ հյուրասիրությունը
Բռնի կը ստանամ:

Լիթ

Խելքս այլայլվում է:

(Խեղկատակին)

— Յեկ այստեղ, տղաս, ի՞նչպես ևս, տղաս.
Մըսո՞ւմ ես արդյոք. յես ել եմ մըսում:

(Բենտին)

Ո՞ւր է հյուղն, այ մարդ:
Զարմանալի յե կարոտությունը,
Վոր փուչ բաներին մեծ հարգ է տալիս:
— Տեսնենք քո հյուղը: — Դու խեղճ, թշվառ, խենթ,
Կա իմ սրտիս մեջ մի մաս տակավին,
Վոր քեզ խղճում է:

Ով վոր մի քիչ գեթ խելք ունի,
Անձրև ու հողմ վորչափ ել դա՝
Նա իր բախտից գո՛չ կը լինի.
Քանզի անձրև ամեն որ կա:

ԼԻՐ

Ճշմարիտ ե, տղաս: (Քենսիմ) Դէհ, յեկ տա՛ր մեզ այդ հյուսիսը:

(Լիրն ու Քենսը դուրս են գնում)

Սքանչելի գիշեր ե, վոր կարող ե նույնիսկ պոռնիկ կնոջ տապը դովաքնել. գնալուց առաջ պետք ե մի մարգարեյություն անեմ:

Յերբ քահանան ունի քիչ նյութ, խոսքեր շատ,
Յերբ վոր խառնեն գարեջրի մեջ ջուր առատ,
Իշխանները դերձակներին չերբ դաս տան *),
Յերբ վոր արդար լինի ամեն դատաստան,
Յերբ վոր այրեն հերձվածողի փոխարեն,
Նըրանց, վորոնք կանանց յետև դեպերեն,
Յերբ ասպետներ այլևս պարտք չունենան,
Բաժրասողներ աշխարհի վրա չը մընան,
Քսակահատներ ամբոխի մեջ չը մտնեն,
Վաշխառուներ ըսց դաշտի մեջ փող համրեն,
Յերբ դա որը, վոր պոռնիկներս կավատներ
Կառուցանեն յեկեղեցի, տաճարներ,—
Ապա անշուշտ պետության մեջ Ալբրտի
Շատ մեծ շքիով, իրարանցում կը լինի,
Ով վոր ապրի՝ նա կը տեսնի. որ կը գա՝
Վոտքով քայլել սովորություն կը դառնա:

*) Յերբ վոր իշխանները դերձակներին սովորեցնեն զգեստի ձևը ե տալալը:

Մերկինը *) պետք ե այս մարգարեյությունն անի, վորովհետեւ յես ապրում եմ նրա ժամանակից առաջ:

(Դուրս ե գնում)

ՏԵՍԱՐԱՆ Գ

Գլոստերի ամրացում

Մտնում են ԳԼՈՍՏԵՐԸ և ԵԴՄՈՆԴԸ

ԳԼՈՍՏԵՐ

Ավանդ, ավանդ, Եդմոնդ, յես չեմ սիրում այս հակաբնական վարմունքը: Յերբ վոր յես աղձիկներից հրաման խնդրեցի իրենց հորը վողորմելու համար, նըրանք ինձնից խլեցին իմ սեփական տանս իրավունքը, ե իրենց հավիտենական տհաճության սպառնալիքով՝ ինձ արգելեցին, վոր մեկ ել նրա մասին չխոսեմ, չքարեխոսեմ, վոչ ել վորեիցե կերպով նրան ողնեմ:

ԵԴՄՈՆԴ

Խիստ վայրենի ու հակաբնական ե այդ:

ԳԼՈՍՏԵՐ

Լավ ե, բան չասեմ: Դուքսերի մեջ անհամաձայնություն կա. ե վոր ավելի վատն ե՝ յես այս գիշեր մի նամակ եմ ստացել.— վտանգավոր ե դրա մասին խոսել: Յես նամակը փակել եմ իմ պահապանի մեջ: Բոլոր այս անարգանքների մասին, վոր թագավորն այժմ հանդուրժում ե, անպատճառ վրեժ պետք ե հանվի: Մըդեն բանակի մի մասը դուրս ե բերվել ցամաք. մենք պետք ե դառնանք թագավորի կողմը: Յես ուզում եմ նրան փնտռել ե գաղտնապես ողնել նրան: Դու գնա ե դուքսի հետ զորույց արա, վոր նա չնկատի իմ այս գթասրտությունը: Յեթե իմ մասին հարցնի, կասեմ՝ հիվանդ ե ե անկողին ե մտել: Յեթե աչքովս մահա տեսնեմ, ինչպես ինձ արդեն սպառնացել են, այնուամենայնիվ՝ յես պետք ե ողնեմ թագավորին, իմ հին տիրոջս: Մի տարորինակ բան ե պատրաստվում, Եդմոնդ, խնդրեմ, խոհեմ յեղիք:

(Դուրս ե գնում)

*) Մերկինը հին Բրիտանիայի կախարդ մարգարեն ե. Ծ. Թ.

Այդ գթութիւնը քեզ արգելւած եւր.
Յեզ իսկույն դուքսին յես իմաց կը տամ,
Նաեւ լուր կը տամ նամակի մասին:
Դա վարձատրութեան արժանի գործ ե,
Յեզ յես գըրանով պետք ե ձեռք բերեմ
Ինչ վոր իմ հայրը կորցնելու վրա յե.
Այսինքն բոլորը: Յերիտասարդը
Վեր ե բարձրանում, յերբ ծերն ընկնում ե:
(Դուրս ե գնում)

ՏԵՍԱՐԱՆ Դ

Մացառի մի մասը, մի հյուղ

Մտնում են ԼԻՐԸ, ՔԵՆՏԸ և ԽԵՂԵՍՍԱԿԸ

ՔԵՆՏ

Այստեղ ե, տեր իմ, ազնիւ տեր, մտեք.
Բացթող գիշերի բանակալութիւնն
Անչափ դաժան ե, վոր վոչ մի եյակ
Տակալ չի կարող:

(Մտնելը շարունակվում ե)

ԼԻՐ

Թող ինձ:

ՔԵՆՏ

Բարի տեր,

Ներս մտեք այստեղ:

ԼԻՐ

Ուզում ես միթե սիրտըս պատահել:

ՔԵՆՏ

Ավելի կուգայի իմըս պատահել:

Ներս մտեք, տեր իմ:

ԼԻՐ

Քեզ խիստ ե թըվում,

Վոր այս մըրիկը մինչ վոսկորներըս
Ներս ե թափանցում. քեզ համար խիստ ե,

Բայց ուր մեծագույն մի ցաւ ե խրվել,
Փոքրագույնն այնտեղ անզգալի յե.
Արջից խույս կը տաս, բայց թե փախուստը
Առաջնորդի քեզ դեպի ծովն անդ,
Յետ կը գաս կրկին դեպ արջի բերան:
Յերբ հողին հանգիստ ե, մարմինը քնքույշ ե.
Հոգուս մըրիկը խուս ե ինձնից
Վորեւ ուրիշ զգացողութիւն,
Բացի միայն այն, վոր տըրտիւմ ե:
Ա՛խ, վորդեհական ապերախութիւն.
Նույնը չեմ լինի, յեթե բերանըս
Խածնել արա ձեռքը, քանդի սանըրան
Սընունդ ե տանում:— Բայց լսվ կը պատժեմ.
Վոչ, չեմ ուզում, լաւ—Այսպիսի գիշեր
Ինձ դուրս վոնդել: Յաց թափվիր, հող չե,
Յետ կը հանդուրժեմ:—Այսպիսի գիշեր...
Ո, Ռեգան, Գոնեբիլ, ձեր բարի հայրը,
Վորի վեհ սիրտը բաշխեց ամեն ինչ...
Ո՛հ, այդ շաւղի մեջ խելագարվել կա,
Խույս տամ դըրանից. բաւ ե այդ մասին:

ՔԵՆՏ

Ո՛վ բարի տեր իմ, ներս մըտեք այստեղ:

ԼԻՐ

Դու ներս գնա, խնդրեմ. հող տար քո վըրա.
Այս փոթորիկը ինձ արգելում ե
Խորհել այնպիսի բաների վըրա,
Վորոնք ավելի ինձ կը տանջէին:
—Բայց հող չե, մտնենք:

(Խեղկատակին)

—Ներս մտիր, տղաս,

Նախ դու ներս մտիր:—Ո՛վ անտուն աղքատ,
Հայդե, ներս մտիր: Պետք ե աղոթեմ
Յեզ հետո քընեմ:

(Խեղկատակը մտնում ե հյուղի մեջ)

Խեղճ մերկ աղքատներ, ուր վոր ել լինեք՝
Այս ժանտ մըրիկից մտրակված, տանջված,
Ինչպեւ կարող եք ձեր անտուն գլխով
Յեզ սովալըուկ ձեր ստամոքսով,

Յեզ Կատարուողն ցնցողներով
Պատարարել ձեզ այսպիսի ողից:
Ո՛հ, յես այդ մասին շատ քիչ եմ խորհել:
Դեզ լամիբ, հոխություն. կըրբը մի անգամ՝
Ինչ վոր կըրում են չքավորները,
Վոր դու ել թափ տաս քո ավելորդը
Խեղճերի համար, և ցույց տաս նըրանց
Գեթ մի ավելի վողորմած յերկինք:

ԵԴԳԱՐ

(Հյուդի հերթից)

Կանգուն և կես, կանգուն և կես, խեղճ Տոմ:

(Խեղկատակը արտաքին փախչում և
հյուդից)

ԽԵՂԿԱՏԱԿ

Ներս մի մանիբ, քեռի, այստեղ դե կա,
Ոգնեցեք, ոգնեցեք:

ՔԵՆՏ

Ձեռք տուր ինձ:—Ո՛վ կա այստեղ:

ԽԵՂԿԱՏԱԿ

Դե և, դե և, ասում ե՛ս անունս Աղքատ Տոմ ե:

ՔԵՆՏ

(Հյուդի դուռն անալ)

Ո՛վ ես արդյոք դու, վոր մոմուում ես
Այդտեղ, հարդի մեջ: Առնձ յեկ՝ տեսնեմ:

(Մտնում և Ծղաբը, խելագարի հագուստով)

ԵԴԳԱՐ

Հեռու. չար վողին ինձ հալածում ե:
Մարեմու միջից ցուրտ հողմ և փչում *)...
Հըմ, գընա մըտիբ սառն անկողինըդ
Յեզ տաքացրն քեզ:

ԼԻՐ

Դու ել ես արվել

Դո բոլոր ինչքըդ յերկու գուտարերիդ
Յեզ այս որն ընկել:

ԵԴԳԱՐ

Ո՛վ մի բան կտա Աղքատ Տոմին, վորին չար դեռ ման և
ածում կրակի և բոցի, ծանծաղուտի և հորձանքի միջից, ճախի
և ժորուտի վրայով. նա դանակներ ցցից նրա բարձի տակ, խեղ-
դապարաններ՝ նրա նստարանի տակ *), մկնդեղ խառնեց նրա
ապուրի մեջ, սիրտը հպարտացրեց, նրան սախեց կարմիր ձիու
վրա նստած՝ աշտանակել չորս-մատ լայն կամուրջի վրայով,
վորպեսզի բռնի իր ստվերը, վորին չար դեռ գավաճան եր ձեաց-
րել:— Ասոված որն ի քո հինգ զգայարանքդ:— Տոմը մըսում ե...
հն գուդի, դուդի, դուդի **)...Տերը քեզ փրկի թաթառներից, չար
աստղերից և չարքերի դարկելուց. Վողորմութուն արեք Աղքատ
Տոմին, վորին չար դեռ տանջում ե: —Հիմա կրոնեմ նրան այս-
տեղ, այնտեղ և այնտեղ, և կրկին այնտեղ, և այնտեղ:

(Մտնում շարունակվում և)

ԼԻՐ

Դստերըն են նըրան այս որը գըցել:
—Վոչինչ չը պահեցիր. բոլորը արվիր:

ԽԵՂԿԱՏԱԿ

Վոչ, գեթ մի ծածկոց պահեց իր համար, յեթե վոչ ամենքս
Վամաչեցինք:

ԼԻՐ

Այժմ թող բոլոր պատուհանները,
Վորոնք կախված են մեր գլխի վերև,
Վորպես որհաններ մարդկանց մեղքերի,
Դո աղջիկներիդ գլխի վրա տեղան:

ՔԵՆՏ

Նա աղջիկ չունի:

*) Դանակներ, վոր նրանցով իրեն սպանի, պարաններ, վոր իրեն
կախի: Ծ. Թ.

**) «Դուդի» այն ձայնն և, վորպես թե, վոր ցրտից սառածները դող-
դողալով արտաբերում են:

Eccles.

117

*) Այս աղբյուրը հիմնված, ըստ վրմանց, մի քերթվածից, վորն այժմ
կորած է: Ծ. Թ.

Մահ քեզ, դավաճան՝

Վոչինչ չեմ կարող յեղծել բնությունը,
Հասցընել նըրան այս նըվաստության,
Թե վոչ ապերախտ իր աղջիկները:
Մթթե կարգ ե այժմ, վոր վանձած հայրեր
Այսքան չարչարվեն իրենց ժարմին մեջ *):
Արդար պատիժ ե. այդ ժարմինն ե ծնել
Այն պեղիկանի **) չար աղջիկներին:

ԵԴԳԱՐ

Պեղիկոկ նստել եր Պեղիկոկ բլրի վրա ***): Հալո՛ւ. հալո՛ւ, լո՛ւ, լո՛ւ:

ԽԵՂԿԱՍԱԿ

Այս ցուրտ գիշերը մեզ բոլորիս խենթ ու խեղաբար կը դարձնի:

ԵԴԳԱՐ

Զգուշացիր չար դեկի: Հնազանդիր ծնողներիդ, խոսքդ ճիշտ պահիր. մի յերգվիր, մի մեղանչիր ուրիշ մարդու որինավոր կը նոջ հետ, մի զարդարիր սիրուհուդ շքեղ զարդերով: Տոմը մըսում ե:

ԼԻՐ

Դու ռիկ ես յեղիլ:

ԵԴԳԱՐ

Մի պարոն, կանանց ծառայող, հոգով ե սրտով գոռոզ, վոր մազերս գանգուր եյի անում, ձեռնոցներ եյի կրում գլխարկիս մեջ ****), ծառայում եյի սիրուհուս սրտի վավաշանքին, ե նրա

*) Այստեղ Շեքսպիրն ակնարկում ե այն գնդասեղները ե սրածայր գամերը, վորոնք միմյան եյին եղգարի մերկ բազուկների մեջ:

Delius.

** Պեղիկանը հավալուսն ե. այնպես եյին կարծում, վոր հավալուսնը իր արյունով ե կերակրում իր ձագերին:

*** Սա մի կտոր ե հին յերգից, վոր այսպիս ե.

Pillycock, Pillycock fat on a hill
If he is not gone, he sits there still.

**** Թեոքալոն այն կարծիքն ունի, վոր մարդիկ յերեք պարագայում սովորություն ունեյին ձեռնոցներ կրելու իրենց գլխարկի մեջ. նախ ի պատիվ իրենց սիրուհու, յերկրորդ՝ ի պատիվ մի հարգելի բարեկամի, ե յերրորդ՝ ի նշան մի մենամարտության, վոր պետք ե կատարելին:

հետ գործում եյի խավարի գործը. այնչափ յերդում եյի անում, վորչափ բառեր եյի ասում, ե բեկանում եյի նըրանց առ յերեսս գլխած յերկնքի. քնում եյի ցոփություններ հնարելով, ե զարթնում եյի վոր իզորը դնեմ. գինին շատ եյի սիրում, դառեք՝ սաստիկ. իսկ կանանց հարցում՝ յես գերագանց եյի տաճկից: Մըրտով՝ կեղծ, ականջով՝ գյուլահաճական, ձեռքով՝ արյունաշաղախ, ծուլության մեջ՝ խող, գողության մեջ՝ աղվես, անհագության մեջ՝ գայլ, կատաղության մեջ՝ շուն, հափշտակության մեջ՝ առյուծ: Մի թողնի, վոր կոշկի ճոճոցը, կամ մետաքսի խշխշոցը խեղճ սիրտդ կնոջ դերի դարձնեն: Վատքը հեռու պահիր բողանոցներից, ձեռքդ՝ կանանց յուրեկաներից, գրիչդ՝ վաշխավոր տեսարներից, հետո խրոխտա չար դեկի դեմ: Դարձյալ փշենու միջից ցուրտ հողմ ե փչում, ասում ե սո՛ւսմ. մո՛ւս. հե՛յ. նո՛ննի. Դո՛ւքին, վորդիս, բաց թող, թող գա անցնի *):

(Մըրիկը շարունակվում ե)

ԼԻՐ

Ավելի լավ եր քեզ համար՝ դերեզմանի մեջ լինել, քան թե մերկ մարմնով կանգնել յերկնքի այս կատաղության դեմ: Մարդը այս ե միայն: Լավ նկատեցեք սրան. դու մետաքս պարտ չես վորդին, վոչ ել մորթի՝ գաղանին, վոչ ել բուրդ՝ վոշխարին, վոչ ել մուշկ՝ բեշկին **): Ահա մենք չերեք հոգի կանք այստեղ. մենք խարդախված ենք. դու յես իսկականը Անպաճույճ մարդը վոչ այլ ինչ ե, յեթե վոչ մի այսպիսի խեղճ, մերկ, յերկկնդակավոր անասուն, ինչպես դու յես: (Պատահելով յուր զգեստները): Դո՛ւրս, դո՛ւրս, պաճուճանքներ, դո՛ւրս, ցած յեկեք իմ հագից:

ԽԵՂԿԱՍԱԿ

Խնդրեմ, քեռի, մի անի. շատ վատ գիշեր ե մեջը լողալու համար: Մի փոքրիկ կրակ այս ընդարձակ դաշտի մեջ՝ նման կլինեք մի շնճի ցոփասերի մըրին. մի փոքրիկ կայծ, իսկ մարմնի մնացած մասը, սառած. — Նայիր, ահա մի շրջմուխի հուր ***):

* Այս վերջին տողերի մասին սաստիկ հակասական ե յերևակայական բացատրություններ են տրված, վորոնցից վոչ մեկը խնդիրը հաստատագետ չի լուծել. ալեւի հալմանականն այն ե, ինչ վոր շատերը յենթադրել են, վոր այդ մի հին յերգի կրկներգն ե յեղած, ե եղգարն աջից-ձախից այդ բաները յերգելով, ուղում ե իր կեղծ խենթությանն իրական ձե տալ:

** Բեշկ = cigarette, այն անասունը, վոր մուշկ ե տալիս: Ծ. Թ.

*** Յերեկ ակնարկում ե Գլոստերի ջահը, վորը մի քիչ հետո ներս ե մտնում: Ծ. Թ.

ᑲᑦᑦᑭᑦ

Սա այն չար դե Թլխբերտիջերեանն է*)։ Նա սկսում է վաշ-
ղել հրաթաքույցից հետո, և շրջում է մինչև առաջին տեղամ-
աքաղաղի կանչելը։ Նա յե տալիս մարդու աչքի կառարակու-
շույթյուն և նապաստակել շուրթ **): Նա յե փտեցնում սպիտակ
ցորենը և քնատում է աշխարհի խեղճ արարածներին։

Տերեք տնգամ սուրբ Վիթուղ
Դաշտ, սաբ ու ձոր թափառեց,
Մզձվանջին ***) և Նըրա
Ինն ընկերին ձեռք բերեց
Յեկ հրամայեց հեռանա,
Տերգվեցքեց, վաբ չըբանա:
Դե՛. հեռացիր,
Զքացիր:

𐎱𐎠𐎼𐎿

Դ՞ոչապեւ ե ձեր մեծությունը:

(Մտնում է Գլխուկերը՝ մի քանի ձեռքով)։

ۛۛۛ

And he says:

१८६९

Ո՞վ է, ի՞նչ եւ փնտռում:

ԳԼՈՍՏԵՐ

Ո՞վքեր եք այստեղ, ձեր անուաները:

*) Թիվերեքաթիվերեքաթ մեկն և այն չորս գեւորից, վորոնց Սառանս պարեւ
ևր տալիս, իւր տապանապանի ժամանակ և վորոնց անուններն էյին՝ Թրա-
տիկեառոս, Թիւրքեաթիվերեքաթ, Հոսեթիւտանս և Տակոբառառո:

*) «Նապաստակի շուրթ» այն է, վոր մարդուս վերին շուրթը միջից
 ձեղքում է:

*** Այս վտանավորները մի ժողովրդական հմայք են յեղել մզձափանջե
զեմ, և վերջին տողը մտանավորապես ավացույց է այդ բանի, վերով խոսողը
հրամայում է գեին հեռանալ: Բեղլամները, գնդուները և այդպիսի թափառա-
շրջիկները ուժբուրժյան ունեին այս տեսակ հմայքներ ծախել մարդկանց,
ինչպես մինչև հարյուր լինում է Արևելքում. ամեն հիվանդության համար կա-
յին առանձին հրամայական խոսքեր:

ቴዎድሮስ

Խեղճ Տոմ, վեր ուտում ե լազացող գոջա, դադոյ, գորտնուկ,
պատի խլիզ, ջրի խլիզ, վոր իր սրտի կատաղության մեջ, յերբ
վոր չաբ գեւր տանջում ե, կովի թրիք ե աւտում աղցանի տեղ,
կուլ ե տալիս պառավ ժուկ, և սատկած շուն, խմում ե կանգնած
ձահճի կանաչ փրփուր, վոր մտքակով հալածվում ե տեղից տեղ,
վտաքերը գրվում են կոճղերի մեջ, վոր պատժվում ե և բանաբակ-
վում և, վոր ունեցել ե յերեք ձեռք զգեստ իր կռնակի համար,
վեց շապիկ՝ իր, մաքմնի՝ ձի՝ հեծնելու համար, և զենք՝ կրելու
համար.

Տոմսն ավարտելով եր միայն մկնէր.

Փոքրիկ վայրի կենդանիներ

Յոթը յերկար տարիներ *):

Զգուշացիր ինձ հալածողից:—Հանդարտ կաց, Սմոլբին՝ *):
հանդարտ, գեւ:

710056f

Ի՞նչ. ձեր մեծությունը սրանից լավ ընկերներ հոգևո՞ւ:

ቴጥቅሲ

Խաղալի իշխանն ազնվական և,
Անուան և Մոզո, և Մահու:

9.100567

(Lhrh)

Տէր իմ, մեր մարմինն ու արյունը
Մինչ այն աստիճան ապաւանջել են,
Վոր նրանք ատում են իրենց ծնողին ***):

ቴጥፋሂያ

Եղև Տամբ մթառւմ ե:

* Մի հին յերգից են վերցված այս տողերը:

Capeli.

**** Հաբոնեաի գրքում հիշված գեներից մեկն էլ այս է: Ծ. Թ.**

*** Շեքսպիրի նուրբ գծերից մեկն էլ այս է: Եղգարի ձայնի հնչյունը
Ֆանոթ է զայն իր հորը՝ Գլուստերին, վերից Գլուստերն զգացվում է, և մտա-
քերում է իր տնփրանիկ վրդաւ կարծեցյալ ապերախտությունը, և հարակցում
է այդ Լիւրի աղփանքների արածի հետ:

Cowden Clarke.

ԳԼՈՍՏԵՐ

(Լիբրեո)

Տուն յեկեք ինձ հետ.
Առ ձեզ ունեցած պարտականությունս
Ինձ թույլ չի տալիս ամեն բանի մեջ
Լսել ձեր աղջկանց խիստ հրամաններին:
Ինձ հրամայեցին դռներըս փակել.
Յեւ այս բռնակալ գիշերին թույլ տալ
Խուժել ձեզ վըրա. բայց այնու հանդերձ՝
Յես հանդգնեցի գալ և փնտռել ձեզ,
Յեւ ձեզ տուն տանել, ուր դուք կը դառնեք
Կրակ և կերակուր:

Լիբ

(Յույց տալով Եղգարին)

Թողեք, վոր առաջ
Այս փրկիսփայլից մի բան հարցնեմ.

(Եղգարին)

Ի՞նչ է վորոտման պատճառը:

ՔենՏ

Տեր իմ,
Բնդունեցեք դուք նըրա հրավերը,
Գնացեք նըրա տուն:

Լիբ

Թող մի բառ ասեմ
Այս թեբայեցի ուսումնականին.—
—Ի՞նչ ուսում ունես:

ԵԴԳԱՐ

Արգելիլ գերն, ջարդել ճճիներ:

Լիբ

Յեկեք առանձին, ձեզ մի բան հարցնեմ:

ՔենՏ

(Պոստերին)

Կրկին ստիպեցեք, վոր գնա, տեր իմ.
Խեղճը խառնվում է:

ԳԼՈՍՏԵՐ

Միթե մեղք ունի.

Իր աղջիկները մահն են ցանկանում.
—Ա՛հ, բարե՛ Քենտը. նա առաջ, վոր վերջն
Այսպես կը լինի:—Խեղճ աքսորված մարդ,
Ասացիր՝ արքան խելագարվում է,
Ասեմ քեզ, բարեկամ, յես ել մոտ խենթ եմ.
Մի վորդի ունեյի, վորին իմ տոհմից
Այժմ արտաքսել եմ. նա այս վերջերս,
Հենց այս վերջերս, կյանքիս գեմ դավեց.
Բարեկամ, նըրան շատ եյի սիրում.
Վոչ մի հայր վորդուն չի սիրել այնքան.
Ճշմարիտն ասեմ, հենց այդ կսկիծը
Ինձ գժացրել է: Ի՞նչ գիշեր է այս:

(Փոքրիկը շարունակվում է)

(Լիբրեո)

Պաղատում եմ ձերըդ մեծության...

Լիբ

Ներեցեք, պարոն.— ազնիվ փրկիսփայլ,
Պետք է մնամ ձեզ հետ:

ԵԴԳԱՐ

Տոմը մըսում է:

ԳԼՈՍՏԵՐ

(Եղգարին)

Ներս գնա, ա՛յ մարդ, այդտեղ հոգի մեջ *),
Տաքացիլ աղետի:

*) Այստեղ Պոստերը ջանք է անում՝ Լիբին դեպի այն պատասխարանը տանելու, վոր նա պատրաստել է մի գեղջկական տան մեջ, ամբողջ վոչ շատ հեռու: Բայց թաղալորը չի ուղղում բաժանվել իր «փրկիսփայլից». Պոստերը, տեսնելով

ԼԻՐ

Բոլորս մտնենք:

ՔԵՆՏ

(Ամբոցի նստապարիք ջալոյ տալով)

Այս կողմից, միմյան:

ԼԻՐ

Մա ել պետք է դա.

Յես չեմ բաժանվի իմ փիլիսոփայից:

ՔԵՆՏ

(Դուստրին)

Տեր իմ, տեղի տվեք. թույլ տրվեք իր հետ
Սըրան ել բերի:

ԳԼՈՍՏԵՐ

(Քենտին)

Դըրան ել բերեցեք:

ՔԵՆՏ

Դու ել յեկ, այ մարդ, յեկ մեզ հետ՝ գնանք:

ԼԻՐ

Հայդե՛, բարեսիրտ իմ աթենացի:

այդ, համոզում է բեղլամի խենթին, վոր մասն հյուզը, վորպեսզի Լիւրն աչքից
ճեռու լինի, բայց Լիւրն ուզում է նրա յետեից մասնել հյուզը, և ասում է,
«բոլորս մտնենք»: Քենտը ջանք է անում Լիւրին հեռացնել, բայց տեսնելով,
վոր Լիւրը վճռել է չբաժանվիլ իր փիլիսոփայից», խնդրում է Դուստրին,
վոր թողա՞վորի ուղածն անի, և խենթին ել տանի Լիւրի հետ: Դուստրին ընդու-
նում է և խնդրում է Քենտից, վոր նքան ել բերի իր հետ գեպի այն կողմը,
ուր իրենք ուզում են գնալ. այդպես ել լինում է: Այս մանրամասնություն-
ները մենք այն պատճառով ենք շեշտում, վորովհետեւ, յեթե ընթերցողն ուշա-
դրություն չգաքձնի, գուցե չի զանազանի հյուզը այն գեղջկական տնից:
Վեցերոսը տեսարանում հիշված բարձերը և աթոռը ցույց են տալիս, վոր այդ
տունը մի պարզ հյուզ չէր, այլ գուցե Դուստրին վարձակալներից մեկի գեղջ-
կական տնակն էր:

Cowden Clarke.

ԳԼՈՍՏԵՐ

Վոչ մի բառ, վոչ մի բառ:—Յը՛ս...

ԵԴԳԱՐ

Յերբ պայազատ Ռուանդը

Յեկավ այն սե բերդի մոտ,

Ասաց՝ թո՛ւհ, փո՛ւհ զգում եմ

Բրիտանացու արյան հոտ *

(Դուք եմ գնում)

ՏԵՍԱՐԱՆ Ե

Դուստրի ամբոցը

Մտնում են ԿՈՐՆՎԱԼԸ և ԵԴՄՈՆԴԸ

ԿՈՐՆՎԱԼ

Այս ամրոցից գնալուց առաջ պետք է վրեժս հանեմ:

ԵԴՄՈՆԴ

Բայց, միմյան, ինձ կարող են պարսավել, վոր այսպես
վորդիական պարտքը զոհում եմ հավատարմության, մի բան ինձ
սարսափեցնում է, յերբ վոր մտածում եմ զրա վրա:

ԿՈՐՆՎԱԼ

Հիմա յես տեսնում եմ, վոր յեղբայրդ լուկ չար հոգուց դըրդ-
ված չեք, յերբ վոր ուզում եր իր հոքն ստանել. հոր նենգու-
թյունը ավելի ես գըգնում եր վորդու պարսավելի չարությունը:

* Առաջադրանքն հին ժամանակներում, այն տոնիկ յերիտասարդները,
վորոնք ուզում էին ապագա դասնալ իրենց փորձի ժամանակ, կոչվում էին
Anfians, Varlet, Damsel, Bachelier, ամենից ազնիվները կոչվում էին Anfians,
վոր մենք, թարգմանելից պայազատ, վոր կարծում ենք մոտավորապես այդ
նշանակությունն ունի: Նույնպես այս քաղաքի արքայապետն է մի հին բալադից,
վոր նվիրված է յեղի հաշտալուր հերոս և հրեշ սողանող Ռուանդին, Շարլմանի
հանրաժանութ քաջին:

ԵԴՄՈՆԴ

Վորչափ անբախտ մարդ եմ, յես, վոր պետք է զղջամ ար-
դար լինելուս վրա: Այս է այն նամակը, վորից ապացուցվում է,
վոր նա գիտակցորեն Յրանսիայի շահերին նվիրված մի կուսա-
կից եր: Ո՛հ, յերկինք, յերանի՛ այս դավաճանությունը յեղած
չլիներ, կամ գեթ յիս չլինեյի հայտնողը:

ԿՈՐՆՎԱՆ

Յեկ ինձ հետ դքսուհու մոտ:

ԵԴՄՈՆԴ

Յեթե այս նամակի նյութը ձեռն լինի, դուք ահագին դործ
ունեք կատարելու:

ԿՈՐՆՎԱՆ

Ճշմարիտ թե սուտ, այդ քեզ շինեց Գլոստերի կոմս: Հեռա-
դոսիք, թե հայրդ վորտեղ է, վոր կարողանանք հեշտ կերպով
բռնել նրան:

ԵԴՄՈՆԴ

(Առանձին)

Յեթե յես նրան գտնեմ թագավորին ոգնելիս, այդ ավելի
կգորացնի նրա կասկածը: (Բարձրագույն):—Յես կշարունակեմ
իմ հավատարեմ ընթացքը, վորչափ ել պայքարը սաստիկ լինի
պարտաճանաչության և իմ հարազատ արյան միջև:

ԿՈՐՆՎԱՆ

Յես կատարյալ վստահություն կունենամ դեպի քեզ, և դու
իմ սիրտ մեջ կգտնես մի ավելի սիրող հայր:

(Դուրս եմ գնում)

ՏԵՍԱՐԱՆ 2

Մի սենյակ մի ագարակի տան մեջ

Մտնում են ԴԼՈՍՏԵՐԸ, ԼԻՐԸ, ՔԵՆՏԸ, ԽԵՂԿԱՏԱԿԸ և ԵԳԴԱՐԸ

ԴԼՈՍՏԵՐ

Այստեղ ավելի լավ է, քան բաց ոդի մեջ. գոհությամբ

քնդունեցեք այս պատասխարանը: Յես կաշխատեմ ավելացնել՝ ինչ
վոր կարող եմ, և կարկատել մի հանգիստ բնակարան: Իսկույն
կգառնամ ձեզ մոտ:

(Դուրս և գնում)

ՔԵՆՏ

(Գլոստերին)

Նրա մեջ իմացկանության բոլոր ուժը տեղի յե ավել
հուսահատության առջև:—Աստվածները վարձատրեն ձեր բարե-
սրտությունը:

ԵԴԳԱՐ

Յրատերեատուն ինձ կանչում է և ասում, թե Ներոնը գորտ
է վորսում դժոխքի խավարի լճի մեջ: Աղոթիր անմեղ *) և
զգուշացիր չար գեղեցի:

ԽԵՂԿԱՏԱԿ

Խնդրեմ, քեռի, ասա ինձ՝ խելագարն ազնվական է, թե ուսմիկ:

ԼԻՐ

Թագավոր է, թագավոր:

ԽԵՂԿԱՏԱԿ

Վրչ, մի ուսմիկ է, վոր մի ազնվական վորդի ունի, վորով-
հետև խենթ է այն ուսմիկը, վոր իր վորդուն իրենից առաջ
ազնվական է շինում,

ԼԻՐ

Ա՛խ, հազար հոգի լինելին նոքա,
կասկածիլ յեղած տաք շամփուրներով
Յեվ շրվապանով զրոհ տային նրանց վրա:

ԵԴԳԱՐ

Ա՛խ, այն չար գեղ մեջքըս կըծում է:

* Խենթին և կանչում անմեղ, խենթերին հին ժամանակ այդ անունով
էին կանչում:

Խենթ ե՛ ով վոր հավատ քնծայի զայլի հեղության, ճիւղ
սմբակներին, պատանու սերին, կամ բողի յերդումին:

ԼԻՐ

Դէհ, վաճաճ ե՛ նըրանց ուղղակի,
Դատի կը կանչես:

(Եղգարին)

— Յեկ, նստիր այստեղ, հմուտ դատաւոր:

(Խեղկատակին)

— Իսկ դու, իմաստուն, յեկ այստեղ բազմիր:

— Հիմա դուք յեկեք, դուք, քան աղվեսներ:

ԵԴԴԱՐ

Յէս, ինչպես կանգնած՝ աչքեր ե՛ վոլորում: Աչքով ես անուշ
մարդկանց դատաւորանի ժամանակ, տիկին*):

Յեկ ինձ մոտ, Բեսթ, անցիր գետակից:

ԽԵՂԿԱՏԱԿ

Նըրա մակույկը ծակ ունի տակից.

Յեկ նա չի կարող պատճառը հայտնել,

Թե ինչու քեզ մոտ չի կարող անցնել:

ԵԴԴԱՐ

Չար դէն աղքատ Տոմին հալածում ե՛ ստիակի ձայնով:
Հոպտանալ Տոմի փորի մեջ ձնում ե՛ ե՛ յերկու սպիտակ հերինգ **)

Ե՛ ուղում:

Մի կոնչա, սե հրեշտակ, յես քեզ համար ուտելիք չունես:

*) Այս մի հարց ե, վոր ուղղված ե յերեակայական Գոնեքին, կամ մի
այլ կնոջ, ե՛ նշանակում ե՛ շուգում ես մարդկանց ուշքը գրավել մինչև լուկ
հիմն, վոր կանգնած ես դատակալ համար:

Steevens.

**) Մի տեսակ ձուկ՝ հարինգ:

(Թագաւորին)

Ի՞նչպես եք տներ իմ, մի կանգնեք այսպես.

Ապշած, շվարած, պառկեցեք այստեղ,

Յեկ այս բարձի վըրա քիչ հանգստացեք:

ԼԻՐ

Նախ պետք ե՛ տեսնեմ սրանց դատաստանը:

Այժմ կանչեցեք դուք վկաներին:

(Եղգարին)

Դու, արդարության զգեստավոր մարդ,

Նստիր քո տեղը:

(Խեղկատակին)

Դու, արդարության նըրա լուծընկեր,

Նստիր նըրա մոտ:

(Գեմարին)

Դուք ել անդամ եք հանձնաժողովի.

Դուք ել նստեցեք:

ԵԴԴԱՐ

Թող արդար դատենք

Ո՛վ ուրախ հովիվ, քնած ես, թե արթուն.

Դո վոչխարները մտել են արտը.

Յեթե մեկ փչես քո քնքուշ բերնով,

Նըրանք վտանգից կը մնան ապահով:

Փրո՛ո, կատուն գորշ ե:

ԼԻՐ

Առաջ սրան կանչեցեք, սա Գոնեքին ե: Յես յերդումով
ձիայում եմ այս հարգելի ժողովի առաջ, վոր նա քացով զարկեց
Թագաւորին, իր հորը:

ԽԵՂԿԱՏԱԿ

Առաջ յեկեք, տիկին, ձեր անունը Գոնեքին ե:

ԼԻՐ

Նա չի կարող ուրանալ այդ:

ԽԵՂԿԱՏԱԿ

Ներողություն, յես ձեզ մի նստարան կարծեցի:

Արքա Լիր—9

ԼԻՐ

Յեւ ահա մյուսը, վորի չար աչքերը
 Հայտնում են, թե սիրտն ինչ կտավից է.
 — Կանգնեցրեք այգետեղ, զենք, զենք, սուր, կըրճի:
 — Այստեղ ել կաշառք: — Դու, կեղծ դատավոր,
 Ինչեւ թույլ տըվիր, վոր նա խուսափի:

ԵԴԳԱՐ

Որհնովհն ըս հինգ զգայարանքդ:

ՔԵՆՏ

Վեհ, ցավալի՜ յե: Ո՛ւր ե, տեր արքա,
 Ձեք այնքան առած համբերությունը,
 Վորով շատ անգամ պարծենում եյիք:

ԵԴԳԱՐ

(Առանձին)

Իմ արցունքներըս այնքան կարեկից
 Դառնում են նըրան, վոր վախենում եմ
 Նըրանք փչացնեն զեմքիս ծպտումը:

ԼԻՐ

Փոքրիկ շնները, և բոլոր խումբը.
 Տրեյ, Բլանշ, Սիրուհիկ *), — հաջում են վըրաս:

ԵԴԳԱՐ

Տոնի էր զլուխը կղցի նրանց առջև. զո՛ւրս կորեք, քոսուտ
 Զմէր:

Քիմքդ սև լինի, կամ թե սպիտակ **),
 Թեև թույն լինի առաքնեքիդ տակ,
 Դամբու, կամ քերծ ե, կամ մետիս քոսուտ,
 Վորսկան, սպանիոլ, բարակ կամ ըթթոթ.
 Թե պոչը կտրած, թե ագին կըլոր,
 Տամբ մոտ կոռնան, կարտասովեն բոլորը.
 Բավ է, վոր գլուխըս նետեմ նըրանց քով:
 Կը ցատկեն ցանկից, կը փախչեն խմբով:

*) Շան առակներ են:

**) Եւ քիմքը շների աղնվության նշան է: Ծ. Բ.

Դու-դի, դու-դի, հայդե. քայլիք գեպի հսկումները *), տոնա-
 վաճառները և շուկա ունեցող քաղաքները: — Խեղճ Տոմ, յեղ-
 Զյուրդ գատարկ **):

ԼԻՐ

Ուրեմն թող անգամահատեն Թեգանին և տեսնեն, թե ինչ
 կա ծնված սրտի մոտ: Արդյոք մի բնական պատճառ կա, վոր
 այս սրտերն այսպես կարծրացնում ե: (Նղգարիմ). Ձեզ, պարսն,
 յեւ ընդունում եմ իմ հարյուրիս մեջ. միայն թե չե՛ս սիրում ձեր
 հաղուտի ձևը: Դուցե դուք կասեք՝ սա Պարսկաստանի ***) առ-
 քաղ է, բայց լաջն այն է, վոր փոխեք:

ՔԵՆՏ

Դեհ, աղնիվ տեր իմ, պառկեցեք այստեղ և մի քիչ
 հանգստացեք:

ԼԻՐ

Ազմուկ մի հանեք, ազմուկ մի հանեք. քաշեցեք վար սգույր-
 ները. այսպես, այսպես, այսպես, մենք առավոտը կընթրենք:
 Այսպես, այսպես, այսպես:

*) Հսկում այն տոներն եյին, վորոնք կատարվում եյին մի յեկեղեցու
 ոժման ժամանակ. յերբ մարդիկ ամբողջ գիշերն արթուն եյին մնում:

**) Այսինքն խմիչք չունեմ իմ յեղյուրի մեջ. Բեղլամի խենթերը միշտ
 մի յեղյուր ունեյին իրենց կողքից կախված, վորի մեջ լցնում եյին այն
 խմիչքը, վոր մարդիկ իբրև վողբամություն տալիս եյին նրանց:

Malone.

***) Ձեյմա առաջինի թագավորության ժամանակ մի պարսկական գեա-
 պանություն ուղարկված է Անգլիա. գուցե այդ պարսիկների տարրերակ
 հաղուտներն առիթ են յեղիլ այս կատակին:

Wright.

ԽԵՂԿԱՏԱԿ

Իսկ յես անկողին կ'ստանամ կ'ստորին *)

(Կրկին ներս և գալիս Գլոստերը)

ԳԼՈՍՏԵՐ

Յեկ այստեղ, բարեկամ, ո՞ւր և թաղավորը, իմ տերը:

ՔԵՆՏ

Այստեղ և, պարոն, բայց մի անհանգստացրեք նրան,
խեղճ թռիկ է:

ԳԼՈՍՏԵՐ

Խնդրեմ, բարեկամ, մոռնա՞նք գիրկըդ.
Ծածուկ լսեցի, վոր դավ են նյութել
Նրա կյանքի դեմ. ահա այստեղ կա
Պատրաստ պատգարակ, դիր նըրան այստեղ
Յե՛վ տար մինչև Դուվը, ուր դու կը գտնես
Հյուրընկալություն և պաշտպանություն.
Վեր առ տիրոջդ. թե կես ժամ ուշանաս՝
Թե նա և թե դու, և ով վոր նըրան
Պաշտպանել ուզի, փրկություն չունե՛ք.
Վեր առ, վեր առ շուտ և հետևիր ինձ.
Յես քեզ շուտ կտամ ամեն պիտույքներ:

ՔԵՆՏ

Ընկճված բնությունը թմրած քընած և:
Գուցե այս նիւնը բալասան լինի
Քո այդ ջախջախված դատողությանը.
Բայց թե դեպքերը քունըդ խանգարեն
Բժշկությունը դժվար կը լինի:

(Խեղկատակին)

Յե՛կ՝ ոգնիր դու ել, տիրոջդ տաննեք.
Դու ել պետք և գաս:

*) Այս, առերես աննշան խոսքը մի սրտաշարժ հրամեշտ է: Կեսորին անկողին կ'ստանամ, նշանակում է դեռ կյանքիս կեսին հասած պետք և մեղք բարով ասեմ. այնուհետև խեղճին այլևս չենք տեսնում:

ԳԼՈՍՏԵՐ

Յեկեք, յեկեք գնանք:

(Դուրս են գնում՝ Թագավորին տանելով)

ԵԴԳԱՐ

(Մենակ մնալով)

Յերբ մենք տեսնում ենք, վոր մեր մեծերը
Նույն ցավերն ունեն, ել չենք մտածում,
Վոր մեր վշտերը անտանելի յեն.
Ով վոր մենակ և թշվառություն մեջ՝
Մտքով մանավանդ տառապում և նա,
Յերբ վոր խորհում և բարեբախտների
Յե՛վ այն շողջողուն յերջանկություն վրա,
Վոր նա լքանում և հեռանում է.
Բայց շատ ցավերի հաղթում և հոգին,
Յերբ վոր իր վիշտը ընկերներ ունի.
Վորչա՛մի իմ վիշտըս թեթե և հիմա
Ե՛կ հանդուրժելի, յերբ այն նույն բանը,
Վոր ստիպում և ինձ մեջքը՝ ծըռել,
Ծալում է մեջքը խեղճ թագավորի.
Նա թշվառ հայր և, յես՝ թշվառ վորդի:
— Տո՛մ, գնա, միշտ դիր մեծ ազմուկներին*),
Յե՛վ այն ժամանակ հայտնվե՛ր միայն,
Յերբ կեղծ կարծիքը, վոր իր ստությունը
Քեզ ազատեցել և, քո անմեղությունը,
Քեզ վերադարձնի հարգ ու պատիվը:
Թող, ինչ վոր կուզես, լինի՛ այս գիշեր,
Միայն թե արքան խույս տալ կարենա:
Թագնվենք, տեսնենք:

(Դուրս և գնում)

*) «Մեծ ազմուկներին» նշանակում է մոտալուտ պատերազմի նշաններին:

Steevens.

Գլուսեքի ամրոցը

Մտնում են ԿՈՐՆՎԱՆԸ, ՌԵԳԱՆԸ, ԳՈՂԵՐԻԸ, ԵԴՄՈՆԴԸ և
սպասավորներ

ԿՈՐՆՎԱՆ

(Գոմերիից)

Շտապեցեք խելույն ձեր ամուսնու մոտ, ցույց տվեք նը-
րան այս նամակը. Ֆրանսիայի բանակը ցամաքն է յեկած: (Մառա-
նեից) — փնտռեցեք այն դավաճան Գլուսեքին:

(Մի քանի ծառաներ դուրս են գնում)

ՌԵԳԱՆ

Խելույն կախեցեք նրան:

ԳՈՂԵՐԻ

Աչքերը հանեցեք

ԿՈՐՆՎԱՆ

Գուք հանձնեցեք նրան իմ բարեկամությունը:— Եղբայն, դուք
մեր քրոջն ուղեկից յեղեք: Այդ պատիժները, վոր մենք պարտա-
վոր ենք տալ ձեր դավաճան հորը, հարմար չեն, վոր դուք տեսնեք:
Խորհուրդ տվեք դուքսին, վորի մոտ եք գնում, վոր ամենայն
շտապով պատրաստություն տեսնի. մենք էլ պատրաստ ենք նույնն
անելու: Մեր սուրճանդակները պետք է արագ լինեն և մեզ
միմյանցից լուր հասցնեն:— Գնաք բարով, սիրելի քույր:— Գնաք
բարով, միմյանց Գլուսեք:

(Մտնում է Ուլադը)

ԿՈՐՆՎԱՆ

Ի՞նչ լուր, արքան մեր է:

ՈՍՎԱՆԴ

Միտրդ Գլուսեքը

Նըրան այստեղից տանել է տված.

Ֆրեանունիսի հոգի իր ասպետներից,

Ամենայն փութով փնտռելով նըրան,

Մեր դռան առաջ նըրան միացան,
Յեվ լորդի մի քանի ծառաների հետ
Բոլորը միասին դեպի Դուվը գնացին,
Ուր, պարծենում են, վոր պիտի գտնեն
Զինված բարեկամներ:

ԿՈՐՆՎԱՆ

Զիեք բերել տուր

Տիրուհուդ համար:

ԳՈՂԵՐԻ

Գնաք բարով, իմ դուքս,

Գնաք բարով, քույր իմ:

(Գոմերիից յեվ Եդմոնդը դուրս են գնում)

ԿՈՐՆՎԱՆ

— Եղբայն, դնաս բարով.

— Գնացեք բերեք դավաճան Գլուսեքին:

Թեև իմ կապեցեք մի գողի նըման,

Յեվ բերեք մեր առջև: Թեև չենք կարող

Առանց դատաստանի դիպչել իր կյանքին,

Բայց թող կորանա մեր իշխանությունը

Մեր ցամաքի առջև, վորը պարսավել

Կարող են մարդիկ, սակայն վոչ սանձեր:

Ո՞վ է, դավաճանը:

(Ներս են գալիս ծառաները՝ Բերեյով Գլուսեքին)

ՌԵԳԱՆ

Ապերախտ աղվեսն է:

ԿՈՐՆՎԱՆ

Ամուր կապեցեք այդ չոր թեղի:

ԳԼՈՍՏԵՐ

Ի՞նչ են կամենում ձեր բարձրությունը.

— Բարի բարեկամներ, խորհեցեք գտնել,

Վոր դուք ինձ հյուր եք. մի անպատվեք ինձ,
իմ բարեկամներ:

ԿՈՐՆՎԱԼ

Կապեցե՛ք՝ ասում եմ:

(Կապում եմ նրան)

ՌԵԳԱՆ

Պինդ, պինդ կապեցե՛ք:—Ո՛ր, պի՛ղծ՝ դավաճան:

ԳԼՈՍՏԵՐ

Անողորմ տիկին. յես դավաճան չեմ:

ԿՈՐՆՎԱԼ

Կապեցե՛ք նրբան այս բազկաթուին.

—Սրիկն, կը տեսնես...

(Ռեգանը փետում և նրա մորուքը)

ԳԼՈՍՏԵՐ

Աստվածները վկա,

Անաղնիվ գործ և մորուքս փետեր:

ՌԵԳԱՆ

Այսպես սպիրտակ, և այսպես մատնի՛չ:

ԳԼՈՍՏԵՐ

Չարասիրտ տիկին, իմ այս մաղերըս,

Վոր իմ կըզակից փետում ես այսպես,

Կը կենդանանան, կը մեղադրեն քեզ:

Չեր հյուրընկալն եմ. այդ գողի ձեռքերով

Չպիտի պատռեյիք հյուրասեր դեմքըս:

Ի՞նչ եք կամենում:

ԿՈՐՆՎԱԼ

Դեհ, ասն, այ մարդ,

Ի՞նչ նամակներ են, վոր ստացել ես

Վերջերս Ֆրանսիայից:

ՌԵԳԱՆ

Ճիշտ պատասխանի՛ր,
Գանդի մենք գիտենք ճշմարտությունը:

ԿՈՐՆՎԱԼ

Յեվ ի՞նչ կապ ունես մատնիչների հետ,

Վորոնք վերջերս դամաք են յելած

Այս պետության մեջ:

ՌԵԳԱՆ

Վորոնց մոտ արդեն

Ուղարկել ես դու լուսնոտ արքային:

Խոսիր:

ԳԼՈՍՏԵՐ

Մի նամակ ստացել եմ յես,

Յեվ նրա մեջ կան կարծիքներ միայն,

Յեվ այն՝ մի անձից, վոր չեզոք մարդ է,

Վոչ թե թշնամի:

ԿՈՐՆՎԱԼ

Նենգություն:

ՌԵԳԱՆ

Յեվ կեղծի՛ք:

ԿՈՐՆՎԱԼ

Ո՛ւր ուղարկեցիր արքային:

ԳԼՈՍՏԵՐ

Դուվր:

ՌԵԳԱՆ

Ինչո՞ւ համար Դուվր, քեզ չարդելեցի՞ն

Ի գին ...

ԿՈՐՆՎԱԼ

Ինչո՞ւ համար Դուվր, առաջ այդ աստ:

ԳԼՈՍՏԵՐ

Կապված մի ցլցի՝ պետք է դեմ դնեմ՝
Ամբողջ վոհմակին *):

ՌԵԳԱՆ

Ինչո՞ւ հայտարարում եմ:

ԳԼՈՍՏԵՐ

Ինչո՞ւ.— Վասնզի չուզեցի տեսնել,
Վոր այդ անողորմ քո յեղունդները
Փորեն ծերուկի խեղճուկ աչքերը
Յե՛վ վայրագ քույրդ կնճի ժանիքներ
Մըխի այն ոճյալ և սուրբ մարմնի մեջ:
Այնպիսի մըրիկ եր (և նա գլխաբաց՝
Դժոխքի պես սև մի գիշերվա մեջ
Հանդուրժեց դըրան), այնպիսի մըրիկ եր,
Վոր ծոփ ուզում եր ուռչել, բարձրանալ,
Ջրբահեղձ մարել հույսը աստղերի,
Այն ինչ, խեղճ ծեր սիրտ, ինքն էլ յերկնքին
Ոժանդակում եր անձրեկու մեջ:
Յեթե գայլերը այդ ժանտ ժամանակ
Դային վոհնային քո դռան առջև,
Կասեյիր՝ «Դուռը բաց, բարի դռնապան»,
Յե՛վ բոլոր ուրիշ անողորմները
Տեղի կը տային: Բայց պետք է տեսնեմ
Թե՛սփոր վրեժը, յերբ վոր խոյանա
Դրո՞հ տա ձեռն նրման զավակների վրա:

ԿՈՐՆՎԱԼ

Դու այդ չես տեսնի՝ Տըղերք, աթուր
Ամուր բռնեցեք: — Այդ աչքերը
Յես պետք է կոխ տամ:
(Դրոստերին պառկեցնում են գետնին, և Կորնվալը կրունկ-
ներով կոխ և տալիս նրա մի աչքը և դուրս և հանում):

*) Այսինքն շների վոհմակին: Թ. Թ.

ԳԼՈՍՏԵՐ

Ո՛վ վոր հույս ունի ծերության հասնել՝
Ոգնության գա ինձ: — Ո՛վ անդուր: — Աստվածներ՝

ՌԵԳԱՆ

Մեկ կողմը մյուսին կը ծաղրի, մյուսն էլ:

ԿՈՐՆՎԱԼ

Յեթե դու տեսնես վրեժխնդրությունը ...

ՄԻ ԾԱՌԱՍ

Կանգ առեք, միլոնդ. իմ մանկությունից
Ձեզ ծառայել եմ, բայց չեմ արել ձեզ
Քան այս մեծագույն մի ծառայություն,
Ստիպելով ձեզ չանել այդ բանը:

ՌԵԳԱՆ

Ի՞նչ ասել ե, շնն:

ԾԱՌԱՍ

Թե ունենայիր

Մորուք կըզակիդ՝ այնպես ցնցեյի...
Ի՞նչ ես ուզում անել:

ԿՈՐՆՎԱԼ

Իմ սարսուկ:

(Սուրբ քաշելով հարձակվում է ծառայի վրա):

ԾԱՌԱՍ

Լավ, վոր այդպես ե, յեկ և փորձիր դու
Բարկության բախտը:

(Մեծամարտում են, Կորնվալը վիրավորվում է):

ՌԵԳԱՆ

(Մի այլ ծառայի):

— Տնւր ինձ քո սուրբ,

Մի դեղջուկ այսպես հանդուգըն լինի:

(Յետեվից գալիս է յեկ արսվ սպանում է ծառային):

ԾԱՌԱՅ.

Ո՛հ, սպանվեցի:—Միլոբրդ, ձեզ մընաց
Մի աչք, վոր տեսնեք այն պատուհասը,
Վոր իջնելու յե նըրա գլխին:—Ո՛հ:

ԿՈՐՆՎԱԼ

Վորպեսդի չը տեսնի, թող առաջն առնենք:
(Մյուս աչքն ել հանում ե)
—Դուրս, անարդ մածված, այժմ ուր ե փայլըդ:

ԳԼՈՍՏԵՐ

Խավար բոլորը, և անհուսություն:
—Ա՛խ, եղմոնդ վորդիս.—Ո՛վ եղմոնդ, վառիւր
Բոլոր կայծերը քո բընության մեջ,
Վոր վրեժը լուծես այս անգութ գործի:

ՌԵԳԱՆ

Դուրս, մատնիչ սրիկն, մեկին ես կանչում,
Վոր քեզ առում ե. նա յե մեզ հայտնել
Քո մատնությունըդ. նա խիստ բարի յե,
Քեզ նըման մարդուն խղճալու համար:

ԳԼՈՍՏԵՐ

Վո՛հ, իմ խնթություն, ուրեմն եղգարը
Անմեղ ե յեղել..
—Բարի աստվածներ, ներեցեք ինձ այդ
Յեզ տվեք նըրան բարեբախտություն:

ՌԵԳԱՆ

Գնացեք, նըրան դուրս վոնդեցեք,
Թող հոռոտելով նա մինչև Դուվր
Ճանապարհ փնտռի:—Բայց ի՞նչ ե, միլոբրդ,
Ինչո՞ւ ձեր գեմըը այդպես փոխվում ե:

ԿՈՐՆՎԱԼ

Վերք եմ ստացել, յեկ ինձ հետ, աիկին,
—Դուրս վոնդեցեք կույր սրիկային,

Աղբի մեջ դեցեցեք այդ պիղծ սարուկին.
—Ռեզան, արյունըս շատ հորդ ե հոսում,
Շատ անժամանակ յեղավ այս վերքը
Տուր ինձ բազուկըդ:

(Դուրս ե գնում Կորնվալը՝ Ռեզանին հեկված)

(Մատաները Գլոստերին դուրս են տանում)

Բ. ԾԱՌԱՅ

Թող բարի լինի այս մարդու վերջը,
Յես չեմ վախենա ամեն մեղք գործել:

Գ. ԾԱՌԱՅ

Յեթե այդ կինը յերկար կյանք տեսնի
Յեզ վերջը մեռնի ծերության մահով,
Բոլոր կանայքը հրեշներ կը դառնան:

Բ. ԾԱՌԱՅ

Հետեենք կոմսին և գնանք փնտռենք
Բեղլամի խենթին, վոր նըրա համար
Ուղեցույց լինի՝ ուր վոր նա ուզի:
Նըրա թափառիկ խելագարությունն
Ամեն բան կընդունի:

Գ. ԾԱՌԱՅ

Դու գընա, իսկ յես մի քիչ շոր գտնեմ
Յեզ մի քանի հատ ձվի ձերմըկուց
Խեղճի արյունոտ յերեսի համար:
Յերկինքը նըրան ոգնական լինի:

(Ձանազան կողմերից դուրս են գնում)

4

ԱՐԱՐՎԱԾ ՉՈՐՐՈՐԴ

4

ՏԵՍԱՐԱՆ Ա.

Մի բաց դաս.

Մտնում ե եղբարք

ԵՒԳԱՐ

Դարձյալ այս ե լա՛վ, կամա՛վ անարգվել,
Քան միշտ անարգվել և շողորթթվել,
Բախտի ամենից ստոր, ապաշնորհ,
Անարգ եյալին ել դեռ մի հույս ունի
Յե՛վ դեռ ապրում ե յերկրուղից ազատ:
Թե կա վողբալի մի փոփոխութիւն,
Յերջանկագույնի համար ե միայն.
Ապերջանիկը վերադառնում ե
Դեպի ցնծութիւն: Յե՛կ բարով, ուրեմն,
Ո՛վ անմարմին ող, վոր ընդգրկում եմ:
Այն չքավորը, վորին փչելով
Դու թափալեցիր անհուսութեան մեջ,
Վրջինչ պարտ չմնաց քո մրրիկներին*):
— Բայց ո՛վ ե գալիս:

(Մտնում ե Գլոստերը, մի ծեր մարդու
ուղեկցութեամբ)

Հայրը՛ս, այսքան խեղճ մի ուղեկցի հետ:
Աշխարհ, աշխարհ, աշխարհ,
Թե տարրերնակ հողորդութիւնքը:

*) Այսինքն մրրիկներդ թափեցին նրա գլխին իրենց բոլոր կատաղութեանը, և նա վա՛ղ մի բանով պարտական չմնաց նրանց:

Hudson.

Չը ստիպեցին մեզ գարշել քեզանից,
Կյանքը չեմ տեղի տա տարիքի առջև*):

ԾԵՐՈՒԿ

Ո՞վ իմ բարի տերս, յես ձեր ճորտն**) եմ յեղել և ձեր հոր
ճորտը, այս ութսուն տարին:

ԳԼՈՍՏԵՐ

Դընա, հեռացիր, բարի մարդ, գընա.
Բո ոգնությունըդ ինձ անոգուտ ե,
Իսկ քեզ՝ փասակար:

ԾԵՐՈՒԿ

Ձեք կարող տեսնել

Ձեր ճանապարհը:

ԳԼՈՍՏԵՐ

Ճանապարհ չունեմ,

Ուրեմն աչքերի կարիք ել չունեմ,
Յերբ աչք ունեցի, վոտքս սայթաքեց:
Մեզ անուշադիր դարձնում են հաճախ
Մեր միջոցները, մեր թերությունը***)
Շատ հեշտ դառնում են մեզ աջակիցներ:
— Ո՛հ, իմ սիրելի վորդի Նդգարըս,
Բո խաբված հորդդ սրտմտության զոհ.
Թե այնքան ապրեցի, վոր քեզ տեսնեցի
Շողափելիքով, կարող եյի ասել,
Վոր իմ աչքերը բացվել են կրկին:

ԾԵՐՈՒԿ

Ո, հո, այդ ո՞վ ե:

*) Մարդ չեմ ուզի մեռնել՝ վերջափ ել ծերանար:

**) Այս բառը, թեև առկապան, չունի իր համանիշը vassal նշանակելու
համար. աղ պատճառով ե, վոր մենք գործածեցինք այդ: Ծ. Թ.

***) Մեր թերությունը—նշանակում ե միջոցներից զուրկ լինելը, որե-
նակ՝ աչք չունենալը և այլն: Ծ. Թ.

Ո՞վ իմ աստվածներ.

Ո՞վ կարե ասել՝ «յես դժբախտության
Դադաթն եմ հասել»: Ավելի քան յերբեք
Դժբախտ եմ յես այժմ:

ԾԵՐՈՒԿ

Խեղճ աղքատ Տոմս ե:

Տակավին վատթար կարող եմ լինել:
Դժբախտությունը չի հասել դեռևս.
Իր վերջնակետին, քանի դեռ մարդը
Կարող ե ասել «Այս ե վատթարը»:

ԾԵՐՈՒԿ

Այ մարդ, ուր ես գնում:

ԳԼՈՍՏԵՐ

Դա մուրացկան ե:

ԾԵՐՈՒԿ

Մուրացկան ե խենթ:

ԳԼՈՍՏԵՐ

Դեռ քիչ խելք ունի,

Թե վոչ, չեմ կարող մուրացկան լինել:
Անցած գիշերվա այն մարդիկ մեջ՝
Յես տեսա մի մարդ այս տեսակներից
Յեվ մտածեցի, վոր մարդ մի վորդ ե*):
Հետո իմ վորդին յեկավ մտքիս մեջ,
Յեվ սակայն միտքըս դեռ այն ժամանակ
Ներհակ եր նըրան: Բայց այնուհետև
Շատ բան լսեցի: Ինչպես ճանձները
Մանկանց ձեռքի մեջ, այդպես ենք և մենք:

*) Տես Հոր, գլ. ԻԵ, համար 6 «ել ուր կֆա մարդը, վոր մի վորդ ե, և
մարդու վորդին, վոր մի ճիճու յե»: D-r Krauth.

Աստվածներ ժողովարձության համար
Ապանում են մեզ:

ԵԴԻԱՐ

(Առանձին)

Ի՞նչպես ե յեղել*).

Շատ վատ արվեստ ե՛ր արտաբերյալն առջև
Խենթի դէմ խաղալ և վերապրել
Թե ուրիշներին, և թե ինքն իրեն:

(Բարձր)

Որհնյալ լինես, տե՛ր:

ԳԼՈՍՏԵՐ

Սա այն մերկ մարդն է:

ԾԵՐՈՒԿ

Այո, տե՛ր:

ԳԼՈՍՏԵՐ

Ուրեմն, խնդրեմ դու գրնան:

Յեթե կարող ես, իմ սիրո համար,
Մեկ-յերկու մղոն ալյուրից հեռու
Դուրսի շավղի մեջ՝ գալ և մեզ հասնել,
Ի սեր քո նախկին անձնավորության
Արա այդ խնդրեմ, և բեր մի ծածկոց
Այս մերկի համար, վորին կը խնդրեմ
Ինձ առաջնորդել:

ԾԵՐՈՒԿ

Ավանդ տե՛ր, նա խենթ է:

ԳԼՈՍՏԵՐ

Փամանակները պատուհասն է այդ,
Այժմ կույրերին առաջնորդում են
Խելագարները, իմ առածս արա:

*) Հայտնական է, վոր Եդգարը տեսնելով իր հոր կուրությունը, զարմացել է և հարցնում է, «Ի՞նչպես ե յեղել, վոր նա կուրացել է»: Furness.

Յե՛վ կամ, մանավանդ, արա՛ ինչ կամքդ է,
Միայն հեռացիր:

ԾԵՐՈՒԿ

Պետք է նրա համար

Իմ ամենալավ հագուստըս բերեմ,
Ի՛նչ կուզե՛ թող լինի:

ԳԼՈՍՏԵՐ

Ի՛նձ նայիր, մերկ մարդ:

ԵԴԻԱՐ

Խեղճ Տոմը մրսում է:

(Առանձին)

Սըրանից ափելի

Չեմ կարող կեղծել:

ԳԼՈՍՏԵՐ

Յե՛կ ալյուրի, այ՛ մարդ:

ԵԴԻԱՐ

(Առանձին)

Յե՛վ սակայն պետք է:

(Բարձր)

Որհնված լինեն

Քո քաղցր աչքերը, արյուն է հոսում:

ԳԼՈՍՏԵՐ

Հանաչում ես Դուրսի ճանապարհը:

ԵԴԻԱՐ

Այո, պատով և զոնով ձիու ճանապարհ, և վտաքի
ճանապարհ: — Աղքատ Տոմը վախից գժվել է: Աստված փրկի
քեզ չար սատանայից, բարի մարդու վորդի: Հինգ դե մեկ
անգամից մտել են խեղճ Տոմի մեջ. անառակության դեմ, Որե-
լիկուտ, Հորբիդիդանս՝ համբուրյան իշխանը, Մահու՝ գողությանը,
Մոդո՝ մարդասպանությանը և Ֆլիբբերտիֆբրեսո՝ ծամածուռ-

Թյան դեր, վոր հիմա իշխում ե աղախինների ե սպասուհի-
ների վրա*)։ ուրեմն, որհնյալ լինես, տերս։

ԳԼՈՍՏԵՐ

Առ այս քսակը, դու, վորին յերկնքի
Պատուհասները ընկճել են այսքան,
Ամեն հարվածի յենթակա արել,
Իմ Թշվառությունը բախտ ե քեզ համար։
— Աստվածներ, դուք միշտ այսպես գործեցեք.
Թողեք հեշտասուն, հզօրացած մարդը,
Վոր ձեր պատվիրանն արհամարհում ե,
Վոր աչք ե խփում, քանզի չի դուռ,
Թողեք զգա նա ձեր զորությունը.
Թողեք բաժանումն այսպես վերջ դնի
Չափադանցության, ե ամեն մի մարդ
Ունենա այնքան, վորքան պետք ունի։
— Ճանաչում ես Դուվոր։

ԵԴԴԱՐ

Ճանաչում եմ, տեր։

ԳԼՈՍՏԵՐ

Մի ժայռ կա այնտեղ,

Վորի բարձրաբերձ ե թեքված գլուխը
Ահով նայում ե, փակված ծովի մեջ.
Դու միայն տար ինձ ճիշտ նրա յեզրը.
Յես կը բարձրեմ Թշվառ վիճակից
Թանկագին բանով, վոր ունեմ ինձ մոտ.
Այնտեղ վոր հասնեմ, ել առաջնորդի
Կարիք չունեմ յես։

*) Ընդհանուր կարծիքն այս ե, վոր Շեքսպիրն այս դերերի ե չար վոդի-
ների անունները ե դրանց վերաբերյալ մանրամասնությունները վերցրել ե
Հարսնետի «Declaration» անվանված գրքից։ Այդ գրքի մեջ խոսված ե Մառ-
վիլյամս անունով մի աղախին մասին, վորի վորովայնի մեջ կային դժոխքի բո-
լոր դեհերը։ Այստեղ Շեքսպիրն ակնաբեկում ե այդ աղախինն, ե նմանապես եզ-
մանդ Փեքամի ընտանիքի աղախիններին, վորոնք բոլորն այսօրհան եյին
Մ. Թ.

ԵԴԴԱՐ

Տուր ինձ քո թեր.

Չքաղոր Տոմը կառաջնորդի քեզ։

(Դուք եմ գնում)

ՏԵՍԱՐԱՆ Բ

Ալբանի դուխի պալատը

Մտնում են ԳՈՆԵՐԻԼԸ ե ԵԴՄՈՆԴԸ

ԳՈՆԵՐԻԼ

Բարե ձեզ, միլորդ։ Յես զարմանում եմ,
Վոր իմ հեղգ այրեմ*) չեկավ ընդառաջ։
(Մտնում ե Ուլադը)

— Լավ, ուր ե տերըդ։

ՈՄՎԱԼԴ

Տանն ե, տերուհի։

Բայց յերեք մի մարդ չի փոխվի այնքան.
Յես ներան խոսեցի ցամաք դուրս յեկած
Բանակի մասին. նա ժպտաց միայն.
Նրան ասացի, վոր դուք գալիս եք,
Ասաց. «Ավելի վատ»։ յերբ վոր խոսեցի
Դուստերի արած մատնության վերա
Յեղ նրա վորդու հավատարմության, —
Ինձ տխմար կանչեց ե հետո ասաց,
Վոր յես աստառը յերես եմ շինել.
Այն, ինչ վոր պետք ե վատ թվար նրան,
Դուր ե գալիս այժմ, ինչ պետք ե դուր գար.
Այժմ անախորժ ե։

ԳՈՆԵՐԻԼ

(Եղմանդին)

Ուրեմն ել մի գաք,

* Գետը ե հեղեղ, վոր Ալբանի դուքսը, Գոնեռիլի ամուսինը, առաջին-
աբարվածի վերջից, սկսում ե դժգոհ լինել իր կնոջ կեղեքելի ե ապերախ-
վարմունքից։
Sohnson

Նըրա տմարգի տարտափանքն և այդ,
 Վոր չի հանդգնում մի բան ձեռնարկել-
 նա անզգա յե անարգանքների,
 Յերը հարկավոր և հատուցում անել:
 Այն բաղձանքները, վոր հայտնում էյինք
 Ճանապարհի վրա, գուցե կատարվեն:
 Յետ դարձեք, եղմոնդ, իմ յեղբորս մոտ.
 Փութացրեք նըրա գործողովը.
 Առջնորդեցեք նըրա զընդերը
 Պետք և ամուսինս ինձ տա զենքերը,
 Իսկ յես իլիկը նըրան պետք և տամ:

(Ուվալդիմ-մատմանիշ անելով)

Այս հավատարիմ ծառան կը լինի
 Միջնորդ մեզ համար, և շատ չի անցնի,
 Վոր դու կը լըսես սիրունուդ կամքը,
 Յեթե բավական հանդուգն լինես
 Քո ողտի համար:

(Տալով նրան մի եիշատակ)

Ա՛ռ, կըրեր դու այս,
 Մի խոսիւր վոչինչ. ցած բեր գըլուխըդ:

(Համբուրում և նրան)

Թե այս համբուրը լեզու ունենար,
 Վոզուդ թոխք կը տար մինչև յեթերքը.
 Հասկացիր և գնա. բարի հաջողում:

ԵՊՄՈՆԴ

Յես ձերն և՛ ցըմահ:

ԳՈՆԵՐԻԼ

Ո՛հ, իմ սիրելիս:

(Եզմանդը գնում է)

Վո՛րչափ տարբեր և մի մարդ մի մարդուց.
 Քեզ և վայելում մի կնոջ սերը,
 Իսկ իմ տիմարը հափշտակում և
 Մարմինըս:

ՈՍՎԱԼԴ

Տիկին, դուքսը դալիս և:

(Մտնում և Ալբանի դուքսը)

ԳՈՆԵՐԻԼ

Գոնե սուլիչի յես արժանի եյի*):

ԱԼԲԱՆԻ

Ավաղ, Գոնեբրիլ, դու արժանի չես
 Նույնիսկ այն փոշուն, վոր բուռն հողմը
 Փչում և դեմքիդ:—Յես սարսափում և՛
 Քո խորհուրդներից: Այն բնությունը,
 Վոր անարգում և իր ծագումն անգամ,
 Չի կարող զսպվել վոչ մի պատվարով:
 Մի վոստ, վոր ինքնին զատվում և բնից
 Յեվ իրեն զրկում մայրական հյութից,
 Կը խամբի անշուշտ և կը գործած լի
 Մահացու պետքի**):

ԳՈՆԵՐԻԼ

Բավ և, իհնթ խոսքեր:

ԱԼԲԱՆԻ

Իմաստությունը և բարությունը
 Անարգների մոտ անարգ են թվում.
 Յեվ գարշությունը իր համար միայն
 Անուշ համ ունի: Ինչե՛ր արեցիք.
 Վաղբեր, վոչ դուստրեր, ինչե՛ր գործեցիք.
 Մի հայր, մի բարի և խեղճ ծերունի՛,
 Այնքան վեհաշուք, վորի վոտքերը
 Շղթայած արջն իսկ կուզենար լիզել,
 Դուք, բարբարոսներ, այլասերվածներ,

* Մի անգլիական առած կա այսպես. «Es is a poor dog, thar is not Worth the Whistling» [Շատ անպիտան պետք է լինի այն շունը, վորին սուլել (յես կանչել) անգամ ավելորդ է]:

**): Կախարդները թառամած վոստերը գործածում էյին զանազան չար հմայքների համար. այդ և ակնարկում Շեքսպիրը:—Warburton. Իսկ Մոլերը լեյը կարծում է, վոր պարզապես նշանակում է՝ «կգործածվի այրվելու համար»:

Խենթացիք նրան:

Ի՞նչպես թույլ տվեց բարե յեղբայրը*),
Վոր այդպես անեք. մի մանր, մի խնամ,
Վորին նա այնքան բարեքներ արավ:
Յեթե յերկինքը չուղարկի փութով
Իր տեսանելի պաշտոնյաներին
Այս պիղծ մեղքերը պատժելու համար,
Կը դա ժամանակ, յերբ մարդիկ միմյանց
Կը սկսեն ուտել, ովկիանոսի
Հրեշների նըման:

ԳՈՆԵՐԻԼ

Կաթնալյարդ դու մարդ,
Վոր թշեր ունես ապտակի համար,
Յե՛վ գլուխ՝ անարգանքի. վոր չունես մի աչք՝
Պատիվն ամոթից զանազանելու.
Վոր չես իմանում, թե տխմարները
Միայն խղճում են այն չարերի վըրա.
Վորոնք պատժվում են՝ նախ քան վարենան
Զարեքը գործել Ո՞ւր և թըմբուկը.
Ֆրանսիան պարզել և յուր դրոշակները
Մեր լուռ յերկրի մեջ. և սպանիչը
Մի ցցունազարդ սաղավարտ գլխին,
Քեզ սպառնում ե... իսկ դու, խելագար,
Նստել ես հանգիստ, փրկափայտում
Յե՛վ աղաղակում. «Ավա՛ղ, ինչո՞ւ յե
Նա այսպես անում»:

ԱԼԲԱՆԻ

Նայի՛ր քեզ, դե դո՛ւ. տձևությունը
Այնչափ սոսկալի չե մի դեի մեջ,
Վորչափ կնոջ մեջ:

ԳՈՆԵՐԻԼ

Ո՛հ, անմիտ տխմար:

*) «Յեղբայր» — այսինքն քննակալ, նույնպես շատ անգամ գործածված
և «քույր» բառը, քննի նշանակելու համար: Ծ. Թ.

ԱԼԲԱՆԻ

Ո՛վ այլասերված ինքնածածկ*) եյակ,
Ամսթ. մի այդպես հրեշի դեմք առնի.
Թե պատշաճ լիներ, վոր այս ձեռքերըս
Հպատակվեյին վառված արյունիս,
Նրանք պատրաստ եյին միսը հոշոտել
Յե՛վ վոսկորները լուծել միմյանցից:
— Սակայն վորչափ ել դու մի դե լինես,
Կանացի դեմքը ասպարո՛ւմ ե քեզ:

ԳՈՆԵՐԻԼ

Պա՛հ, յես իմ հոգիս, տղամա՛րդ դարձար:
(Մտնում և մի սուրհանդակ)

ԱԼԲԱՆԻ

Ի՞նչ լուր:

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Ո՛հ տե՛ր իմ, մեռավ Կորնվալի դուքսը
Նա սպանվեցավ ծառայի ձեռքով,
Յերբ պատրաստվում եր հանել Գլոստերի
Նաև մյուս աչքը:

ԱԼԲԱՆԻ

Գլոստերի աչքերը:

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Մի ծառա, վորին նա մեծացրել եր,
Ի գութ շարժվելով՝ վճռեց թույլ չը տալ
Յե՛վ սուրը քաշեց հզոր տիրոջ դեմ,
Վոր կատաղելով՝ հարձակվեց վըրան,
Յե՛վ մյուսների հետ՝ նրան սպանեց,
Բայց ինքն ել առավ մահացու մի վերք,
Յե՛վ հենց այդ վերքից նա հետո մեռավ:

ԱԼԲԱՆԻ

Սա ցույց ե տալիս, վոր դուք կաք վերե,
Արդարադատներ, և այսպես շուտով
Գիտեք վրեժ լուծել մեր վոճերներից:
— Բայց, վո՛հ, խեղճ Գլոստեր, մյուս աչքն ե՛լ կորցրեց:

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Այո, յերկուսն եր — Տիկին, այս գիրը
Ձեր քըրոջիցն ե. և պահանջում ե
Արագ պատասխան:

*) Գուցե ուղղում ե ասել՝ մե կին, վոր իր կանացի կերպարանքի տակ
մի անընական հրեշավորություն է ծածկել: Ծ. Թ.

ԳՈՆԵՐԻԼ

(Առաջին)

Մեկ կողմից լավ յեղով. բայց քույրս այլի յե.
Յեվ իմ Գլուստերըս իր մոտ լինելով՝
Մաքիս կառուցած բոլոր շինվածքը*)
Կարող ե փլչել և իր տակ թաղել
Ատելի կյանքըս: Մի ուրիշ կողմից՝
Լուրս այնչափ վատ չե:

(Բարձր)

— Կը կարգամ, հետո
Կը պատասխանեմ:

(Դուրս ե գնում)

ԱԼԲԱՆԻ

Ո՞ւր եր իր վորդին,
Յերբ հանում եյին նըրա աչքերը:

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Նա յեկավ ալտեղ միլեդիի հետ:

ԱԼԲԱՆԻ

Այստեղ չե:

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Վոչ, տեր իմ: Յեա տեսա նըրան,
Վոր յետ եր դառնում:

ԱԼԲԱՆԻ

Արդյոք նա գիտե՞
Այդ անարգ գործը:

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Այո, ազնիվ տեր,
Նա ինքն եր իր հոր ամբաստանիչը.
Յեվ ինքը զխոմամբ տնից հեռացավ,
Վոր պատիժն ազատ ընթացք ստանա:

* Գոնեբրիլի նպատակն եր թունավորել իր քրոջը, ամուսնանալ եղմոնդի հետ, Ալբանիին սպանել և ախրել ամբողջ թագավորության: Կորնվալի մահը գլուրացրեց նրա ծրագրի վերջին մասը և այդ պատճառով նրան հաճելի չեղավ, բայց մյուս կողմից նրան տհաճ յեղավ, վերսկսեալ այդ կարող եր իր քրոջը հնարավորութուն տալ եղմոնդի հետ ամուսնանալու:—Mason.

ԱԼԲԱՆԻ

Գլուստեր, յեա դեռ կամ, վոր վարձատրեմ քեզ
Այն սիրո մասին, վոր ցույց ես տըղի
Դեպի թագավորը, և վըրեժ լուծեմ
Աչքերիդ համար:—Յեկ այստեղ, բարեկամ.
Պատմիր ինձ դարձյալ՝ ուրիշ ի՞նչ գիտես:

(Դուրս ե գնում)

ՏԵՍԱՐԱՆ Գ

Ֆրանսիական բանակը Դուվրի մոտ

Մտնում են ՔենՏԸ և մի ասպետ

ՔԵՆՏ

Ինչո՞ւ Ֆրանսիայի արքան այսպես հանկարծ յետ դարձավ,
գիտե՞ս պատճառը:

ԱՍՊԵՏ

Պետական մի գործ կիսատ եր թողել,
Վոր մտաբերեց իր գալուց հետո.
Այդ այնքան ծանր ե պետության համար
Յեվ վտանգավոր, վոր պետք զգացվեց
Նրա անձնական ներկայությանը:

ՔԵՆՏ

Ո՞ւմ թողեց իր տեղ վորպես զորագլուխ:

ԱՍՊԵՏ

Ֆրանսիայի մարաշախտ պարոն Էր Ֆեռին:

ՔԵՆՏ

Արդյոք ձեր նամակից թագուհին վորեւ վիշտ ցույց
չավեց:

ԱՍՊԵՏ

Ի՞նչու չե, տեր իմ.
Առավ նամակը, կարդաց իմ առջև,

Յերբեմն յերբեմն մի խոշոր արցունք
Յած եր գլորվում իր քընքուշ թըշեց-
նա թագուհի յեր իր վշտի վըրա,
Իսկ նրա վիշտը իբրև ապստամբ
Ճգնում եր նրա վրա թագավոր լինել:

ՔԵՆՏ

Հուզվեցա՞մ ուրեմն:

ԱՍՊԵՏ

Վոչ մինչև դայրույթ. համբերությունը
Յեվ տրամությունը պայքարում ելին,
Թե վսրն ե կարող տալ նըրա դեմքին
Ավելի չքնաղ արտահայտություն.
Տեսնել եք միասին արև և անձրև.
Նըրա ժըպիտներն ու արցունքները
Եյին մայրսյան սիրուն որվա պես,
Յեվ զեղածիծաղ իր ժպիտները,
Վորոնք իր հասուն շրթունքի վըրա
Խաղ եյին անում, անտեղյակ եյին,
Թե աչքերի մեջ ինչ հուրեր կային,
Վորոնք այնտեղից ցած եյին հոսում
Մարգարտանըման, վորոնք կաթում են
Աղամանդներեց: Մեկ խոսքով՝ վիշտը.
Խիստ չնաշխարհիկ մի բան կը լիներ,
Յեթև ամենքին այնչափ վայելեր:

ՔԵՆՏ

Նա բերանացի վոչինչ չը հարցրեց:

ԱՍՊԵՏ

Մեկ-յերկու անգամ կրծքից դուրս հանեց
«Հայրիկ» անունը, այնպես սրտատրոփ,
Կարծես աչք բառը սիրտը գալարեց.
Հետո նա գոչեց. «բույրե՛ր, ա՛խ, բույրե՛ր,
Կոմանց նախաժի՛նք, բույրե՛ր, Քե՛նտ, հայրի՛կ.
Ի՛նչ, փոքորի՛կ՝ մեջ. գիշե՛ր ժամանակ.

Ել մի՛ հավատա՛ք, վա՛ր գա՛ք կա յերկում»:
— Ապա յերկնային իր այն աչքերից
Թափեց սուրբ ջուրը, նըրանով ցողեց
Իր հեծեծանքը, հետո հեռացավ,
Վոր մենակ մընա իր տըրտմության հետ:

ՔԵՆՏ

Աստղերն են, աստղերն այն բարձունքների,
Վոր գերիշխում են մեր վիճակի վըրա.
Թե վոչ, նույն հայրը, միևնույն մայրը
Անկարող եյին ծընունդ տալ այսքան
Տարբեր զարմերի. դուք չը խոսեցի՛ք
Այլևս նըրա հետ:

ԱՍՊԵՏ

Վոչ:

ՔԵՆՏ

Թագավորը

Դեռ չե՛ր գնացել.

ԱՍՊԵՏ

Վոչ, չե՛ր գընացել.

Հետո նա մեկնեց:

ՔԵՆՏ

Լավ, պարոն: Լիբը,

Այն խեղճ թշվառը, այս քաղաքումն ե.
Յերբեմն, յերբ ուշքը վերադառնում ե,
Հիշում ե, թե ինչու յեկել ենք այստեղ,
Յեվ վոչ մի կերպով նա չի զիջանում
Տեսնել իր աղջկան:

ԱՍՊԵՏ

Ինչո՞ւ, աղնիվ տեր:

ՔԵՆՏ

Մի սառտիկ ամոթ տանջում ե նըրան.

Այն խստութիւնը, վորով նա գրկեց
Իր խեղճ աղջկան իր որհնութիւնից,
Յեւ հանձնեց ներան նժդէհ աստղերին,
Ներա սրբազան իրավունքները
Տալով շքնասիրա իր աղջիկներին:
Դրանք այնպիսի ժահրատ խայթեր են
Իր հոգու համար, վոր բռնոն ամոթից
Զի համարձակվում տեսնել իր աղջկան:

ԱՍՊԵՏ

Ավանդ, խեղճ արքա:

ՔԵՆՏ

Վոչինչ չէք լսել
Դուքս Ալբանիի և Կորնվալի
Զորքերի մասին:

ԱՍՊԵՏ

Ճանապարհին են:

ՔԵՆՏ

Յես ձեզ կը տանեմ մեր տեր Լիրի մօտ.
Յեւ կը թողնեմ ձեզ՝ հոգ տանել ներան.
Մի գորեղ պատճառ ստիպում ե ինձ
Դեռ քիչ ել մընալ այս ծպտումի մեջ.
Յերբ վոր ճանաչվեմ, դուք չեք ափսոսա,
Վոր ինձ հետ այսպէս ծանոթ եք յեղել:
Խնդրեմ գաք ինձ հետ:

(Դուքս եւ գնում)

ՏԵՍԱՐԱՆ Դ

Մի վրան Դուվրի բանակում

Մտնում են ԿՈՐԴԵԼԻԱՆ, ԲԺԻՇԿԸ և ԶԻՆՎՈՐՆԵՐ

ԿՈՐԴԵԼԻԱ

Ավանդ, նա ինքն ե. ճիշտ մի քիչ առաջ

Ներան տեսել են այնպէս մոլեգին,
Ինչպէս կատաղի բազմահույզ մի ծով,
Բարձրաձայն յերգելիս, ճակատը պսակած
Վայրի անծխոտով, գիծ վարսակներով,
Կըռատուկներով, մոլախինդներով,
Յեղնջով, վորումով, կկվի ծաղկով,
Յեւ ամեն տեսակ անպետք խոտերով,
Վորոնք սընուցիչ ընդեղենի մեջ
Բուսնում են, աճում:

(Մի սպայի)

Ուղարկիր մի գունդ:

Թող լավ խուզարկեն բարձր խոտերի
Ամեն անդաշտի և բերեն ներան
Մեր աչքի առջև:

(Բժշկի)

Արդյոք մարդկային իմաստութիւնը
Ի՞նչ կարե անել՝ յետ տալու համար
Ներանից խլված դատողութիւնը:
Ով վոր նրան բռնի, թող ինձնից առնի
Բոլոր արտաքին հարստութիւնքը:

ԲԺԻՇԿ

Ճար կա, տիրուհի. բնութիւնն ստնտուն
Քունն ե, և դրան նա խիստ կարոտ ե:
Յեւ այդ ներա մեջ գրգռելու համար
Այնպիսի ազդու բույսեր, խոտեր կան,
Վորոնք մինչե իսկ տրամութիւնն աչքը
Կարող են փակել:

ԿՈՐԴԵԼԻԱ

Ո՛վ սուրբ գաղտնիքներ:

Ո՛վ յերկրի բոլոր գաղտնի գորութիւնը.
Դուքս արձակվեցեք արցունքներիս հետ,
Ոգնական յեղեք և բժշկարար
Այն բարի մարդու անբախտութիւնը:
— Գնացեք, փստոնեցեք, փնտոնեցեք ներան,
Մի գուցէ ներա անգուսպ զայրույթը

Ձախջախի այն կյանքը, վոր չունի այլևս
Վոչ մի առաջնորդ:

(Մտնում է մի սուրհանդակ)

ՍՈՒՐՉԱՆԴԱԿ

Նոր լուր, տիրուհի,
Բրիտանյան զորքը առաջանում է:

ԿՈՐԴԵԼԻԱ

Այդ վաղուց գիտենք և պատրաստ ենք մենք
Նրանց ընդունելու:—Ո՛հ, սիրելի հայր,
Քեզ համար միայն լեկել եմ այստեղ,
Ահա մեծ Ֆրանսիան գլխաց իմ սուգիս
Յեվ թախանձական իմ արցունքներին:
—Փառքի զրգիւր չե, վոր զենք է տրվել,
Այլ սերը միայն, սերը կաթոգին,
Յեվ սեր ծերուկ հոր իրավունքները:
Ա՛խ, ներա մասին մի լուր առնեյի,
Տեսնեյի՞ նրան:

(Դուրս են գնում)

ՏԵՍԱՐԱՆ Ե

Ռեգանի պալատը

Մտնում են ՌԵԳԱՆԸ և ՈՍՎԱԼԴ

ՌԵԳԱՆ

Յեզբորս զորքը ճանապարհ ընկած:

ՈՍՎԱԼԴ

Այո, տիրուհի:

ՌԵԳԱՆ

Յեվ ինքն էլ անձամբ:

ՈՍՎԱԼԴ

Այո, տիրուհի, մեծ գովարույթյամբ:

Ձեր քույրն ավելի քաջ զինվոր է:

ՌԵԳԱՆ

Արդյոք լորդ Եդմոնդ չը խոսեց տանը
Ձեր տիրուհու հետ:

ՈՍՎԱԼԴ

Վոչ, իմ տիրուհի:

ՌԵԳԱՆ

Ի՞նչ պետք է լինի քրոջը նամակը,
Վոր գրել է նրան:

ՈՍՎԱԼԴ

Չը գիտեմ, տիկին:

ՌԵԳԱՆ

Անշուշտ կարելիոր մի պատճառ ունեի,
Վոր այնքան արագ մեկնեց այստեղից:
Գլխատերի աչքերը հանելուց հետո՝
Անխոհեմ բան եր նրան վողջ թողնել.
Ուր վոր հասնում է, բոլոր սրտերը
Հուզում է մեր դեմ: Եդմոնդը, կարծեմ,
Գլխով նրա անբախտության վրա,
Գնաց, վոր վերջ տա նրա մութ կյանքին,
Միևնույն ժամանակ իրազեկ դառնա
Թշնամու ուժին:

ՈՍՎԱԼԴ

Յես ել պետք է գնամ
Նրա յետևից, վոր նամակը տամ:

ՌԵԳԱՆ

Վաղը մեր զորքը ճանապարհ կընկնի.
Սպասիր մեզ մոտ, ճանապարհները
Վտանգավոր են:

ՈՍՎԱԼԴ

Ձեմ կարող, տիկին՝
Տիրուհիս սաստիկ շտապեցրեց ինձ:

ՌԵԳԱՆ

Արդյոք եղմոնդին ինչ ունի գրելու.
Դու չեմք կարող ներա պատգամը
Լեզվով հաղորդել թերևս, մի բան...
Ձը գիտեմ ինչ բան... Գեղ շատ կը սիրեմ,
Յեթե ինձ թույլ տաս բանալ այս գիրը:

ՈՍՎԱԼԴ

Տիկին, ավելի կը հոժարվեյի...

ՌԵԳԱՆ

Գիտեմ, տիկինըդ մարդուն չի սիրում.
Յես այդ լավ գիտեմ. և, վերջին անգամ,
Վոր նա այստեղ եր, նա արձակում եր
Սիրո ակնարկներ, խոսուն հայացքներ.
Ազնիվ եղմոնդին: Գիտեմ, ներա հետ.
Դու մտերիմ ես:

ՈՍՎԱԼԴ

Յես, իմ տիրուհի:

ՌԵԳԱՆ

Ինքըս լավ գիտեմ, թե ինչ եմ ասում.
Դու մտերիմ ես, յես այդ լավ գիտեմ:
Ուրեմն լսի՛ր այս խորհուրդն ինձնից.
Մարդըս մեռել է. եղմոնդը և յես
Խոսք ենք տվել միմյանց. նա շատ ավելի
Ինձ կը հարմարի, քան քո տիրուհուդ:
— Իսկ մընացածը ինքըդ հասկացիր.
Յերբ ներան գտնես, խնդրեմ այս նրան տաս.
(Ցայիս է մի մատանի)

Յեվ յերբ տիրուհուդ պատմես այս բանը,
Խնդրեմ ասես նրան. «Իսկըդ ժողովի՛ր».

Ուրեմն, գնաս բարով:
Յեթե պատահածը դու մի բան լսես
Վույր մատնիչի մասին, իմացած կացիր,
Վոր ներա կյանքին ով վոր վերջ գընի,
Մի շնորհ կը ստանա:

ՈՍՎԱԼԴ

Յես շատ կուզեյի
Ներան հանդիպել. և ցույց կը տայի՝
Ո՛ւմ կուստկեցն եմ:

ՌԵԳԱՆ

Դեհ, յերթաս բարով:
(Դուք եմ գնում)

ՏԵՍԱՐԱՆ 2

Մի դատ Պուլիի արջակայում

Մտնում են ԳԼՈՍՏԵՐԸ և ԵԴԴԱՐԸ՝ վորպես շինական

ԳԼՈՍՏԵՐ

Յերբ պիտի հասնենք այս բլրի ծայրին:

ԵԴԴԱՐ

Դուք այս ընդհանր վեր եք բարձրանում.
Ձե՛ք տեսնում միթե՛ ինչպես հոգնում ենք:

ԳԼՈՍՏԵՐ

Բայց գետինն այստեղ ինձ հարթ է թըվում:

ԵԴԴԱՐ

Սոսկալի սեպ է. հո՛ւշ. ծովի ձայնը
Ձե՛ք լըսում միթե:

ԳԼՈՍՏԵՐ

Վո՛չ, իրաջն ասած:

ԵԴԳԱՐ

Ուրեմըն ձեր մյուս զգայարանքը
Տկարացել են ձեր աչքի ցավից:

ԳԼՈՍՏԵՐ

Գուցե. բայց կարծես ձայնըդ փոխված է,
Յեւ զու խոսում ես լավագույն վոճով՝
Յեւ առաջվանից սովելի խելոք:

ԵԴԳԱՐ

Դուք սխալվում եք, յես վոչնչի մեջ
Փոխված չեմ, այլ լուկ՝ իմ հագուստի մեջ:

ԳԼՈՍՏԵՐ

Վոչ. ինձ թվում է, վոր դու խոսում ես
Առաջվանից լավ:

ԵԴԳԱՐ

Մոտ յեկեք, պարոն:

Ահա այն տեղը: Հանդարտ կանգնեցեք:
Ի՛նչ ահռելի յե. և մարդուս գլուխը
Ի՛նչպես դառնում է, յերբ ցած է նայում:
Մի այսչափ խորունկ անդունդի վերա:
Սև ազդեցությունը և վորինները,
Վորոնք ճախրում են կես ճանապարհին,
Հազիվ թրվում են բլրեղների չափ:
Խորության կեսին՝ մի մարդ կախ ընկած,
Ծովային սամիթ*) քաղում է ժայռից.
Սոսկալի՛ արհեստ: Նա ինքն իր գլխից
Մեծ չի յերեվում: Այն ձկնորսները,
Վորոնք քայլում են ծովեզերքի վերա,
Հազիվ մրկներին մեծութուն ունեն.
Յեւ այն մեծ նավը, վոր խարսխած է,

*) Ծովային սամիթն առատ է այն յերկրում (Անգլիայում)՝ ծովափնյա
ժայռերի վրա. սարսափելի յե տեսել, թե ինչպես մարդիկ սամիթ են փոխ-
վում, մի չվանով կախ ընկնելով հակված ժայռի բարձրութունից. մի քանի
ձողաչափ յերկարությամբ: Սմիթ.—History of Waterford

Հազիվ թրվում է իր մակույկի չափ,
Յեւ իր մակույկը՝ խարսխափայտի,
Մեր աչքի համար հափաղանց փոքրիկ:
Մոնչուն կոհակը, վոր կատաղում է
Անհամար չն: ին խճերի վերա,
Ձի լսվում այս բարձրից:—Ել յես չեմ նայի.
Մի գուցե գլուխըս սկսի դառնալ:
Յեւ նըվաղած աչքս ինձ վայր գլորի
Դեպի անդունդը:

ԳԼՈՍՏԵՐ

Կանգնեցրո՛ւ դու ինձ՝ ուր այժմ կանգնած ես:

ԵԴԳԱՐ

Լավ, առաջ յեկեք. տրվեք ձեր ձեռքը:
Դուք այժմ միայն մի քայլ հեռու յեք
Անդունդի ափից*). յեթե ինձ տային
Ամեն ինչ, վոր կա լուսնյակի ներքե,
Յես չեյի ուզի ուղիղ վեր ցատկել:

ԳԼՈՍՏԵՐ

Բաց թող իմ ձեռքը. ահա, բարեկամ,
Քեզ մի այլ քրտակ, մեջը մի գոհար,
Վոր արժեք ունի խեղճ մարդու համար.
Թող ֆերինները և ապովածները
Քեզ այդ ընծայով բախտավոր անեն.
Դընա, հեռացիր. մնաս բարով ասան
Յեւ մեկնելըդ ինձ լսելի արան:

ԵԴԳԱՐ

Մընացե՛ք բարով, հարգելի պարոն:
(Գնալ է կեղծում)

ԳԼՈՍՏԵՐ

Ձեզնից ի սրտե շընորհակալ եմ:

*) Այսինքն այնքան մոտ է անդունդի ափին, վոր ուղիղ վեր ցատկե-
լով անդամ կարող էյի թեքվել դեպի անդունդը: Ծ. Թ.

Յեթե յես նըրա անհուսության հետ
Այսպես խաղում եմ, նըրա համար ե,
Վոր բուժեմ յես այն:

ԳԼՈՍՏԵՐ

Ահեղ աստվածներ,
Յես այս աշխարհին հրաժեշտ եմ տալիս.
Յեզ ձեր աչքի դեմ, անվրդով հոգով,
Ցնցում եմ ինձնից իմ մեծ կսկիծըս.
Թե ինձ հնար լիներ տանել տակավին
Յեզ չը մաքառել, պայքար չը մղել
Անդիմադրելի ձեր մեծ կամքի դեմ,
Յես թույլ կը տայի կյանքիս պատրույգը
Յեզ զաղիր մասը ինքն իրեն մարեր:
Յեթե Եդգարը դեռ կենդանի յե,
Որհնեցեք նըրան:—Այժմ, ընկեր, մնաս բարով:

ԵԴԳԱՐ

Գնացի, տեր, մնաք բարով:

(Գլուսները ցատկում ե յեզ ընկնում հարք գետնի վրա)
(Առաջին)

Սակայն չգիտեմ

Յերեվակայությունն արդյոք չի՞ կարող
Հենց ինքը կյանքի գանձը դողանալ,
Յերբ վոր կյանքն ինքնին ոժանդակում ե
Այդ գողությանը*): Թե այնտեղ լիներ,
Ուր վոր խորհում եր, խորհելը արդեն
Անցած կը լիներ:—Վաղջ եք, թե մեռած.
Հեյ, պարոն. բարեկամ. լսում եք, պարոն.
Խոսեցեք, պարոն:

(Առաջին)

Կարող ե լինել,

Վոր իրոք այսպես նա մեռած լինի.

*) Յերբ մարդ այսպես ջերմ վափազ ունի մեռնելու, յես վախենում եմ, Վոր այսպիսի մի վտայունի, մի անկման յերեվակայեն անգամ նրան մահ տատառի:—Hudson.

Բայց վաղ, նա հիմա ուշքի յե դալիս:
—Ո՞վ եք դուք, պարոն:

ԳԼՈՍՏԵՐ

Գնա, թող մեռնեմ:

ԵԴԳԱՐ

Թե չը լինեյիր
Մի սարդի վոստայն, մի փետուր, կամ ող
Այս բարձրությունից դահավիժվելով
Մի ձվի նման կը ջախջախվեյիր.
Բայց դու շնչում ես. կարծր ե քո նյութը.
Արյուն չի գալիս, խոսում ես, վողջ ես:
Յեթե տասը կայս ծայր-ծայրի դընեն
Չեն կարող հասնել այս բարձրությանը,
Վորից ընկել ես ուղղաձիգ կերպով:
Հրաշք ե ասլընլըդ, Խոսի՛ր դու կրկին:

ԳԼՈՍՏԵՐ

Ընկել եմ, թե վաղ:

ԵԴԳԱՐ

Այն կավճուտ խարակի
Ահեղ զազաթից դահավիժվել ես:
Մեկ վերե նայի՛ր. սըրաձայն արտուում
Այսքան հեռվից տեսանելի չե,
Վաղ ել իր ձայնը կարող ե լսվել:
Մեկ վերե նայի՛ր:

ԳԼՈՍՏԵՐ

Ավաղ, աչք չունեմ.
Արդյոք զրկված ե դժբախտությունը
Այն իսկ բարիքից, վոր գոնե մահով
Ինքն իրեն վերջ տա: Գեթ սփոփանք ե,
Վոր թշվառ մարդը կարենա պատրել
Փանա բռնավորի կատաղությունը
Յեզ գերե հանել նրա գոռող կամբը:

ԵՒԳԱՐ

Տուր ինձ բազուկդդ, վեր կաց, հա, այդպես.
Ի՞նչպիսի ես արդյոք, վտարելով պի՞նդ են:
Ահա կանգնեցիր:

ԳԼՈՍՏԵՐ

Ա՛խ, չափազանց լավ:

ԵՒԳԱՐ

Հրաշք ե կատարյալ — ժաշտի կատարին
Ի՞նչ եյակ եր այն, վոր քեզնից զատվեց:

ԳԼՈՍՏԵՐ

Մի խեղճ մուրացկան:

ԵՒԳԱՐ

Ինձ այս ներքեից

Այնպես յերեաց, վոր իր աչքերը
Յերկու լրացած լուսիններ եյին.
Հազար քիթ ունի, և յեղջյուրները
Խորտ ու բորտ եյին, և կոհակածուփ՝
Հուզված ծովի պես: Մի սատանա յեր:
Ուրեմն հավատա, դու ըստաւոր հայր,
Վոր աստվածները, վորոնց փառքն ե այն,
Վոր մարդկանց համար անհրնար գործեր
Ի կատար ածեն, քեզ պահպանել են:

ԳԼՈՍՏԵՐ

Յես այժմ հիշում եմ. ել այսուհետե
Յես կը հանդուրժեմ ամենայն վշտի,
Մինչև վոր նա ինքն ինձ ազադակի,
Բավ ե, բավ, մեռի՛ր: Այդ արարածին,
Վոր դու պատմում ես, յես մարդ կարծեցի.
Նա միշտ կրկնում եր. «դեր, չար դէ՛ր»
Նա ինքը այնտեղ առաջնորդեց ինձ:

ԵՒԳԱՐ

Թող հոգիդ ազատ, համբերող լինի.

— Բայց ո՞վ ե գալիս:

(Մտնում ե Լիբր տարբերակ կերպով զարդարված ծաղիկներով)

ԵՒԳԱՐ

Առողջ ուղեղը

Յերբեք իր տիրոջն այսպես չի պճնի:

ԼԻՐ

Ինձ դիպչել չեն կարող, թե ինչ ե՛ դրամ եմ գարկել: Յես
արքան ինքն եմ:

ԵՒԳԱՐ

Ո՛հ, սրտաճմլիկ տեսարան:

ԼԻՐ

Այդ բանի մեջ բնությունը արհեստից բարձր ե*): — Ահա
քեզ քո գլխադրամը**): Այն մարդը իր աղեղն այնպես ե շար-
ժում, վոր կարծես մի խրովիլակ լինի. մի նետ արձակել ասվել շի-
նողի գազի չափ. տես, տես մի մուկ. սոս, սոս, այս մի կտոր տապա-
կած պանիրը նրա բանը կը շինի: — Ահա իմ բազպանը. յես այդ
կնեսեմ մի հըսկայի***). — բերեցեք գեղարդները: — Ո, լավ թը-
ռար, թռչուն. ճիշտ կետին, ճիշտ կետին: (Նդգադիմ) Հյս՛ւ — ան-
ցարառն****) ասա:

ԵՒԳԱՐ

Անուշ մարիորդ:

ԼԻՐ

Անցի՛ր:

*) Այսինքն ի ծնե թագավորը չի կարող կորցնել իր բնական իրա-
վունքները: — Schmidt.

**) Այն դրամը, վոր Անգլիայի մեջ վճարում եյին գինվորագրված մար-
դուն, վորով նա պարտավորվում եր պատրաստ լինել հարկ յեղած ժամանակ
գնալու՝ ուր վոր հրամայեյին:

***) Բազպան կամ ձեռնոց գցելը նշանակում եր մենամարտի հրավի-
րել:

****) Լիբն իրեն յերեկակայում ե մի գինվորանոցում, և Նդգարին
չի թույլ տալիս անցնել, առանց անցարառն ասելու: — Johnson.

ԳԼՈՍՏԵՐ

Յեա այդ ձայնը ճանաչում եմ:

ԼԻՐ

Հա. Գոհների՛ր.— սպիտակ մորուքով. նրանք ինձ շոյում եյին
մի շան պես, և ասում եյին, թե յես սպիտակ մազեր ունեյի մո-
րուքիս մեջ նախ քան թե սև մազեր լինեյին այնտեղ^{*)}: Այո՛,
կամ վաղ ասել իմ ամեն ասածիս ^{**)} : Այոն և վոչը լավ աստվա-
ծաբանություն չեր: Հենց վոր անձրեն յեկավ, ինձ թրջեց և հող-
մը ինձ դողողացրեց, յերբ վորտառ չը լոնց իմ հրամանով, այն
ժամանակ յես տեսա, այն ժամանակ յես հոտ առա, թե նրանք ինչ
եյին: Գնա բանիդ, նրանք իրենց խոսքը պահող չեն. ինձ ասում
եյին, թե յես ամեն բան եյի. այդ սուտ ե. լես ջերմին անգամ
դիմացողը չեմ:

ԳԼՈՍՏԵՐ

Յեա լավ եմ հիշում այս ձայնի շեշտը.
Թաղավորը՝ չէ:

ԼԻՐ

Այո, թագավոր՝

Գլխից մինչև վոտք: Յերբ աչքս հառում եմ,
Տես՝ ինչպե՛ս դողում են հպատակներս:
Յես շնորհում եմ այդ մարդու կյանքը.
Ի՞նչ մեղք ե գործել. անառակութիւն.
Չը պետք ե մեռնես.
Անառակության համար մեռնել. վոչ.
Յախաարեկն անգամ նույն բանն ե անում,
Նույնպես և փոքրիկ վոսկեգույն ճանճը
Իմ աչքիս առաջ վախճանում ե.
Թող տրուությունը աճի, բազմանա.
Քանզի Գլոստերի ապրերն վորդին
Ավելի սիրով վարվեց իր հոր հետ,
Քան որինավոր մահճի մեջ սերած

^{*)} Այսինքն ինձ ասում եյին, վոր ծերության խելք ունեմ, նախ քան
յես յերիասաբարության տաբիբին հասած լինեյի:—Capell.

^{**)} Այսինքն իմ այդիս այո ասել և վոչիս՝ վոչ, ինչպես Ոչրիկը Համբարին:
Cowden Clarke

Իմ աղջիկները:

Ի գործ, ցոփութիւն. հայդե՛, խառնիխոռն.
Քանզի ինձ համար զինվորներ են պետք,
Տեսեք այն տիկնոջ. ինչ անմեղ ժպիտ.

Նըրա յերեսը կարծել ե տալիս,
Վոր նա ձյուն ունի իր ազդրերի մեջ.
Վոր կոտրատվելով սուրբ ե ձեանում,
Յիվ վոր հեշտության անունիցն անգամ
Թեքում ե գլուխը. վոչ կղնաքիսը,
Վոչ կանաչ խոտով գերցած նժույգը
Գրոհ չեն տալիս ավելի անասնձ
Մի ախորժակով.

Նրանք, մեջքից ցած, կենտավրոսներ են
Յեվ կին՝ մեջքից վեր.

Մինչև գոտին միայն աստվածներինն ե,
Ներքե՛ բոլորը չար դեերինը.

Այնտեղ կա դժոխք, այնտեղ կա խավար:

Այնտեղ կա՝ ծծմբային անդունդ, այրել, խարշել, գարշահոտու-
թուն, սպառում.— թոհ, թոհ, թոհ, փահ, փահ: Մի ունկի-
մուշկ տուր, բարի՛ զեղավաճառ, իմ յերեկակայությունն անու-
շահոտ դարձնելու համար: Ահա քեզ դրամ:

ԳԼՈՍՏԵՐ

Ո՛հ, թող համբուրեմ այդ ձեռքը:

ԼԻՐ

Առաջ թող մեկ սրբեմ, մահացության հոտ ե գալիս նը-
րանից:

ԳԼՈՍՏԵՐ

Ո՛վ դու ավերված ձեռակերտ բնության,
Այս մեծ աշխարհն ել այսպես կըմաշվի,
Կը վոչնչանա:—Ճանաչում ես ինձ:

ԼԻՐ

Յեա լավ հիշում եմ այդ աչքերդ: Ինձ ծնւ ես նայում: Վոչ

արն, ինչ վոր կարող ես, կույր կուպիդոն, յես չեմ սիրելու:—
Կարգն դու այս մենամարտի հրավերը. միայն, լավ ուշ դիր
վոճին:

ԳԼՈՍՏԵՐ

Յեթե բոլոր քո տառերը մեկ-մեկ արեգակներ լինեյին,
դարձյալ յես վոչ մեկը չեյի կարող տեսնել:

ԵԴԳԱՐ

(Առանձին)

Յեթե ինձ այս բանը պատմեյին, յես չեյի հավատա. բայց
այժմ այդպես ե. և սիրտս ջախջախվում ե:

ԼԻՐ

Կարգն:

ԳԼՈՍՏԵՐ

Ի՞նչպես. աչքիս պարունակներով:

ԼԻՐ

Ո, հո. այդ ես ուզում ասել: Վոչ աչք գլխիդ մեջ, և վոչ ել
դրամ գրպանումդ: Քո աչքերը շատ ծանր վիճակի մեջ են, իսկ քո
սակդ շատ թեթև. բայց դարձյալ, դու տեսնում ես, թե ինչպես են
գնում աշխարհիս գործերը:

ԳԼՈՍՏԵՐ

Յես. այդ տեսնում եմ, զգալով միայն:

ԼԻՐ

Ի՞նչ ե. հիմարացել ես. մարդ կարող ե առանց աչքերի ել տեսնել,
թե աշխարհի գործերն ինչպես են գնում: Ականջներովդ նայի՛ր,
տես՝ ի՞նչպես այն դատավորը բարբառում ե այն պարզամիտ
դողի վրա: Լսիր, ականջիդ ասեմ. փոփոխիր նրանց տեղերը, և
ձեռնախփուկ*): հետո ասա, թե վո՞րն ե դատավորը, վո՞րն ե դողը:
Դու տեսել ես ինչպես ագարակատիրոջ շունը հաջում ե մու-
րացկանի վրա:

*) Ձեռնախփուկը յերեխայական խաղ ե. մի բան շարժում են յերկու
ձեռքի մեջ, հետո պետք ե իմանալ, թե վո՞ր ձեռքի մեջ ե:—Malone.

ԳԼՈՍՏԵՐ

Այո, տեր:

ԼԻՐ

Յեվ ինչպես խեղճ մարդը փախչում ե շնից. լավ, այդտեղ
դու տեսել ես իշխանության մեծ պատկերը. շունն իբրեւ պաշ-
տոնյա իշխում և մյուսի վրա...

Սրիկն վոստիկան, քաշիր դեպի քեզ
Արյունոտ ձեռքդ. ինչո՞ւ յես դարկում
Այդ պոռնիկ կնոջ: Քո մեջքդ ծեծիր.
Դու ախտաբորբոք ցանկություն ունես
Գործել նըրա հետ միևնույն գործը,
Վորի պատճառով ձաղկում ես նըրան.
Վաշխառուն գողին կախել ե տալիս:
Ցնցոտու միջից փոքրիկ հանցանքներ
Շուտ են յերեվում. բայց պերճ զգեստներն
Ու մուշտակները վարագուրում են:
Ջրահիր մեղքը վոսկե պատյանով,
Յեվ արգարության ամուր նիզակը
Առանց ֆլաուելու կը ջարդվի իսկույն.
Պատիր այդ մեղքը ցնցոտիներով՝
Թրգուկի հարդն ել կը խոցի նըրան.
Վոչ վոչ մեղք չունի, վոչ վոք՝ ասում եմ.
Նըրանց բոլորին յես արձակում եմ:
Լսիր, բարեկամ, այս բանն ինձանից,
Վոր կարողություն ունեմ փակելու
Զրպարտչի լեզուն.

Դտիր քեզ համար ապակյա աչքի՛ր,
Յեվ իբր անվանարկ մի քաղաքագետ՝
Ձեացրու տեսնել այնպիսի բաներ,
Վոր բնավ չես տեսնում:—Հայդե՛, հայդե՛, հայդե՛.
Բաշիր կոշիկս, պինդ, պինդ. հա, այդպես:

ԵԴԳԱՐ

(Առանձին)

Ո՛հ, խառնվող մտքի և անմըտության.
Խեղճ խենթության մեջ:

Դեռ կյանք կա ուրեմն այդ արքայի մեջ:
Հայդե՛, թե ըսնեք, վազելով միայն
Կարող եք բռնել: Սա, սա, սա, սա, սա*):

(Դուրս ե գնում վազելով, ծառաներն ել յետևից)

ՍՊԱ.

Ա՛խ այս գթաշարժ մի տեսարան ե
Ամենից անարդ մի թշվառի մեջ,
Իսկ արքայի մեջ՝ անպատմելի՛ յե:
— Դու մի դուստր ունիս, վոր ազատում ե
Մարդկային ցեղը ընդհանուր նղովքից,
Վոր մյուս յերկուսը բերին նրա գլխին:

ԵԴԳԱՐ

Բարե, աղնիվ տեր:

ՍՊԱ.

Տեր ընդ ձեզ պարոն.

Ի՞նչ եք կամենում:

ԵԴԳԱՐ

Պարոն, լսել եք

Թե այս մոտերըս կռիվ ե լինելու:

ԱՍՊԵՏ

Պարզ ե և հայտնի. ով ահանջ ունի՝

Լսել ե լուրը:

ԵԴԳԱՐ

Ասացեք, խնդրեմ,

Վարչափ հեռու յե այն մյուս բանակը:

ՍՊԱ.

Մոտ ե, և փութով առաջ ե գալիս

*) Շա, սա, սա՝ շատերի կարծիքով նշանակում ե, վոր Լիբն սկսում
է փախչել՝ յերգելով այդ բաները և պարելով:

Մի ժամից մյուս ժամ ըուն զորակույտը
Կերեա աչքի:

ԵԴԳԱՐ

Շնորհակալ եմ, տեր.

Ա՞յս ել, բոլորը:

ՍՊԱ.

Թեև թագուհին

Հատուկ պատճառով մնացել ե այստեղ,

Բայց նրա դորքը շարժվել ե առաջ:

ԵԴԳԱՐ

Շնորհակալ եմ տեր:

(Ապառ դուրս ե գնում)

ԳԼՈՍՏԵՐ

Դիթաժ աստվածներ, դուք առեք շունչըս.

Մի թույլ տաք կրկին, վոր իմ չար վոգին

Դրդե ինձ մեռնել նախ քան ձեր կամքն ե:

ԵԴԳԱՐ

Լավ աղոթք ե այդ, հայրիկ*):

ԳԼՈՍՏԵՐ

Բարի մարդ,

Հիմա ասա ինձ, արդյոք ով ես դու:

ԵԴԳԱՐ

Մի շատ թշվառ մարդ, բախտի սլաքներին

Լավ ընտելացած, վոր թե վաղորդա,

Թե այժմ զգացած իր կսկիծներով

Դարձել ե այլոց ցավին կարեկից:

Տվեք ձեր ձեռքը, և ձեզ կը տանեմ

Դեպ մի ոթեան:

*) Դանի վոր հին ժամանակները սովորություն եր, վոր յերիտասարդ-
ները ծերերին հայրիկ անուամբ կոչելու, եղբայրը շարունակ Դևստե-
րին այդ անունն ե տալիս, առանց հանաչվելու, վոր նրա վորդին ե.—Hudson

ԳԼՈՍՏԵՐ

Յեա ձեզ ի սրտե շնորհակալ եմ.
Յերկնային շնորհը և ողորմությունը
Թող վարձատրեն քեզ:

(Մտնում ե Ոսկարը)

ՈՍՎԱԼԴ

(Առանձին)

Խոստացված ընծան.
Ի՞նչ յերջանկություն: Այդ անաչք գլուխը
Առաջին որից հենց ստեղծված ե
Միայն իմ բախտիս բարձրացման համար:
(Գլուտներին)

Ո՛վ դու ծերունի անբախտ դավաճան,
Խորհիր անհապաղ՝ ի՞նչ խորհելու յես.
Քաշված ե ահա քեզ ջնջող սուրբ:

ԳԼՈՍՏԵՐ

Ջարկիր, մաղթում եմ բարերար ձեռքիդ
Հարկ յեղած ուժը:

(Նդգաբը դիմադրում ե)

ՈՍՎԱԼԴ

Հանդուգըն գեղջուկ,

Դու խիզախում ես ախոյան կանգնել
Հայտնի մեղապարտ մի դավաճանի.
Հեռու, մի դուցե քեզ ել վարակի
Նըրա ժանտախտը: Թող նըրա թեք:

ԵԴԳԱՐ

Յես բաց չեմ թողնի, մինչև վոր մի մարդավորի պատ-
ճառ չասես:

ՈՍՎԱԼԴ

Բաց թող դրան, թշվառական, յեթե վոչ կատակեցես
քեզ:

ԵԴԳԱՐ

Ե՛յ, ադա, ճամբեդ բռնի գնա, թող խեղճ մարդիկ իրենց
բանին կենան: Թե վոր եդ մեծ-մեծ բրդելով մարդ կարողանար
ինձ սպանել, տամահինդ որ առաջ ինձ սպանած կը լինեյին: Տես,
ես խեղճ հալիվորի մազին չգիպչես. հեռու կաց, արես գիտենա,
թե մոտեցել ես, յես քեզ շանց կտամ, թե վորն ե պինդը, քո
գաղտնիք, թե իմ կողալս: Քեզ պարզն եմ ասում:

ՈՍՎԱԼԴ

Կորիւր, կովի թրիք:

ԵԴԳԱՐ

Հիմա յես քու ատամներդ փշրեմ, մինչև վոր իմանաս: Դեհ,
յեկ մեյդան. յես եդ քո թըրից վախեցողը չեմ:
(Նդգաբը նրան փայտի մի հարվածով գլորում ե գետին)

ՈՍՎԱԼԴ

Ա՛յ, թշվառական, ինձ սպանեցիր.
— Փռուչ, առ քըսակըս. յեթե ուզում ես
Դո բախտըդ շինել՝ թաղիր մարմինըս,
Յեվ այն նաժակը, վոր գտնես իմ մոտ,
Հանձնիր եղմոնդին, Գլուտների կոմսին.
Անգլիո բանակում կը գտնես սըրան:
— Ո՛հ, տարածմամ մահ:

(Մեռնում ե)

ԵԴԳԱՐ

Քեզ լավ գիտեմ յես.
Հաճոյակատար մի սրիկա յես դու,
Տիկնոջդ ախտերին ախնափ անձնըվեր,
Վորքան կը ցանկար չարությունն ինքը:

ԳԼՈՍՏԵՐ

Ի՞նչ, մեռավ միթե:

ԵԴԳԱՐ

Դու նստիր, հայր իմ,

Յեկ հանգստացիր: Գրպանները տեսնենք.
Այն նամակները, վոր նա ասում է,
Գլխի ինձ համար ոգտակար լինեն:
— Այո, մեռել է, միայն տխուր եմ,
Վոր նա հունեցավ մի ուրիշ դահիճ:
Թող տեսնենք:— Թող տուր, բարի կնքամոմ.
Յեկ դու, խղճմտանք, մի կշտամբիր ինձ:
Թշնամիների մտադրությունքը
Գիտենալու համար՝ մենք նրանց սիրտը
Կը պատառնենք. նամակը բանալ
Որինական է:

(Կարդում է նամակը)

Հիշիր մեր փոխադարձ ուխտերը: Դու շատ առիթներ ունես
նրա կյանքին վերջ դնելու: Յեթե կամքդ չլիքերանա՝ սուրբը
տեղը արդյունավոր կերպով կներկայանան քեզ: Վոչինչ արած
չենք լինի, յեթե նա հաջող վերադառնա. այն ժամանակ յես
նրա գերին իմ, և նրա անկողինը՝ իմ բանտս. ազատիր ինձ
այդ մահճի զգվելի ջերմությունից և բռնիք նրա տեղը՝ ի վարձ
քո աշխատության:

Քո անձնվեր աղախինքդ, վորի

Տեսնես ե լինել քո կենքդ:

Գոնեքիլ

ԵԴԳԱՐ

Ո՛վ անտակ անդունդ կանացի կամքի.
Ազնիվ ամուսնի կյանքին դավ նյութի,
Յեկ փոխաբենը՝ յեղբորըս դընեի.
Այստեղ խորեմ քեզ, այս ավաղի մեջ,
Մարդասպան շնության դու լպիքը միջնորդ.
Յեկ հարմար ուրին՝ այս անարգ թուղթը
Պեաք է յերեկա այն դուքսի աչքին,
Վորի կյանքի դեմ թակարդ ես լարել:
Բախտավոր ե նա, վոր յես կարող եմ
Հաղորդել նըրան, թե քո պաշտոնըդ
Յեկ թե քո մահըդ:

(Նդգարը դուրս է գնում՝ տանելով դիակը)

ԳԼՈՍՏԵՐ

Մեր թագավորը խելագարվել է.

Վճրչափ համառ է իմ անարգ խելքը,
Վոր դեռ կանգուն եմ, և զիտակցորեն
Դեռ յես զգում եմ անհուն վըշտերըս:
Յերանի՛ յես ել խելագարվեյի.
Մտածումնքներըս գեթ կանջատվեյին
Իմ կսկիծներից: Մարդուս ցավերը
Յերեվակայության մոլորության մեջ
Կորցնում են իրենց զիտակցությունը:

(Կրկին մտնում է Նդգարը)

ԵԴԳԱՐ

Տվեք ինձ ձեր ձեռքը, ինձ յերևում է,
Վոր մի թմբկի ձայն գալիս է հեռվից:
Յեկեք, հայր, ձեզ հանձնեմ մի բարեկամի:

(Դուրս եմ գնում)

ՏԵՍԱՐԱՆ Ե

Մի վառ Փրանսիական բանակում

Մտնում են ԿՈՐԴԵԼԻԱՆ, ՔԵՆՏԸ և մի բժիշկ

ԿՈՐԴԵԼԻԱ

Ո՛վ դու ազնիվ Քենտ, յես վճրքան ապրեմ
Յեկ լինչ բան դործեմ, վոր հատուցանեմ
Քո բարությունըդ. կյանքըս կարճ կըլինի
Յեկ ամեն միջոց՝ ինձ անբավարար:

ՔԵՆՏ

Յերբ հասկացված է մարդուս արածը՝
Նա արդեն լրիվ վարձատրված է.
Տիկին, իմ բոլոր հաղորդածները
Համաձայն են զուտ ճշմարտության հետ.
Վոչ հավելում կա, և վոչ կըճատում:
Այլ ճիշտ իսկ և իսկ:

ԿՈՐԴԵԼԻԱ

Ավելի հարմար մի զգեստ հագիր.

Այդ հաղուստները հիշատակներ են
վատթար ուրերի. դուրս գցիր, խնդրեմ:

ՔԵՆՏ

Ներեցեք խնդրեմ, բարի տիրուհի.
Այսպես վաղ հայտնել իմ հոգի լինելըս—
հարող ե մնասել ծրագիրներին.
Յես կը համարեմ մի շնորհ դեպի ինձ,
վոր դուք տակավին ինձ չը ճանաչեք
Մինչ այն որ, վոր յես և ժամանակը
Հարմար դատենք այդ:

ԿՈՐԴԵԼԻԱ

Թող այդպես լինի,
Իմ սիրելի լուրդ: (Բժշկին)
Ինչպես և արքան:

ԲԺԻՇԿ

Տիկին, դեռ քնած ե:

ԿՈՐԴԵԼԻԱ

Բարի աստվածներ,
Դուք բժշկեցեք այն մեծ խրամատը՝
Նըրա խոշտանգված, յեղծված բնության մեջ:
Ո՛հ, կարգի դըրեք այս սըխալաձայն
Յեվ աններդաշնակ դադարները
Այս մանկացած հոր:

ԲԺԻՇԿ

Արդյոք հաճոյս
Ձերդ մեծության, վոր թագավորին
Ձարթնեցնեք քննից. շատ յերկար քնեց:

ԿՈՐԴԵԼԻԱ

Դուք հնազանդեցեք ձեր գիտությանը
Յեվ գործեցեք այն, ինչ վոր ձեր կամքն է:
Հագնելված ե նա:
(Լիբին ներս եմ բերում մի արտի մեջ)

ՄԻ ԱՍՊԵՏ

Այո, տիրուհի.

Յերբ խոր քնած եր՝ մենք նոր զգեստներ
Հաղցրինք նըրան:

ԲԺԻՇԿ

Նըրա մոտ յեղեք,
Ազնիվ տիրուհի, յերբ կը զարթնեցնենք.
Վստահ եմ, վոր նա հանդարտ կը լինի:

ԿՈՐԴԵԼԻԱ

Շատ լավ:

ԲԺԻՇԿ

Մոտ յեկեք, խնդրեմ.
— Յերածառությունն ավելի բարձրը:

ԿՈՐԴԵԼԻԱ

Ո՛վ հայր սիրելի—Ո՛վ բըժըշկություն,
Կախիր քո դեղը իմ շըթունքներից.
Թող այս համբույրը բալասան դառնա
Այն խոր խոցերին, վոր յերկու քույրերս
Քեզ պատճառեցին, քո վեհության մեջ:

ՔԵՆՏ

Ո՛վ դու բարեսիրտ անգին թագուհի:

ԿՈՐԴԵԼԻԱ

Յեթե հայր անգամ չլինեյիր դու,
Այս ճերմակ հերքըդ պետք է շարժեյին
Նըրանց սրտի գութը: Այնպիսի գեմք ե այս,
Վոր մարդ յենթարկի անգուռ հողմերին,
Սոսկալի շանթով զինված վորոտին՝
Արագ, խաչաձև այն փայլակների
Ձարհուրեցուցիչ, ճապուկ կրակի մեջ,
Վոր պահակ կանգնի, (խեղճ կորած զինվոր)

Այսպիսի բարակ մի սաղավարտով:
(Յուշց ե տալիս իր ետ պախտակ մագերը)

Թշնամուս շունը, թեև խածնէր ինձ,
Այսպիսի գիշեր մի տեղ կը գտներ
Իմ կրակիս առջև, և դու, խեղճ հայրիկ
Ստիպված էյիր ոթեան գտնել
Խոզերի, անտուն սրիկաների հետ՝
Չապեր հարդի վրա: Ավաղ, մի հրաշք ե,
Վոր մեկ անգամով կյանքըդ և խելքըդ
Վախճան չը գըտան:—Ահա գարթնում ե,
Խոսեցէք նըրա հետ:

ԲԺԻՇԿ

Տիկին, զո՞ւք խոսեցեք,

Ավելի լավ ե:

ԿՈՐԴԵԼԻՍ

Արդյոք ինչպես ե

Վահագն տերըս, ինչպես ե զգում
Ձեր մեծությունը:

ԼԻՐ

Դուք վատ եք անում,

Վոր գերեզմանից ինձ դուրս եք քաշում:

(Կորդելիային)

Դու մի հոգի յես յերանության մեջ,
Իսկ յես կապված եմ մի կրակե անվի,
Յեվ իմ սեփական արտասուքներըս
Ինձ խարշատում են հալած արձձի պես:

ԿՈՐԴԵԼԻՍ

Ճանաչում եք ինձ, տե՛ր իմ:

ԼԻՐ

Յես գիտեմ,

Դու մի վոդի յես: Յերբ վախճանվեցիր:

ԿՈՐԴԵԼԻՍ

Դեռ շատ հեռու լե՞ս:

ԲԺԻՇԿ

Դեռ նոր ե գարթել,

Թողնենք մի վայրկյան առանձին մընա:

(Հեռանում են անկողնից)

ԼԻՐ

Յես վճռեղ էյի. հիմա վճռեղ եմ,
Ո՛հ, գեղեցիկ լույս:—Սատուիկ խաբված եմ.
Յես կը մեռնեյի կարեկցությունից,
Թե մի ուրիշին այսպես տեսնեյի:
Չը գիտեմ, ինչ անեմ. —չեմ կարող յերգվել,
Թե այս ձեռքերը իմ ձեռքերըս են
—Տեսնենք.

Այս գնդասեղի ծակելն ըզգում եմ:
Յերեկ վիճակիս վատահ լինեյի:

ԿՈՐԴԵԼԻՍ

Ո՛հ, հայի՛ր ինձ, տե՛ր, և դի՛ր իմ գլխիս
Որհնության ձեռքդ:

(Լիրը ծուկի ե չոփում Կորդելիայի առաջ:
Կորդելիան արգելում ե քրակ)

Վո՛չ, տե՛ր, մի՛ չոքիր:

ԼԻՐ

Ա՛խ, մի՛ ծաղրիր ինձ.
Յես մի շատ հիմար ե խեղճ ծերուկ եմ:
Ութսուն տարեկան, կամ ել ավելի.
Վո՛չ մի ժամ ավել և վո՛չ ել պակաս.
Յեվ, ճիշտն ասելով, յես վախենում եմ,
Վոր իմ ուղեղը խանգարված լինի.
Ինձ յերեվում ե, վոր ծանոթ եք ինձ,
Նույնպես այս մարդը, բայց կասկածում եմ.
Քանզի չը գիտեմ, թե այս վճռեղ ե.

*) Խեղադար ե դեռևս Մ. Թ.

Յեվ ամբողջ ուշքս չի կարող հիշել
Այս զգեստները. վոչ ել գիտեմ յես,
Թե յերեկ գիշեր վերսեղ քընեցի.
Մի ծաղրիւր դու ինձ. վորչափ վոր ճիշտ է,
Թե յես մի մարդ եմ, նույնչափ վստահ եմ,
Վոր այս տիկինը իմ Կորդելիան է:

ԿՈՐԴԵԼԻԱ

Այն, հենց յես եմ:

ԼԻՐ

Արտասուքներըդ թրջում են արդյոք.
Այն, ճշմարիտ. խնդրում եմ՝ մի՛ լար:
Յեթե ինձ համար թույն ունես պատրաստ,
Տո՛ւր ինձ, վոր խմեմ: Յես իմանում եմ,
Դու ինձ չես սիրում, քանզի քույրերըդ,
Վորչափ հիշում եմ, ինձ շատ տանջեցին.
Դու պատճառ ունես. նըրանք չունեցին:

ԿՈՐԴԵԼԻԱ

Յես պատճառ չունեմ, վոչ, ամենևին:

ԼԻՐ

Ֆրանսիայումն եմ յես:

ՔԵՆՏ

Դուք ձեր սեփական պետության մեջ եք:

ԼԻՐ

Մի խաբեք զուք ինձ:

ԲԺԻՇԿ

Միամիտ յեղեք,

Բարի տիրուհի. այն մեծ տագնապը,
Ինչպես տեսնում եք, բժշկված է այժմ.
Բայց այսու հանդերձ՝ վտանգավոր է
Հիշեցնել նըրան անցած օրերը:

Խնդրեցեք ներս գնա. մի վրդովեք նրան,
Մինչև լավ կազդուրվի:

ԿՈՐԴԵԼԻԱ

Ձեր մեծությունը
Սրբայոք կամք չունի՞ մի քիչ քայլելու:

ԼԻՐ

Պետք է ներես ինձ, աղաչում եմ քեզ.
Մոռացի՛ր և ների՛ր. յես ծեր եմ և տխմար:

(Դուք եմ գնում կիբը. Կարգիլեան,
Բժիշկը յեվ ապաավորեցրը)

ԱՍՊԵՏ

Ճիշտ յեղավ, տե՛ր իմ, Կորնվալի դուքսի
Այսպես ապանվելը:

ՔԵՆՏ

Բոլորովին ճիշտ:

ԱՍՊԵՏ

Ո՞վ է նրա զորքի հրամանատարը:

ՔԵՆՏ

Ինչպես պատմում են, Գլոստերի կոմսի
Ապուրեն վորդին:

ԱՍՊԵՏ

Ասում են՝ Եղգարը,

Աքսորված վորդին, Քենտի կոմսի հետ
Գերմանիայումն է:

ՔԵՆՏ

Տարբեր լուրեր կան.
Ժամանակ է այժմ զգուշ լինելու:
Պետության զորքը մեծ արագությամբ
Առաջանում է:

ԱՍՊԵՏ

Այնպէս ե թվում,
Վոր հանդիպումը արյունոտ է կըլնի:
Մընաք բարով, տէր:

(Դուք ե գնում)

ՔԵՆՏ

Հատակագիծըս
Յեզ նպատակըս մոտենում են այժմ
Իրենց կատարման. կամ լավ, և կամ վատ,
Նայելով այսօրվա՝ ճակատամարտին:
(Դուք եմ գնում)

—————

ԻՆԶԳԵՐՈՐԴ

ԱՐԱՐՎԱԾ ՅԵՐԿՐԻԿ

ՏԵՍԱՐԱՆ Ա.

Անգլիական բանակը Դուվրի մոտ

Մանուկ են թաղուկներով և դրոշակներով՝ ԵՂՄՈՆԴԸ,
ՌԵԳՆԸ, առաքեալներ և զինվորներ

ԵՂՄՈՆԴ

Իմացեք դուքսից, թե նա հաստատ և

իր վերջին վճռին, թե վորեւէ բան

Ձի դրգել նըրան փոխել իր միտքը:

Նա փոփոխամիտ և հակասող և.

Լուր բեր ինձ նըրա վերջնական կամքից:

(Մի ապա դուրս և գնում)

ՌԵԳՆԸ

Իրոջնս ծառային պետք և մի փորձանք

Պատահած լինի:

ԵՂՄՈՆԴ

Յերկյուղ կա, տիկին:

ՌԵԳՆԸ

Լավ, աղնիվ պարոն, ձեզ քաջ հայտնի յե,

Թե վորչափ բարիք ցանկանում եմ ձեզ.

Առացեք... Բայց ձիշտ... անկեղծն առաջեք.

Ձեք սիրում քրոջնս:

ԵՂԻՄՈՆԻ

Հաբգալից սիրով:

ՌԵԳԱՆ

Բայց յերեկոց քեռայրիս շավղով
Ձեք գնացել արդյոք արգելված տեղը:

ԵՂԻՄՈՆԻ

Վնչ, այդ կարծիքը մոլորեցնում ե՛ ձեզ:

ՌԵԳԱՆ

Յես կասկածում եմ, վոր դուք նըրա հետ
Այնպես միացել, մտերմացել եք,
Վոր դուք նըրան հը:

ԵՂԻՄՈՆԻ

Այդպես չէ, տիկին.

Պատվովըս յերգում:

ՌԵԳԱՆ

Ախ, նա ինձ համար
Անտանելի յի, սիրելի իմ լորդ,
Մի լինեք նրա հետ այդչափ ընտանի:

ԵՂԻՄՈՆԻ

Միամիտ յեղեք. ահա նա յեկավ
Իր ամուսնի հետ:

(Մտնում են Ալբանին, Գոնեթիլը յեվ զինվորները)

ԳՈՆԵԹԻԼ

(Առանձին)

Յես ավելի շուտ կը հոժարեյի
Հաղթվել այս կովում, քան թույլ տալ իմ քրոջ,
Վոր ինձ և նըրան զստե միմյանցից:

ԱԼԲԱՆԻ

Սիրեցյալ քույր իմ, ձեզ բարի դալուստ:
(Եղևոնդին)

Պարոն, լսում եմ. արքան յեկել ե
Իր ազնկա մոտ, և ուրիշներն ել,

Վորոնց՝ վարչական մեր խստությունը
Բռնադատել և բողոքել մեր դեմ:
Ինձ անհընար ե քաջ հանդիսանալ,
Յերբ վոր իմ գտող արդար մի դատ չէ:
Յեթե այս դործում մենք զենք ենք վերցնում,
Սոսկ պատճառն այն ե, վոր Ֆրանսիան ահա
Ասպատակել ե մեր հայրենիքը:
Վնչ այն, վոր նեցուկ հանդիսանում ե
Մեր թագավորին և ուրիշներին,
Վորոնք, կարծում եմ, ունեն շատ արդար
Յեվ լուրջ պատճառներ՝ մեր դեմ դուրս գալու:

ԵՂԻՄՈՆԻ

(Հեգհորեն)

Դուքս, դուք խոսում եք շատ ազնիվ կերպով:

ՌԵԳԱՆ

Բայց ինչ կարիք կա տրամաբանելու:

ԳՈՆԵԹԻԼ

Պետք ե միանանք մեր թշմամու դեմ.
Ներքին անձնական դժտությունները
Գործ չունեն այստեղ

ԱԼԲԱՆԻ

Ուրեմըն կազմենք
Ծեր ուսմանիկների խորհրդակցությամբ
Մեր ծրագրերը:

ԵՂԻՄՈՆԻ

Լավ, մի քիչ հետո
Կը դամ ձեր վրանը:

ՌԵԳԱՆ

Քույր, կը գնա մեզ հետ:

ԳՈՆԵԹԻԼ

Վնչ:

ՌԵԴԱՆ

Շատ հարժար ե. խնդրեմ՝ յեկ մեզ հետ:

ԳՈՆԵՐԻԼ (Առանձին)

Ոհ, հասկացա.— Շատ լավ, գալիս եմ:

(Մինչդեռ գուրս գնալու վրա յեն, մտնում ե և գոգարը՝ ծպտյալ)

ԵԴԴԱՐ

Թե արժան գատե ձեր բարձրությունը
Խոսել այսչափ խեղճ մի աղքատի հետ,
Թող մի բառ լսի:

ԱԼԲԱՆԻ (Գնացող ներին)

Յես ձեզ կը հասնեմ:

— Խոսիր

(Նզմոհը, Ռեգանը, Գոնեթիլը յեկ հետե-
վորները դուրս են գնում)

ԵԴԴԱՐ

Նախ քան սկսեք ճակատամարտը՝
Բացեք այս գիրը: Թե հաղթող լինեք՝
Թմբուկի ձայնով կանչեցեք նրան,
Վոր այս ձեզ բերեց:
Թեպետ ձեր աչքին գծում եմ թշվուռ,
Բայց մի ախոյան հանդես կը բերեմ,
Վոր հապացուցի այստեղ գրվածը:
Իսկ յեթե հաղթելեք՝ ձեր դերն արդեն
Այս աշխարհի մեջ վերջացած կը լինի:
Յեկ կը դադարեն ամենայն դավեր *):
Բախտը ոգնե՛ ձեզ:

ԱԼԲԱՆԻ

Կա՛ց, մինչև կարդամ:

ԵԴԴԱՐ

Արդե՛լված ե ինձ, առիթը յերբ գա՛

*) Այսինքն՝ ձեր կյանքի դեմ լարված բոլոր դավերը:

Sohnson.

Թող մոռնեաիկը մի անգամ ձայն տա,
Յեկ յես դուրս կը գամ:

(Դուրս ե գնում)

ԱԼԲԱՆԻ

Լավ, զընաս բարով:

Մի ակնարկ գցեմ այս նամակի վրա:

(Նզմոհը կրկին ներս ե գալիս)

ԵԴՄՈՆԴ

Թշնամին յերևաց. շարեցեք զորքը:

Ահա թշնամու բոլոր զորության

Մոտավոր հաշիվը, վոր ձեռք ե բերված

Մեծ խուզարկությամբ. բայց այժմ կարիք կա,

Վոր շատ շտապեք:

ԱԼԲԱՆԻ

Պատրաստ ենք հասնել յուր ժամանակին:

(Դուրս ե գնում)

ԵԴՄՈՆԴ

Յես սեր եմ ուխտել յերկու քույրերին.

Յուրաքանչյուրը ատում ե մյուսին՝

Ինչպես խայթվողը ատում ե իժին:

Վոր մեկին առնեմ, յերկուսին, մեկին,

Կամ թե վոչ մեկին:

Նրանց վոչ մեկին յես չեմ ստանա,

Յեթե յերկուսն ել կենդանի մընան:

Այրիքն առնել՝ նշանակում ե

Կատաղեցնել նրա զբոլը:

Յեկ շատ գովար ե գործըս գլուխ բերել՝

Քանի գեռ վողջ ե իր ամուսինը:

Առայժմ, գործ դընենք նրա ոգնությունը

Այս պատերազմում: Հետո, իր կինը,

Թե նրա ձեռքից պրծնել ե ուզում,

Թող մի ճար գըտնի, վորով անհապաղ

Վերացնի նրան մեջտեղից իսպառ:

Իսկ այն գթությունն, վոր նա միտք ունի

Տույց տալ արքային և Կորդելիային ...
Պատերազմից յետ, յերբ մեր ձեռքն ընկնեն,
Նըրանք չեն տեսնի գըթության յերես:
Իսկ իմ վիճակը պահանջում է այժմ
Վնչ արամաբանել, այլ պաշտպանել ինձ:
(Իուրս է գնում)

ՏԵՍԱՐԱՆ Բ

Ներսիս աղմուկ. բեմն են մսնում քմբուկներով ու
դրուակներով. Լիր, Կորդելիան յեվ գինվորներ յեվ
անցնում են բեմով

Մտնում են ԵԴԳԱՐԸ և ԴԼՈՍՏԵՐԸ

ԵԴԳԱՐ

Յեկ հայր, ընդունիր ծառի հովանին,
Վորպես բարեսիրտ մի ասպնջական.
Յեկ աղոթք արեմ, վոր արդարութունը
Հաղթական լինի. թե յետ դամ քեզ մոտ՝
Յես քեզ կը բերեմ սփոփել լուրեր:

(Եղգարը գնում է)

ԴԼՈՍՏԵՐ

Տեր ընդ քեզ, պարոն:

(Աղմուկ. նահանջ ներսից)

(Եղգարը կրկին յերեվում է)

ԵԴԳԱՐ

Փախչենք, ծերունի,
Տնւր ինձ քո ձեռքը՝ փախչենք միասին:
Լիր թագավորը պարտութուն կըրեց.
Նա է իր դուստրը ձերկաբաւլած են.
Տնւր ինձ քո ձեռքը՝ հեռանանք, փախչենք:

ԴԼՈՍՏԵՐ

Ի՞նչ հարկ կա փախչել ավելի հեռու.
Մարդ հենց այստեղ էլ կարող է փախել:

ԵԴԳԱՐ

Դարձյալ սե մտքեր: Պետք է հանդուրժել
Աշխարհից գնալուն, ինչպես վոր՝ գալուն:
Հասուն լինելն է գլխավոր բանը:
Յեկ գընանք:

ԴԼՈՍՏԵՐ

Այո, հիշա է այդ:

(Իուրս է գնում)

ՏԵՍԱՐԱՆ Գ

Մտնում են հաղթական քմբուկներով յեվ դրուակներով
Եղմոնդը, Լիր յեվ Կորդելիան՝ վորպես գերիներ,
գինվորներ, սպաներ

ԵԴՄՈՆԴ

Մի քանի սպաներ թող տանեն սրբանց
Յեկ լավ պահպանեն, մինչև հալալնվի
Գերազույն կամքը նրանց դատողների:

ԿՈՐԴԵԼԻԱ

Շատերն են յեղել մեղանից տուաշ,
Վորոնք, լավ դիտմամբ, արժանացել են
Վատագույն բախտի: Բեկ համար միայն,
Ո՞վ ճնշված արքա, կսկծում եմ յես.
Մենակ լինելի՛ յես կը ծաղրելի
Կեղծավոր բախտի թշնամանանքը:
— Չէ՛նք կարող տեսնել այն աղջիկներին
Յեվ այն քույրերին:

ԼԻՐ

Վնչ, վնչ, վնչ վնչ,
 Յեկ զընանք բանոր. յերկուսնս մենակ՝
 Կերգենք միասին վարպես թռչուններ
 Վանդակում փակված.
 Յերբ դու խնձանից որհնություն խնդրես,
 Կը չոքեմ քո առջև, ներում կը հայցեմ.
 Այսպես մենք կապրենք, կաղոթենք, կերգենք,
 Յեվ հին հեքյաթներ կը պատմենք միմյանց,
 Յեվ կը ծիծաղենք այն վոսկեթևիկ
 Թիթեռների վրա. ահանջ կը դրնենք,
 Թե ինչպես խեղճուկ թշվառականներ
 Խոսում են պալատի լուրերի մասին,
 Մենք ինքներս ել նրանց հետ կը խոսենք,
 Թե ո՞վ է շահում, ո՞վ է կորցընում,
 Ո՞վ է բարձրանում, կամ ո՞վ է ընկնում,
 Յեվ կը բացատրենք իրերի գաղտնիքը,
 Վարպես թե աստուծո լրտեսներն եյիներ:
 Այսպես մի բանաի պարիսպների մեջ
 Կը մաշենք մեծերի խճերը և դասեր,
 Վորոնք լուսնի հետ կելնեն և կիջնեն:

ԵԴՄՈՆԴ

Հ՛ Լուսինք զըրանց:

ԼԻՐ

Ո՞վ իմ Կորդելիա,
 Այդպիսի վսեմ գոհերի վերս
 Աստվածներն ինքնին կնդրուկ կը սփռեն:
 Արդյոք իսկապէս գըտել եմ յես քեզ.
 Ով մեզ միմյանցից անջատել ուզի,
 Պետք է յերկընքից կայծեր ցած բերի
 Յեվ մեզ աշտեղից կրակով հալածի
 Ազգեսների պես: Ո՞հ, սրբիւ աչքերդ.
 Բորոտությունը կը կըրծի նըրանց,
 Յեվ միս, և՛ կաշին, նախ քան կարենան

Մեզ արտասովել տալ: Այնտեղ չը հասած՝
 Նըրանք կը մեռնեն անութությունից:
 — Յեկ:

(Լիրը յեկ Կարգիլիան դուրս եմ գնում՝
 պահակներով շրջապատված)

ԵԴՄՈՆԴ

Մոտ յեկ, դնդապետ, լսիր, այս թուղթն ան.
 Գնա դեպի բանտ նըրանց յետևից.
 Բեզ մեկ աստիճան յես բարձրացրել եմ.
 Յեթե կատարես՝ ինչ վոր այս թղթում
 Բեզ հրամայված է, փառքի շավիղը
 Կը բանաս դու քեզ, Իմացիր դու այս.
 Մարդիկ այնպես են, ինչպես աշխարհը.
 Լինել փափկասիրտ՝ անվայել բան է
 Զինվորի համար: Այս մեծ պաշտոնը,
 Վոր հանձնում եմ քեզ, վիճելի բան չէ.
 Կամ ասա՝ «կանեմ», կամ բախտդ փնտռիր
 Այլ միջոցներով:

ԳՆԴԱՊԵՏ

Կանեմ այդ, տեր իմ:

ԵԴՄՈՆԴ

Ուրեմըն, ի գործ. և համարիր քեզ
 Յերջանիկ մի մարդ, յերբ կատարել ես:
 Լըսիր, ասում եմ, հենց իսկույն եթ.
 Յեվ կատարիր այդ, ինչպես գըրել եմ:

ԳՆԴԱՊԵՏ

Չեմ կարող սայլ քաշել, կամ չոր խոտ ուտել.
 Բայց թե այդ գործը մի մարդու գործ է,
 Յես կը կատարեմ:

(Դուրս է գնում)

Շեփորներ. մտնում են ԱԼԲԱՆԻՆ, ԳՈՆԵՐԻԼԸ, ՌԵԳՆԸ և
 զինվորներ:

Դուք մեծ քաջություն ցույց տրվիք այսօր,
 Յեվ բախտըն էլ ձեզ լավ առաջնորդեց.
 Դուք գերի վերցրիք այն յերկու անձին,
 Վորոնք այս ուղիով վտանգներն էլին.
 Մենք պահանջում ենք նրանց ձեզանից,
 Յեվ մենք նրանց հետ այնպես կը վարվենք,
 Ինչպես վայել է նրանց արժանիքին
 Յեվ մեր սեփական աղահուլումիցան:

ԵՊՄՈՆԴ

Հարմար դատեցի, տե՛ր իմ, ուղարկել
 Զառամած թշվառ այն թագավորին
 Մի արդելանոց, պահպանության տակ:
 Նրա տարիքը, առավել էրս
 Նրա ախտըն՝ հմայքներ ունեն
 Ռամիկի սիրտը գրավելու համար
 Յեվ մեր դեմ դարձնելու այն նիզակները,
 Վորոնց հրամայում ենք: Յեվ նույն պատճառով
 Յես ուղարկեցի նաե թագուհուն:
 Նրանք պատրաստ են, վաղը կամ այլ ուր,
 Յերևալ այնտեղ, ուր ժողով կազմեք:
 Զայց այժմ թափում ենք արյուն է քրտինք.
 Ըսկերը կորցրել է իր ընկերոջը.
 Ամենից արդար պատերազմները
 Կռվի տապի մեջ՝ անեծքի նյութ են
 Այն անձանց համար, վորոնք դդում են
 Նրանց սլաքները: Թե՛ կորդելիայի
 Յեվ թե՛ հոր դատը պետք է վճռվի
 Մի պատշաճ տեղում:

ԱԼԲԱՆԻ

Ներեցեք, պարոն,
 Յես այս կռվի մեջ ձեզ համարում եմ
 Մի պարզ հպատակ, վոչ թե մի յեղբայր:

ՌԵԳԱՆ

Մենք այդ տիտղոսը բարեհաճում ենք

Շընորհել նրան: Կարծեմ թե հարկ եր
 Մեզնից հարցրենք մեր հաճությունը,
 Նախ քան խոսելիք այդքան բարձրաձայն:
 Նա առաջնորդեց մեր բանակներին
 Հրամայեց հանուն իմ, և իմ փոխարեն:
 Կարող է այդպիսի մի հրամանատար
 Բարձրագլուխ կանգնել և ձեր յեղբայրը
 Անվանել իրեն:

ԳՈՆԵՐԻԼ

Շատ մի տաքանաք.
 Նա իր սեփական արժանիքներով
 Ավելի բարձր է, քան ձեր շընորհած
 Այդ պաշտպանությամբ:

ՌԵԳԱՆ

Շնորհիվ իմ տված իրավունքների՝
 Նա հավասար է լավագույններին:

ԳՈՆԵՐԻԼ

Ամենամեծը հենց այն կը լինի,
 Վոր ձեզ հետ պսակվի:

ՌԵԳԱՆ

Ծաղրը շատ անդամ

Գուշակություն է:

ԳՈՆԵՐԻԼ

Կամաց, բռնյր, կամաց:

Այն աչքը, վոր ձեզ այս տեսնել տվեց,
 Մի փոքրը շիւ եր:

ՌԵԳԱՆ

Տիկէն, յես լավ չեմ.

Թե վոչ լի սրտից յես ձեզ կըտայի
 Զեր պատասխանը:

(Նդմանդիկ)

Զորապետ, մոռ գործս

Յեզ գերիներըս, և յերկիրներըս,
Տիրիւր նրանց և ինձ: Բերդն անձնատուր ե.
Վկա յե աշխարհ, վոր քեզ ինձ վըրա
Յես կարգում եմ աշտմ տեր և ամուսին:

ԳՈՆԵՐԻԼ

Հույս ունեմ ուրեմն տիրանալ նրբան:

ԱԼԲԱՆԻ

(Գոնեքիլին)

Թույլ տալ կամ չը տալ, քեզնից չի կախված:

ԵԴՄՈՆԴ

Վոչ ել քո բարի կամքից ե կախված:

ԱԼԲԱՆԻ

Ի՞նչպես չե, կիտարյուն դու թշվառակն:

ՌԵԳԱՆ

(Եզմոնդին)

Թմբուկ զարկել տուր և ապացուցիր:
Վոր իմ տիտղոսը քեզ ե պատկանում:

ԱԼԲԱՆԻ

Կաց դեռ. խոսք լիք:
— Եղմոնդ, ահա քեզ ձերբակալում եմ
Վորպես պետական մատնիչ, դավաճան,
Յեզ այս վոսկեղոծ ոձին ել քեզ հետ:

(Յույց տալով Գոնեքիլին)

(Ռեզմոնդին)

Գալով պահանջիդ, գեղեցիկ քույր իմ,
Յես ժխտում եմ այն ի շահ իմ կընող.
Յերկրորդ դաշինքով նա նշանված ե
Այս պարոնի հետ և յես, իր այրը,
Հակառակում եմ ձեր ամուսնության:
Յեթե կամք ունեք ամուսնանալու՝
Ուրեմն ինձ հետ սիրաբանեցեք,
Իմ տիկինն արդեն հարսնախոսված ե:

ԳՈՆԵՐԻԼ

Այս ի՞նչ կատակ ե:

ԱԼԲԱՆԻ

Գլուսեք, զինված ես.

Թող հնչե փողը. թե վոչ վոք դուրս չը դա՝
Քո պիղծ, աղներե, անթիվ դավերդ
Յերեսիդ զարկելու, ահա իմ գրավը:

(Ձգում ե նրան իր բազալանը)

Յես քո սրտիդ մեջ կապացուցանեմ՝
Նախ քան փըշուր հաց դընեմ բերանըս,
Թե դու վոչնչով պակաս չես քան այն,
Ինչ վոր ասացի:

ՌԵԳԱՆ

Հիվանդ եմ, հիվանդ:

ԳՈՆԵՐԻԼ

(Առանձին)

Թե չը լինեիր՝

Ե՛լ վոչ մի թույնի չեյի հավատա:

ԵԴՄՈՆԴ

Սհա, փոխարենն, իմ գրավակներ

(Ձգում ե իր բազալանը)

Թե կա աշխարհում վորևե մեկը,
Վոր ինձ դավաճան կոչել խիղախի,
Նա ստախոս ե սրբկայի նըման.
Կանչիք քո փողով, ով վոր ել դուրս գա
Նըրա, կամ քո դեմ, կամ բոլորի դեմ,
Յես կը հաստատեմ ճշմարտությունըս
Յեզ իմ պատիվը:

ԱԼԲԱՆԻ

Ե՛յ, մի մուսնետիկ.

ԵԴՄՈՆԴ

Մուսնետիկ, մուսնետիկ:

(Մտնում ե մի մուսնետիկ)

ԱԼԲԱՆԻ

Հույսըդ դիր միայն քո անձի վըրա.
Քո զինվորներդ, հանուն իմ խմբված,
Նույնպես հանուն իմ արձակված են այժմ:

ՌԵԴԱՆ

Հիմանդուծյունըս շատ սաստկանում ե:

ԱԼԲԱՆԻ

(Իր թիկնապահներին)

Նա շատ հիմանդ ե. տարեք իմ վրանըս:

(Ռեզանին տառապանքով)

Յեկ այտեղ, մունետիկ. — փողը հանցրեք
Յեկ դու բարձրաձայն կարդա այս թուղթը:

ՄԻ ՄՊԱ

Հանցրու փողըդ,

(Փողը հանում ե)

ՄՈՒՆԵՏԻԿ

(Կարգալու)

Յեթե կա դորքի շարքերում մի վորեիցե աստիճանի տեք
զլամ դիրք ունեցող մարդ, վորն ուզում ե հաստատել Նզմոնդի
ինքնակոչ կոմս Գլոստերի դեմ, վոր նա հանցավոր ե բաղմա-
պատիկ դավաճանություններով, թող դուրս գա փողի յերթորդ
հանչյունին. Նզմոնդը պատրաստ ե ինքն իրեն պաշտպանելու:

ԵԴՄՈՆԴ

Հանցրու:

(Մատին փազ)

ՄՈՒՆԵՏԻԿ

Կրկին:

(Ցերկորդ փազ)

ՄՈՒՆԵՏԻԿ

Կրկին:

(Ցերկորդ փազ)

(Փողի ձայն ներսից. եզգաբը մտնում ե գինված. նրա առջևից հայլում ե մի փողիտը)

ԱԼԲԱՆԻ

(Փողիտին)

Հարցրու ներանից իր նպատակը,
Թե ինչու դուրս յեկավ այս փողի ձայնից:

ՄՈՒՆԵՏԻԿ

Ո՞վ ես դու. անունըդ ե աստիճանը՞դ:
Յեկ ինչ պատճառով պատասխանեցիր
Այս մարտակոչին:

ԵԴՄՈՐ

Անունըս կորած ե.
Դավաճանության ատամը ներան
Կրծեկ, մաշել ե, վորդնակեր արել.
Բայց յես ազնիվ եմ՝ վորչափ վոսոխըս,
Վորի գեմ յեկա մենամարտելու:

ԱԼԲԱՆԻ

Ո՞վ ե այդ վոսոխը:

ԵԴՄՈՐ

Ո՞վ ե այն մարդը,
Վոր ձայն ե տալիս հանուն Նզմոնդի՝
Գլոստերի կոմսի:

ԵԴՄՈՆԴ

Յես եմ. ինչ ունես դու ինձ ասելու:

ԵԴՄՈՐ

Դուրս քաշիր սուրբդ. վոր, յեթե խոսքերս
Խոցեն մի ազնիվ սիրտ՝ բազուկըդ կարենա
Վրեժխնդիր լինել. ահա ե իմըս:

(Սարը հաշում ե)

Տես, ահա այս ե պատվիս, յերգմանըս
Յեկ ասպետությանս իմ իրավունքը.
Յես հաստատում եմ... ընդդեմ քո ուժիդ,
Հասակիդ, դիրքիդ ե բարձրությանըդ,
Հակառակ քո այդ հաղթական սրբիդ,
Վոր դավաճան ես, անհավատարիմ
Դեպ աստվածներըդ, յեղբայրըդ, հայրըդ.
Դավադիր նաե այս իշխանի դեմ.
Յեկ այդ զազաթիդ բարձրագույն կետից
Մինչ վոտքերիդ առկ կոխոտված փոշին,

Գորտի պէս ժահրոտ գարշ դավաճան ես:
Յեթե ասես՝ վնչ, այս սուրն, այս թեւ
Յեւ ամենաքաջ իմ արեւությունս
Պարտ են հաստատել քո սրտիդ վըրա,
Վորին ասում եմ, թե ստախոս ես:

ԵԴՄՈՆԴ

Իբր խոհեմություն՝ ինձ հարկավոր եր
Անունդդ հարցնել. բայց դեմքըդ լինելով
Այդչափ գեղեցիկ, պատերազմասեր,
Յեւ լեզուդ շնչելով մի աղնիվ ծագում՝
Յես ուշ չեմ դարձնում այն առարկությանց,
Վոր կասկածանքը և խոհեմությունն
Ինձ թելադրում են, թե և կարող եյի,
Ըստ ասպետական կարգ ու կանոնի,
Պատրվակ բերել. բայց քամահրում եմ:
Յես յետ եմ նետում քո գլխի վըրա
Դավաճանության մեղադրանքներըդ,
Յեւ դժոխային քո պիղծ սրտությամբ
Քո սիրտդ եմ ճմլում. դըրանք *) շեղում են
Կետ նպատակից, և վերք չեն տալիս.
Բայց այս իմ սըրով յես նրանց տուա՞յ
Ճանապարհ կը բանամ, ուր նրանք ընդմիշտ
Կը մխվեն, կը հանգչեն:— Խոսեցէք, փողեր:
(Փողեր, կալում են. Եղմոնդն ընկնում է):

ԱԼԲԱՆԻ

Խնայիր, խնայիր:

ԳՈՆԵՐԻԼ

Գլոստեր, սա մի թակարդ եր:

Ձենքերի որնքով՝ պարտավոր չեյի
Դուքս գալ անձանդի ախոյանի դեմ.
Դու հաղթելած չես, այլ դո՞ւ մի դավի,
Յեւ խաբէյության:

* Դըրանք՝ այսինքն՝ դավաճանության մեղադրանքները և դժոխային
սուտը: Մ. Թ.

ԱԼԲԱՆԻ

Տիկին, փակեցէք դուք ձեր բերանը.
Թե վոչ, այս թղթով, կը գոցեմ յես այն.
— Բռնիր այս, պարհն:

(Թուղթը ներկայացնում է Եղմոնդին, հետո Գոնեթիին, վոր քանի է ածում խել,
բայց իզուր)

Դո՛ւ, ստոր, քան թե վորեւե անուն,
Կարգն սեփական քո չարությունը
Մի պատուիր, տիկին: Յես նկատում եմ,
Վոր քեզ հայտնի յե:

(Նամակը տալիս է Եղմոնդին)

ԳՈՆԵՐԻԼ

Դիցուք հայտնի յե.

Որենքն իմ կողմն ե, վոչ թե քո կողմը,
Ո՞վ արդյոք կարող է դատաւարտել ինձ:

ԱԼԲԱՆԻ

Ճիվմդ, այս թուղթը ճանաչում ես դու:

ԳՈՆԵՐԻԼ

Մի հարցնիր դու ինձ, թե ճանաչում եմ:

(Գոնեթիը դուրս է գնում)

ԱԼԲԱՆԻ

(Մի սպայի)

Հետեիր նըրան, նա հուսահատ ե,
Կառավարիր նըրան:

ԵԴՄՈՆԴ

Բոլոր բաները,

Վորոնց մեջ դու ինձ ամբաստանեցիր,
Գործել եմ, ճիշտ ե, և դեռ ավելին,
Շատ, շատ ավելին, և ժամանակը
Կը հայտնի բոլորը. այդ անցավ .. յես ել.
Բայց ասան, ձի ես դու, դո՛ւ, վորին բախտը
Շնորհեց ինձ վըրա այս հաղթանակը.
Թե աղնիվ ես դու, յես քեզ ներում եմ:

ԵՂԳԱՐ

Թող ներողութիւնը փոխադարձ լինի:
Եղմանդ, յիս արյամբ նույնչափ տոհմիկ եմ,
Վորչափ դու ինքըդ. թե ավելի յեմ,
Ապա և իմ դեմ գործած մեղքերըդ
Ավելի մեծ են: Անունս և Եղար,
Քո հոր վորդին եմ: Աստվածներն արդար են.
Ներանք մեր սիրած մոլութիւնները
Գործիք են շնուած մեզ մտրակիւղ:
Այն մութ և մոլի պիղծ անկողինը,
Ուր վոր մեր հայրը քեզ ծնունդ տվեց,
Նըրա՞նից խնց աչքերի լույսը:

ԵՂՄՈՆԴ

Դու ճիշտ խոսեցիր. ճշմարիտ ե այդ:
Անիվը բոլորեց ամբողջ շրջանը,
Յեւ յես այստեղ եմ:

ԱԼԲԱՆԻ

(Եղգարիւ)

Ինձ յերևում եր,
Վոր լոկ քայլածքըդ կռահել ե տալիս
Արքայապալել մի աղնովութիւն:
Պետք ե գրկեմ քեզ. թող ցավ ու վիշտը
Սիրտըս պատառի, թե յերբեկեցե
Ատել եմ յես քեզ, և կամ քո հորը:

ԵՂԳԱՐ

Հարգելի իշխան, յես այդ լավ գիտեմ:

ԱԼԲԱՆԻ

Ուր եյիր թագնւած. ի՞նչպես իմացար
Հորըդ պատահած դժբախտութիւնը:

ԵՂԳԱՐ

Խնամելով նըրանց, միւրդ: Լսեցեք
Մի կարճ պատմութիւն. և յերբ վերջանա,
Ա՛խ, յերանի՛ թե սիրտս տրաքվի:
Վորպեսզի խույս տամ այն արյունահեղ

Իմ դատավճռից, վոր այնքան մոտից
Հալածում եր ինձ՝ (ի՞նչ քաղցր ե կյանքը,
Վոր մենք հոժար ենք ամեն ժամ կըրել
Մահվան տագնապը, քան մեռնել մեկ անգամ).

Հագա մի խենթի ցնցոտիները
Յեւ ստոնձնեցի այնպիսի մի ձե,
Վոր շներն անգամ խույս եյին տալիս.
Յեւ այս զգեստով գըտա իմ հորըս
Արյունաշաղաղախ յուր ողակներով
Անգին ակները դեռ նոր կորցըրած.
Իսկույն յես դարձա նըրա ողկեցույցը
Յեւ առաջնորդը. մուրացի նրա համար,
Փրկիցի նըրան անհուսութիւնից,
Յեւ ամենեւին (հէ, ի՞նչ մեծ սխալ)
Յես չը հայտնեցի իմ հոլ լինելըս.
Բայց կես ժամ առաջ, յերբ գինւած ելի,
Յերբ վոր մեծահույս, թեւ վոչ վստահ,
Հաղթութեան վըրա՝ նըրան խնդրեցի,
Վոր շնորհի ինձ իր որհնութիւնը,
Հայնժամ ծայրե-ծայր պատմիցի նըրան
Թափառաւրջիկ պանդխտութիւնըս.
Բայց նըրա սիրտը արդեն կիսաբեկ,
(Ավաղ, խիստ տըկար՝ այս կովի համար)
Յերկու ծայրահեղ կըքերի մեջտեղ
— Տնութիւն և վիշտ — ժպտալով պայթեց:

ԵՂՄՈՆԴ

Քո այդ խոսքերը սիրտըս շարժեցին,
Յեւ դուցե նըրանք արդյունք ընծայեն,
Բայց շարունակի՛ր. այնպես ե թվում
Վոր ուրիշ բաներ ունես պատմելու:

ԱԼԲԱՆԻ

Յեթե ավելի տխուր բաներ կան,
Իեղ համար պահի՛ր. այսքանը լսելուց՝
Յես արդեն մոտ եմ ցավից լուծվելու:

ԵՂԻԱՐ

Մա մի վերջակետ կարող եր թվալ
Այն անձանց համար, վոր վիշտ չեն սիրում.
Բայց կա մի այլը, վոր պետք է լցնի
Մի չափ, վոր արգեն արտագնդվում ե,
Յեվ պերաղանցի ծայրահեղն անգամ:
Մինչդեռ գողալով յես վողբում եյի,
Վրա հասավ մի մարդ. նա ինձ տեսել եր
Ամենանըվաստ մի վիճակի մեջ
Յեվ խորշած իմ պիղծ ընկերությունից.
Սակայն, այս անգամ տեսնելով, թե ով ե
Նա, վոր այսքան շատ տառապանք ե կրել,—
Իր ուժեղ թևերը փաթաթեց վրիս.
Յեվ այնպես վռնաց, կարծես ուղղում եր
Յերկիրն զ պայթեցնել: Նա գրկեց հորըս,
Յեվ հետո սլափմեց Լիրի ե իր մասին
Այնչափ սրտաշարժ մի յեղիություն,
Վորի նրմանը ականջ չի լրսել.
Մինչդեռ պատմում եր՝ վիշտը սաստկացավ,
Յեվ կյանքի թիկերն սկսան ճայթել,
Հենց այդ բոպիյին յերկրորդ փողը հնչեց,
Յեվ յես ուշաթափ թողեցի նըրան:

ԱԼԲԱՆԻ

Ո՞վ եր այդ մարդը:

ԵՂԻԱՐ

Քենտն եր, ազնիվ տեր,
Աքսորված Քենտը, վոր հետևում եր
Ծպտյալ հագուստով այն թագավորին,
Վոր նըրան վոնդեց ե կատարում եր
Ծառայություններ, վորոնք վայել չեն
Ստրուկի անգամ:

(Մտնում ե մի ապետ աճապարհով, մի արյունաշագախ դռնույն մեջ)

ԱՍՊԵՏ

Ոգնություն, ոգնություն,
Ոգնություն, հասե՛ք:

ԵՂԻԱՐ

Ի՞նչ տեսակ ոգնություն:

ԱԼԲԱՆԻ

Դե՛ խոսի՛ր, այ մարդ:

ԵՂԻԱՐ

Ի՞նչ ե այս դաշույնն արյունաշագախ:

ԱՍՊԵՏ

Դեռեւս տաք ե, նա դեռ ծխում ե:
Նոր ե դուրս յեկել հենց նըրա սրտից...
Ո՞հ, մեռավ:

ԱԼԲԱՆԻ

Ո՞վ, մարդ, ով մեռավ, խոսի՛ր:

ԱՍՊԵՏ

Ձեր կինը, տեր իմ, ձեր կինը մեռավ
Յեվ ձեր քենին ել հենց նըրա ձեռքով
Թունավորված ե. նա խոստովանվեց:

ԵՂԻԱՐ

Յերկուսի հետ ել նշանված եյի,
Այժմ յերեքով ամուսնանում եմք
Նույն բոպիյի մեջ:

(Մտնում ե Քենտը)

ԱԼԲԱՆԻ

Թե վողջ, թե մեռած՝
Թող բերեն այստեղ նրանց մարմինները:

(Գոմերիի յեվ Ռեգամի մարմինները բերում են մերս)

Յերկնային արդար այս դատաստանը
Թեև լցնում ե մեզ զաբհուրանքով,
Բայց մեր սրտերը ի դուժ չի շարժում:

ԵՂԻԱՐ

Ահա Քենտը, տեր:

ԱԼԲԱՆԻ

Ավանդ, այս նա յի.
— Պարագաները մեզ չեն թույլ տալիս
Այն բարեններն իսկ, վոր պահանջում ե
Բարի կենցաղը:

ՔԵՆՏ

Յեկել եմ մաղթել
Իմ տեր արքային հավիտենական
Բարի-գիշերը: Այստեղ չի՞ միթե:

ԱԼԲԱՆԻ

Ի՞նչ մեծ մոռացում:— Խոսի՛ր դու, Նդմանդ,
Թագավորն ուր ե, Կորդելիան ուր ե:
— Քենտ, տեսնում ես դու այս տեսարանը:

ՔԵՆՏ

Ավանդ, այս ի՞նչ ե:

ԵԴՄՈՆԴ

Բայց այսու հանդերձ՝
Նդմանդ սիրված եր: Իմ սիրույս համար
Նըրանցից մեկը թույն տըվեց մյուսին,
Յեվ հետո ինքն ել անձնասպան յեղավ:

ԱԼԲԱՆԻ

Ճիշտ այդպես:— Ծածկեցեք նրանց դամբերը:

ԵԴՄՈՆԴ

Հաղիվ թե կյանքըս քիչ ել շունչ ունի.
Յեվ կամենում եմ, բնության հակառակ,
Մի բարիք գործել: Մարդ ուղարկեցեք...
Բայց իսկույն, իսկույն... դեպի ամբոցը.
Գըրած հրամանըս մահ ե սպառնում
Թե արքա Լիւին, թե Կո դելիային.
— Ահ, ուղարկեցեք՝ քանի դեռ ուշ չե:

ԱԼԲԱՆԻ

Վազեցեք, վազեցեք. ոհ, շուտ վազեցեք:

ԵԴՄԱՐ

Ո՞ւմ մոտ, միւրորդ:

(Նդմանդին)

— Ում ե հանձնված.

Մի նշան տվեք, վոր մեզ հնազանդեն:

ԵԴՄՈՆԴ

Հավ մտածեցիր. առ սուրբս և տհա՜ր
Հարյուրապետին:

ԱԼԲԱՆԻ

Դեհ, շուտ, շտապի՛ր,
Վորպես թե կյանքըդ փրկելու համար:

(Նդգարը գնում է)

ԵԴՄՈՆԴ

Յես և քո կինը հրաման ենք տըվել,
Վոր Կորդելիային կախի բանտի մեջ
Յեվ մեղքը գըցի հե՛տ նըրա վըրա,
Ասելով՝ թե նա հուսահատությամբ
Ինքն իրեն կախեց:

ԱԼԲԱՆԻ

Թող աստվածները ազատեն Նըրան.
— Հեռացրեք մի քիչ սըրան այստեղից.

(Նդմանդին տանում են)

(Մտնում է Լիբբը, յեվ Կորդելիան ճրտ
քեպերի մեջ մեռած)

ԼԻԲ

Վոռնացեք, վոռնացեք, վոռնացեք, վոռնացեք.
Ո՛հ, ինչ քարեղեն մարդիկներ եք դուք.
Թե ունենայի ձեր լեզուները
Յեվ ձեր աչքերը՝ այնպես կանեյի,

Վոր կը ճարճատեր յերկնի կամարը:
—Ո՛հ, գընաց հավիտյան. յես ճանաչում եմ,
թե մարդ մեռած է, թե կենդանի յե.
Սա այնպես մեռած է, ինչպես այս հողը:
Տըվեք մի հայելի. թե նըրա շունչը
Ապակին մթնացնի կամ թե աղարտի,
Նա կենդանի յե:

ՔԵՆՏ

Ա՞յս է աշխարհի խոստացված վերջը *):

ԵԴԴԱՐ

Թե մի պատկեր է այն արհավիրքի:

ԱԼԲԱՆԻ

Կործանվիր, պրծիր:

ԼԻՐ

Փետուրը շարժում է.
Նա կենդանի յե: Յեթե վողջ լինի,
Այդ այնպիսի մեծ յերջանկություն է,
Վոր հատուցումն է բոլոր վշտերիս,
Վոր ցարդ կրել եմ:

ՔԵՆՏ

(Արժայի առաջ ծումկ չոփելով)

Վե՛հ, իմ բարի տեր:

ԼԻՐ

Հեռացիր, խնդրեմ:

ԵԴԴԱՐ

Ազնիվ Քենտն է սա,

Ձեր բարեկամը:

ԼԻՐ

Թող կըրակ թափվի բոլորիդ գլխին,
Դուք, մարդասպաններ, և դավաճաններ.

Յես կարող եյի ազատել նըրան.
Բայց այժմ, այլևս գընաց հավիտյան.
—Կորդելիա, Կորդելիա. սպասի՛ր, մի քիչ.
Հա, ի՞նչ ես ասում: Նըրա ձայնը միշտ
Անուշ է յեղել, և՛ հեզ, և՛ խոնարհ.
Կընոջ համար այդ թանկագին բան է:
Յես սպանեցի այն սըրբիկային,
Վոր կախում էր քեզ:

ՍՊԱ

Ճիշտ է, սպանեց:

ԼԻՐ

Ձը սպանեցի՞ր, մարդ. յես որ եմ տեսել,
Յերբ իմ պատվական սայրասուր թըրով
Յես այն բոլորին կը ցատկեցնեյի.
Այժմ ձերացել եմ. այսքան ցավերը
Ինձ փչացրել են:

(Քենտին)

Ո՞վ ես դու, աչքերս
Այնքան ել լավ չեն:—Քեզ ուղիղն ասեմ:

ՔԵՆՏ

Թե կա յերկու մարդ, վորոնց վրա բախտը
Փորձել է բոլոր իր կարողությունը՝
Անչափ սիրելով և անչափ ատելով,
Նըրանցից մեկին տեսնում ենք ահա:

ԼԻՐ

Աչքըս մթնած է: Քենտը չե՞ս արդյոք:

ՔԵՆՏ

Ձիր ծառա Քենտը. ո՛ւր է ձեր Կայուս
Սպասավորը:

ԼԻՐ

Նա մի լավ մարդ է, կարող եմ խոսք տալ՝
Լավ գիտե զարկել, և այն ել շատ շուտ.
Մեռել է, փրտել:

*) Վերջին դատաստանը:

Ծ. Թ.

ՔՆՆՏ

Վոչ, իմ բարբի տեր,
Յես հենց այդ մարդն եմ:

ԼԻՐ

Իսկույն կը տեսնեմ:

ՔՆՆՏ

Վոր հենց ձեր բախտի հեղաշրջության
Յիվ դժբախտությանց առաջին որից՝
Հետապնդել ե ձեր մռայլ քայլերին:

ԼԻՐ

Բարով եք յեկե:

ՔՆՆՏ

Վոչ յես, վոչ այլ վոք.
Ամեն ինչ մութ ե, մըռայլ, մահացու,
Ձեր մեծ աղջիկներն ինքնին կանխեցին
Իրենց վճիռը, և նըրանք մեռան
Հուսահատությամբ:

ԼԻՐ

Այո, կարծում եմ:

ԱԼԲԱՆԻ

Նա չի իմանում, թե ինչ ե խոսում.
Իզուր ենք դալիս իր աչքի առաջ:

ԵԴԳԱՐ

Բոլորովին զուր:

(Մտնում ե մի ազա)

ՍՊԱ

Տէր, Եդմոնդը մեռավ:

ԱԼԲԱՆԻ

Այս պարագայում կարևոր չի այդ.
Դուք, աղնիվ լորդեր և բարեկամներ.

Լսեցեք մեր կամքը: Ամեն սպոփանք,
Վոր կարող ենք տալ այս մեծ անբախտին,
Պետք ե տրվի: Իսկ մենք վճռել ենք՝
Քանի դեռ վողջ ե այս վեհ ծերունին,
Վեհապետական մեր իշխանությունը
Կրկին նըրան տալ:

(Նագաբին յով Քեմաին)

Իսկ դուք կըստանաք

Ձեր իրավունքները՝ հավելումներով
Յեվ փառք ու պատվով, վորոնց իսկապես
Դուք արժանի յեք: Ամեն բարեկամ
Իր բարբի գործի վարձը կըստանա,
Ամեն թշնամի՝ իր հանցանքների
Քավության բաժակը: Ո՛հ, տեսեք, տեսեք:

ԼԻՐ

Յեվ իմ խեղճ խենթը կախված ու խեղդված.
Վոչ, վոչ, կյանք չը կա...
Ինչո՞ւ շունը, ձին կամ մուկը ապրեն,
Իսկ դու չը շնչես, ո՛հ, ել չես դառնա
Յերբեք, յերբեք, յերբեք, յերբեք, յերբեք:
— Խնդրեմ, բաց արեք իմ այս կոճակը.
Շընորհակալ եմ. տեսնում եք սըրան.
Նայեցեք սրան, տեսեք շրթունքը...
Նայեցեք, նայեցեք:

(Մտնում ե)

ԵԴԳԱՐ

Նա ուղաթափվեց.

Տէր իմ, ո՛հ, տէր իմ:

ՔՆՆՏ

Պայթիւր, սիրտ, պայթիւր.

Պայթիւր, խնդրում եմ:

ԵԴԳԱՐ

Տէր, բաց քո աչքերը:

ՔԵՆՏ

Մի տանջեք հոգին, ո՛հ, թողեք անցնի.
Ով վոր կամենա այս դառն աշխարհի
Տանջող անվի տակ ավելի յերկար
Տարածել նըրան, նրա թշնամին է:

ԵԴԻԱՐ

Այս, գնացել է:

ՔԵՆՏ

Զարմանալի յե,
Վոր այսքան զիմացավ: բռնի յեր ապրում:

ԱԼԲԱՆԻ

Տարեք այստեղից. մեր այժմվա գործը
Ընդհանուր սուգ է:

(Քենտին յեղ հագարին)

Ո՛վ դուք, իմ հոգուս բարեկամները,
Կառավարեցեք այս պետությունը,
Արյունաշագախ այս տերությունը:

ՔԵՆՏ

Տեր իմ, յես շուտով մի ճամբորդություն
Պետք է կատարեմ. տերս ինձ կանչում է,
Յեղ յես չը պետք է նըրան ասեմ՝ վնչ:

ԱԼԲԱՆԻ

Պետք է վշտալից այս ժամանակի
Ծանրը բեռան տակ համբերող լինենք.
Ասենք այն՝ ինչ վոր սրտում զգում ենք,
Վոչ թե այն՝ ինչ վոր պետք է ասելինք,
Ամենից ծերը ամենից ավելի
Տառապանք կըրեց. մենք, վոր կրտսեր ենք,
Վոչ այնքան կը տեսնենք, վոչ այնքան կանգրենք:

FF

Տեխ. խմբագիր՝ Ս. Ալեքսանյան
Սրբագրիչ՝ Խ Այվազյան
Կոնտրոլ սրբագրիչ՝ Վ. Ավագյան
Գլավիտ № — Ա. — 3066
Հրատ. 4166, պատվեր 2, տիրաժ 5000
Հանձնված է արտադրության 1938 թ. հունվարի 1-ին
Ստորագրված է արտադրության 1938 թ. փետրվարի 20-ին
Թուղթը 62x94, 14 տպ մամ., հեղին.՝ 11 մամ., 1 թերթ. 38406
Գինը 3 ռ. կադրը 1 ռ. 20 կ


Պատհարածի 2-րդ տպարան, Յերեվան, Նալբանդյան 5

ՀՀ Ազգային գրադարան



NL0171477

2. 52 3 up
1000 00 1 1/2 1/2



W. H. H. H. H. H.

W. H. H. H. H. H.

W. H. H. H. H. H.

82

2-53